

Վ. ԼՈՒՆԿԵՎԻԶ

ՄՐՁՅՈՒՆՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ



ԳԵՂԱՐԱՑ

1938

ՅԵՐԵՎԱՆ

25 SEP 2010

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

638 ԿՎ

L-88

Վ. ԼՈՒԿԵՎԻԶ

ՄՐՋՅՈՒՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

9-րդ ուղղված և լրացված
հրատարակությունից
բարգմանեց Խիկ. Գուլոյան

ՊԵՏՎԱԾ

1938

ՑՐՑՎԱԾ

22. 9/4

03 MAY 2013

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Դուք անշուշտ հաճախ կարդացած կլինեք գրքեր մարդու նիստ ու կացի մասին, բայց մըջյունների մասին հազիվ թե նվազ բան կարդացած լինեք: Յեվ տարօրինակ ել կլիներ հետաքրքրվել այդպիսի անհան տեսք ունեցող փոքրիկ մի արարածի կյանքով, ինչպիսիք են մըջյունները: Իրոք, ինչ մի հետաքրքրվեր բան ե: Ամբողջ որերով վազվում ե միայն իր մըջնանոցի շուրջը, սատկած միջատներ ե քաշ տալիս բունը, հատիկներ հաշվառմ, ուսումն ե, խմում, յերեխաններ լույս աշխարհ քերում, գաստիարակում նրանց, իսկ հետո, յերբ ժամանակը դալիս ե, մեռնում ե, փակում հաշիմները այս աշխարհի հետ:

Յես չեմ կասկածում, իհարկե, վոր գուք հաճախ տարակուանքով կանգնած կլինեք մշտապես շարժուն, անհանգիստ, յեռ ու զեռով բռնված մըջյունների բնի առաջ, մինչև անգամ կարող ե լինել, վոր գուք փորձել եք հաշիվ տալ ձեզ՝ ի՞նչ ե մըջյունը, կամ վորեն միտք նրա մի շարք շարժումների մեջ, ի՞նչո՞ւ յե նա միշտ այդպես անհանգիստ, ի՞նչի՞ մասին ե մտահոգվում, մեր ե այսպես շեշտակի սլանում և ի՞նչո՞ւ յե նա այդպես վիստում իր բնի շուրջը, բայց գուք չեք համբերել ու հավանորեն չեք ել կարողացել այդ բոլորը մինչև վերջ լուծեն: Յեվ ընդհատելով ձեր գիտումները, գուցե յեկել եք այն յեղբակացության, վոր չարժե հետաքրքրվել մըջյունի կյանքով և զբաղվել նրա ուսումնասիրությամբ:

Յեթե այդպես ե, ապա գուք չարաչար, սխալում եք, վոր այդպես անուշադիր եք գեսկի մըջյունը: Ահա գտնվել են հետաքրքրասեր մարդիկ, վարոնք յերկար տարիների ընթացքում ամեն որ ժամերով մըջյունների կույտի մոտ նստած գիտել են նրանց կյանքը և յեկել այն յեղբակացության, վոր նա, այդ մըջյունը շատ «ուշագրավ միջաւ ե»: Զինվեցեք համբերությամբ, կարդացեք այս փոքրիկ գրքույզը, այն ժամանակ մի գուցե գուք ել տվելի լավ կարծիք կկազմեք մըջյունների մասին:



6196
38

Ահա արդեն 35 տարի յե անցել այն որից, ինչ այս գրքույկն առաջին անգամ լույս տեսավ: Այդ որվանից շատ ջրեր են հռուել: Քազմաթիվ նոր գիտողություններ են կատարվել մըջյունների վերաբերյալ: Շատ նոր բաներ են գրել նրանց կյանքի մասին զանազան գիտնականներ, վորոնց մեջ առաջին տեղն են գրավում Լեբբոկը, Ֆորելը, Ֆաբրը, Վագները, Կնառուերը, Եշերիխը և Վասմանը:

Յեվ Բնչ, այդ բոլոր նոր գրքույկներն ու դիտողություններն ավելի ամրացրին իմ այն համոզմունքը, վոր մըջյունը վոչ միայն ուշագրավ, այլև ըստ իր—ըստ մրջնայինի «բանիմաց» արարած եւ Սակայն այդ մասին հետո, գրքույկի վիրջում: Իսկ այժմ տեսնենք, գիտությունն ինչ ուշագրավ բաներ եւ գտել այս «միջատեր» կյանքի ու սովորությունների մեջ...

ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Ահա ձեր առաջն եւ մըջյունների մի բռն: Դա պարզապես մեծ կամ փոքր չափի մի հողաթումք ե, վոր վերեի մասում նեղանում ե: Դուք այստեղ տեսնում եք բազմաթիվ մըջյուններ, վորոնց մեջ միայն մի քանիսը թերե ունեն, իսկ մեծամասնությունը բոլորովին թե չունեն:

Բոնհցեք անթեսերից մեկին, այդպիսիներն ավելի շատ են, և զննեցեք ուշագրությամբ. ըստ յերեսույթին, վոչինչ առանձին բան չկա—զլուխ, կուրծք, փորիկ և վոտքեր, ահա նրա մարմնի քոլոր գլխավոր մասերը: Բայց վերցրեք խոշորացույցը ձեր ձեռքը և դուք կհամոզվեք, վոր բանն այստեղ այնքան ել պարզ չե: Ի դեպ, զայցե գուշչիտեք ինչ և խոշորացույցը: Դա վոսպի նմանվող յերկու կաղմից ել առօսցիկ մի ապակի յե, վոր առարկաները մեծացնում ե մի քանի անգամ, յերբ այն մոտեցնում եք ձեր աչքին, որինակ՝ գնդասեղի զլուխը ձեզ կթվա սիսեռի չափ, մազը՝ լուցկու չափ հաստ, լուն՝ մի քիչ փոքր աղբաբզեզից, հետեաբար և մըջյունն այս ապակու միջով ձեզ քսան անգամ ավելի մեծ կերեվա, քան իրոք կա: Նշանակում ե խոշորացույցի ոգնությամբ մենք հիանալի կտեսնենք մըջյունի մարմնի այն քոլոր մասերը, վորոնց հասարակ աչքով գժվար և նշմարել:

Ի՞նչ կտեսնենք մենք. մի զույգ խոշոր աչքեր գլխի վրա, ապա բերան, վոր կազմված ե ներքին ու վերին շրթունքներից, իսկ շրթունքների արանքում ներքին ծնոտը՝ վերեի սուր ծնոտը ատամներով, վորոնց ոգնությամբ մըջյունները կրծում և արուրում են կերակուրը: Ցեղջերյա ծնոտները մըջյունի համար նույնն են, ինչ ատամներով ծնոտները: Վերջապես հենց այստեղ գլխի վրա կա մի զույգ մշտապես շարժուն փոքրիկ բեխիկ, կրծքին կպած են յերեք զույգ վոտներ և ամեն մի վոտի վրա կարելի յէ նկատել մի քանի մասեր կամ հողեր: Այդ պատճառով ել մըջյունը պատկանում է նորավատավար կենդանիների շարքին: Այստեղ կը քրծքին կպած են նաև մըջյունի թերերը, յեթե նա թեավոր ե: Եայիցեք փորիկին—նա նույնպես բաղկացած ե մի քանի առան-

ձին ողակներից, վորոնք փորի վրա կարծես հատումներ են կադամում, դրա համար մրջյունն այլ միջատների նմանությամբ, որին նաև՝ բզեզների, մեղուների, իշամեղումների, մոծակների և հանձների պես կոչվում ե միջատ։ Այսպես, ուրեմն, մրջյունը միջատ ե և պատկանում ե հօդավոտավոր կենդանիների խմբին։

Մրջյունը, ինչպես և ամեն մի կենդանի ուտում ե, խմում, կերածը մարսում, շնչում ե, շարժվում, զգում. փորձեցեք միասումանակ նրան պահել առանց ողի, նա կիսեղզվի և կմեռնի. ուտելիք մի տվեք նրան, նույնպես նա չի դիմանա ու կոչնչանա. կտրեցեք նրա գլուխը, կրկին կմեռնի. հանեք աչքերը, նա այլև չի տեսնի։

Սակայն ինչնի և շնչում մրջյունը, ինչնի և մարսում ուտելիքը։ Ունի արդյոք նա սիրտ, բանվոր-մրջյուն։ արյուն, ուղեղ, մկաններ։

Մրջյունի մարմինն արտաքին կողմից պատած ե յեղջերամաշկով¹⁾: Բավական ամուր այս զրահը պաշտպանում է մրջյունի մարմնի ներքին ավելի փափուկ մասերը։ Ի՞նչ ե գանգում այնտեղ այս ամուր զրահի տակ։ Դիտենք կարգով, դա շատ հետաքրքիր ե։

Յերբ մրջյունը վերցնում ե վորեե ուտելիք, նախ արորում ե այն, թացացնում թքով և ուղարկում ե նախ վորկորը, իսկ այնտեղից բարակ խողովակի՝ կերտկրափողի միջացով ոտամօսը, վորից հետո աղիքներն են (նկ. 2)։

Ահա այստեղ ստամօքում և աղիքներում կերակուրը մարսվում ե և մրջյունին սննելու պիտանի գառնում։ Մրջյունի մարմինը, ինչպես և մարդու մարմինը, սննում ե արյունով։ Նշանակում ե, մրջյունի ընդունած կերտկուրը վերջիվերջո արյուն ե գառնում։ Ի դեպ, ահա թե ինչն ե առանձնապես հետաքրքիրանթե բանվոր-մրջյունի նարազուրյան խողովակը (այն խողովակը, վորով կերակուրը գնում ե ստամօքուր և աղիքները վերցրած միասին) կազմված ե յերկու մասից. նրա մի մասը (քուջը) ծառայում ե վորպես շտեմարան, ուր մրջյունը կերակրի պաշտպան ե հավաքում, իսկ մյուսը՝ հավաքած կերակուրը մարսում։

¹⁾ Ավելի ճիշտ ասած՝ այս մաշկը կազմված ե առանձին յեղջերաման մի սուրբից, վորը կոչվում ե խիտին։ Դրա համար ավելի ճիշտ կլինի ասել «իտիտնե մաշկով»։

Այսպես ուրեմն, մրջյունի ընդունած ուտելիքն արյուն և գունում. իսկ այնուհետեւ ինչ և կատարվում արյան հետ։

Նա մտնում ե մի առանձին խօսքակալ, վորը ձգվում և մրջյունի մեջքի յերկարությամբ, անմիջապես յեղջերյա զրահի տակ (նկ. 3), և կոչվում ե մեջքի արյունատար անոր։


Մրջյունի համար այս անոթը նույնն է, ինչ վոր մեր սիրտը։ Մարդու սիրտը «խփում ե», այսինքն մեկ սեղմկում, մեկ լայնանում ե. փոքրիկ մրջյունի մեջքի արյունատար անորն ել նույնպես խփում ե՝ մեկ սեղմկում, մեկ վերստին լայնանում ե. յերբ մարդու սիրտը սեղմկում ե, այն ժամանակ արյունատար անոթների ոգնությամբ արյունն այնտեղից գուրս ե գալիս և ուղղվում դեպի մարմնի բոլոր մասերը, վորպեսզի նրանց կերակրի. իսկ յերբ սեղմկում ե մրջյունի մեջքի անոթը, ապա արյունն այնտեղից գուրս ե մղվում և թափանցում միջատի վողջ մարմնի մեջ, մատակարարելով նրան անհրաժեշտ սննդանյութեր։

Մարդու սրտից գուրս յեկած արյունը շրջելով նրա ամբողջ մարմինը, կրկին վերադառնում է սիրտը։ Նույն բանն է կատարվում մրջյունի մեջքի անոթից գուրս յեկած արյան հետ. իր գործը կատարելուց հետո նա կրկին վերադառնում է մեջքի անոթը։

Յեկ այս ձեռվ արյան շրջանառությունը կատարվում ե մրջյունի ամբողջ կյանքի ընթացքում, և ուրիշ կերպ ելնա չեր կարող ապրել. յեթե մեջքի խողովակը վորեե պատճառով պատովի կամ փշանա, մրջյունն ել կոչնչանա։

Մրջյունը գոյություն ունենալ չի կարող, յեթե արյունը նրա մարմնի մեջ անդադար շարժողության մեջ չլինի. չի կարող ապրել և առանց ողի, առանց շնչելու։

Վերցրեք խողորացույցը և կրկին ուշադրությամբ գիտեցեք մրջյունին։ Դուք կտեսնեք, վոր նրա մարմնի յերկու կողքերի վրա գասավորված են ինչ-վոր փոքրիկ անցքեր (շնչառության ծակեր), Յեթե գուրք ուղենաք վորեե բանով (մոմով կամ յուղով



Նկ. 2. Միջատի (մեղմի) սննդառար. Խօսքակալ.

ա. գլուխ, բ. փոքրիկ պարկիր, վորոնց մեջ պատրաստվում ե թուքը (թքային գեղձեր), ը. կերակրափողը, ը. քուջ, բակրագողը:

հ. ստամոքս։

փակել այդ անցքերը, այն ժամանակ մըջունը կիսեղբվի և կմեռնի: Հարկավ: Զէ վոր դա նույնն է, յերբ մարդու կոկորդը միշտավ սեղմես: Փակելով մըջնի մարմնի անցքերը, մենք նրան զրկում ենք ողից, վորն այդ նույն ծակերով թափանցում ենրա մարմնի ներսը: Ուրեմն, պետք ե մտածել վոր մըջունը ներշնչում ե ողը վոչ թե բերանով կամ քթով (մըջունը քիթ չունի, հարկե), ինչպես, որինակ, այդ անում ե մարդը, ձին կամ կովը, այլ նրա մարմնի կողքերին տեղավորված անցքերի միջով: Այդ անցքերից դեպի ներս են գնում շատ բարակ խողովակներ, վորոնցով և ողն անցնում ե մըջունի մարմնի զանազան մասերը:

Շատ ժամանակ կպահանջվեր պատմելու մըջունի կազմության մասին. փոքրիկ ե մըջունն ինքը հասակով, բայց կազմված ե վոչ այնքան հասարակ ձևով:


Բայց ահա թե ինչ պետք ե ավելացնել: Մըջունն ունի և մկաններ, ունի նաև նյարդառու զեղային ապարատի նման մի բան: Այս ապարատն առանձնապես հետաքրքիր է: Նա հանգույցավոր յերկտակ սպիտակ բարակ թելի կամ յերիկի նման ձգվում ե նրա փորի ստորին մասի ու կրծքի յերկարությամբ և վերջանում ե զիխում՝ մեծ հանգույց կազմելով (նկ. 4):

Այս հանգույցը մըջունի համար այն նշանակությունն ունի, ինչ վոր, որինակի համար, գլխի աւելիքը մարդու, կապիկի, շան, ձիու և այլ կենդանիների համար:

Սպիտակ ժապավենի կամ ինչպես այլ կերպ նա տնկանվում է, փարի ըրբայի հանգույցներից մըջնի զանազան մասերն են ե, փարի ըրբայի հանգույցներից մըջնի զանազան մասերն են ե, փարի ըրբայի թելիկներ—դեպի վոտները, զլուխը, բեզում բարակ, սպիտակ թելիկներ—դեպի վոտները, բեզում բարակ, սպիտակ թելիկները և այլն: Նրանք կոչվում են նյարդեր: Շատ շարժանալի յեն այդ թելիկները. յեթե կտրենք դեպի վոտները զնուցող այդ թելիկները, ապա վոտներն այլևս շարժվել չեն կազմող—կարծես անզգայցած լինեն. յեթե կտրենք դեպի աչքերն ըող—կարծես անզգայցած լինեն. յեթե կտրենք դեպի աչքերն ըող թելիկները, այդ ժամանակ աչքերն այլևս չեն տեսնի, և

մըջունը կկուբանա: Փորձեցեք, վերջապես մըջունի դեպի ծնոտ ները գնացող թելիկները կտրել, և այդ թշվառը կզրկվի իր ծնոտները շարժելու, ծամելու և կերակուրը տրորելու ընդունակությունից: Սակայն, բավական ե այդ մասին: Ավելի լավ ե այժմ տեսնակնք—բնչպես ե զասավորել մըջունը իր կյանքը, բնչ ե անում նա, բնչի մասին ե մտահոգվում, բնչպես ե աշխատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՑՈՒԹՈՒՆԸ



Ակ. 4. Մըջունի (բզեզի) փարի շգթաք. շ—զլիսի հանգույց, ս—վորի շգթաք շանգույցները:

Մըջունները մեղուն երի, կրետների, իշամեղունների և այլ բաղանքարելակավոր միջատների հետ մոտիկ ազգական են: Մի քանի գիտնականներ հինգ հազար տեսակից ավելի մըջուններ են հաշվում, վորոնք տարբեր վում են իրարից իրենց մեծությամբ, գույնով, մարմնի կազմությամբ, ապրելու ձեզով, սովորություններով և այլն: Այսպիսիներից են, որինակ, սև, ալ-կարմիր, կարմրաշիկ, գեղին, անտառային, մարդագետնի մըջունները, մըջուն-տերեանատները, մըջուն-մեղրաբերները և այլն: Վոչ վոք գեռ չի տեսել, վոր մըջունները միայնակ ապրեն: Նրանք ապրում են իրենց հմանների հասարակության մեջ և բնակվում են «զաղութներով» կամ «համայնքներով»:

Յերբեմն այդ գաղութում մըջունների թիվը 2—3 հարյուրից ավելի չի լինում, բայց հազվագեպ չեն նաև այնպիսի մըջնանոցներ, ուր բնակիչների թիվը հասնում է միլիոնի, գեռ ավելի: Սակայն չկարծեք, թե մըջունների «համայնքի» բնակիչները պատահամբ կամ ժամանակագրապես են միացել. ընդհակառակը,

Նրանք իրենց կյանքի ամբողջ ընթացքում միասին են ապրում, միատեղ ուտելիք փնտռում, ձագեր՝ մեծացնում, բնակաբաններ շինում ու միասին հարձակումներ գործում հարեան մրջնանոցների վրա:

Մրջնանոցը—մեծ, բազմամարդ քաղաքի նման մի բան է, ուր բոլոր բնակիչները ընդհանուր շահերով են կապված իրար հետ, միասնաբար՝ պաշտպանում են իրենց համայնքը թշնամու հարձակման դեպքում:

Մրջնանոցը նույնիսկ ավելին է, քան բնակեցված քաղաք:




Նկ. 5. Մրջնանոցի ուղեղը—կտրված, ըստ Ցիգերի.
ա. արուի 6. եզրի, թ. բանվորի: Վերջինի ուղեղը
ավելի բարդ կազմություն ունի, վորը համա-
պատասխանում է մրջյունի կտրարած բարդ
աշխատանքներին:

ուս ինչ-վոր պետության նման բան է, վորտեղ իրան պոր-
տարույժներ ու աշխատավորներ, կան խաղաղ քաղաքացիներ:

ու սազմիկներ, կան յուրատեսակ «տերեր» և «ստրուկներ»: Յե-
թե ուշադրությամբ դիտենք մրջնանոցը, ապա դժվար չի մնի
նկատել վոր առանձին մրջյուններ տարբերվում են իրարից
արտաքին տեսքով. այսպես, ամեն մի մրջնանոցում ամենից
առաջ դուք կտեսնեք թեավոր արուներ և եզեր ու անթիվ բան-
վոր-մրջյուններ:

Տարբերել բանվորներին բոլորովին դժվար չի, քանի վոր
նրանք մրջնանոցում ամենից շատ են. բացի այդ, բանվորը, վորի-



Նկ. 6. Մրջնային համազմբի տարրեր բնակիչները.
1—արու, 2—եզր, 3—բանվոր, 4—համայակ, 5—թրթուր, 6—«ձու»,
7—ձնուա, 8—հոգավոր վոր:

վրա շատ պարտականություններ են դրված, «ձեռքերը ծալած»
նստած չի. նա շարունակ շարժվում է, վագում, ինչ վոր քաշ
և տալիս իր համայնակուն բունը, և այդպիսով նա ամենից շուտ և
աչքի ընկնում նույնիսկ ամենառաջադիր դիտողին:

Յեվ ինչպես կարող են բանվոր մրջյունները չվազվել կամ
վարել բանավ չմտնողվել. Նրանց մի մասը պետք է զբաղվի բնա-
կարան շինելով կամ հինը նորոգելով. մյուսներն ստիպված են
շարունակ ուտելիքի մասին հօգած վորը պետք է գտնել, քաշ
տալ մրջնանոց և գարսել մի վորոշակի տեղ. յերրորդների պարտա-
կանությունն է ձվերն ու յերեխաներին խնամել... Յեվ, վերջապես,

այդքան բնակիչների համար այդքան մեծ տնտեսության մեջ քիչ կղտնվեն ուրիշ գործեր են:

Դիտելով բանվոր մրջյուններից մի քանիսին, մենք կարող ենք նկատել, վոր նրանց գլուխն ու ծնուռները ավելի մեծ են, քան մյուսներինը: Դրանք զինվորներ կամ ուղմիկներն են, վորոնք բացի իրենց սեփական ծնուռներից այլ գենք չունեն և դրանցով են ոգտվում ուրիշ մրջյունների հետ կովելիս:

Այդ պատճառով ել նրանց ծնուռներն ավելի զարգացած են (նկ. 7):



Կան նաև այնպիսի մրջյուններ, վորոնց գլուխն այնքան մեծ ե, վոր հավասարվում է մնացած ամբողջ մարմնին: Սրանք կույցը մրջյուններն են, ամենից գժեախտներն ամբողջ խմբի մեջ: Նրանք կարծես թե միայն նրա համար են պետք, վոր իրենց մեծ գլուխներով թշնամիների ուշադրությունը հեռացնեն մրջնանոցի մյուս բնակիչներից:

Յերբ, որինակի համար, բանվորներն զբաղված են վոչ մրջնանոցի ներսում, այլ գուրսը, բաց յերկնքի տակ, մեծ գլխանի կույցը բռնելն ըստ նրանց մեջ քաշ են գալիս: յեթև վորեն նկատելու մասին փշի բերանը քաղցրացնել փոքրիկ միջատով, հասկանալի յե, վոր նա փոքրիկ մրջնիկի վրա ուշադրություն չի դարձնի, այլ կաշխատի վորուալ նրան, վորն ավելի խոշոր ե և անա կորավ մեծ գլխանի կույցը:

Կան գիտնականներ, որինակ՝ ֆորելը և վելերը, վորոնք պնդում են, թե մեծագույն կույցերը մրջնանոցի համար «կենացանի դարպասների» գեր են կատարում, այլ կերպ ասած՝ նրանք հարկ յեղած դեպքում իրենց խոշոր գլուխներով փակում են մըրջնանոցի յել ու մուտի անցքերը, և այս ձեռվ պաշտպանում են նրա բնակիչներին անկոչ հյուրերից ու թշնամիներից:

«Մի անգամ մի ծառի բնում—այդ բանը պատահել է Հյուսիսային Ամերիկայում—վելերը գտել է մրջյունների մի բուն: Բնի մուտքի անցքերը փակել եյին մեծագույն կույցերը, ըստ վորում ամեն մի մրջյունի գլուխն իր տեսքով ու գույնով այն-

քան լավ նմանվում եր բնափայտին, վորի մեջ բնի անցքերն եյին շինված, վոր բավական դժվար եր նկատել նրան:

Յերբ վելերը մի տեղ ծղութ կպցրել ե «կենացանի դարպասներին», նրանք չեն բացվել այլ պինդ փակված են մնացել: Իսկ յերբ հայտնվել ե մրջնանոցի բնակիչներից վորեն մեկը և սկսել է իր բեխիկներով թեթևակի բաղսել իր պոստում կանգնած պահակի գլուխը, այն ժամանակ անցքն անմիջապես բացվել է, և նա ազատ անցել է մրջնարանի ներսը և «դարպասները» կրկին փակվել են նրա հետեւց:

Բանվոր մրջյունները յերեխաներ չեն բերում: Փոքրիկ մըրջյունները ծնվում են թեփափոր եգերից և արուներից: Եգերին հաճախ տեսնել չի կարելի, վորովհետեւ մրջնանոցում նրանցից միմիայն մի քանի հատ ե լինում, չնայած պատահել են այնպիսի համայնքներ, վորտեղ եգերի թիվը հասել է մինչեւ 50—60 հատի: Բայց այդ հազվագյուտ բացառություն ե, դրա փոխարեն արուների թիվը անհամեմատ ավելի շատ ե, քան եգերի թիվը: Նրանց հաշվում են տասնյակներով:

Եգն արուից տարբերվում է միմիայն նրանով, վոր նրա փորն ավելի հաստ ե, իսկ մնացյալ բաներով արտաքինից նանան և արուին: Այս թեփափոր մրջյունները սովորաբար վոչինչ չեն անում և հազվագյուտ գեղքերում մուսնակցում են ընդհանուր աշխատանքներին:

Յերեքն բանվոր մրջյունների մեջ կորելի ե նկատել և այնպիսիներին, վորոնք իրենց արտաքինով իիստ տարբերվում են մյուսներից, նրանք կամ հասկանուի փոքր են կամ գույնը չի նմանվում մրջնանոցի մնացած անդամների գույնին: Իսկ մըրջյուններ են սրանք, դրանք հենց այն մրջյուններն են, վոր կոչվում են «սարուկներ», նրանց մասին մենք կզրուցենք հաջորդ գլուխներից մեկում:

Հաճախ պատահում է մի բնում այնքան շատ մրջյուններ են կիտվում, վոր խիստ նեղվածք և լինում միասին ապրելու համար: Այս ժամանակ հին բնի մոտ չինվում և նոր բուն, և մըրջյունների մի մասը տեղափոխվում է նոր բնակարտներ: Բայց յերբ այստեղ ել նրանք շատ են բազմանում, կրկին նոր կացարան են կառուցում, ուր վերաբնակվում ե բնակչություն ավելացած մասը:

Եյուլիսով յերեքն հին բնի մոտ առաջանում է հարյուրա-

վար բներից բազկացած մի ամբողջ գյուղակ: Հասկանալի յե, վոր հնատագայում այդ գյուղակը կարող ե գառնալ մի մեծ «քաղաք»: Ամերիկայում Ալեգանյան լեռներում գտնվել ե մի մեծ «մրջնային քաղաք», վոր բազկացած ե յեղել հազար հինգ հարյուր, կամ հազար վեց հարյուր բնից, և այն ել ինչ բներ: Նրանցից յուրաքանչյուրը մեկ, նույնիսկ յերկու մետր բարձրություն ե ունեցել: Ամրող այն վայրը, վորտեղ տեղավորված եր այդ հսկայական «քաղաքը», ծածկված է յեղել մի բնից մյուսը տանող ստորերկրյա փորված անցքերով: Յեվ ահա ինչն է առանձնապես հետաքրքիր, մրջնային քաղաքի բազմամիլիոն բնակչությունն իրենից ներկայացնում եր մի ամբողջություն: Այսպես, յեթե վորեն բուն քանդվում կամ փշանում եր, մյուս բների քնակիչներն ավերումից տուժած բնակիչների հետ ձեռնարկում ելին այն վերականգնելու:

ԲՆՈՒՄ

Ափսոս, ընթերցող, վոր քեզ հետ միասին չենք կարող մանել մրջունների շենքը, վորպեսզի տեսնենք, թե ինչպես ե կառուցված այն: Այսինքն դա մեծ դժբախտություն չի—մենք կարող ենք կտրել կամ զգուշությամբ քանդել մըջունների թումբը, և դիտել թե ինչ ե կտարվում այստեղ: Արտաքինից նրանց բնակարանը բալորովին գեղեցիկ չի—սուր ծայրով մի հողաթումք ե դա, վորի վրա շաղ են տրված ճյուղերի կտորատանքներ, ծղոտ, տերեններ, ունի մի քանի յելքի անցքեր և ուրիշ վոչինչ: Մրջնային թմբելը զանազան մեծության են լինում, Յերբեմն պատահում են շատ մեծերը, մինչև անգամ խոտի վոքը գեղի չափ (նկ. 8):

Բայց իջնենք այս շենքի ներսը. վորքան շատ փոքրիկ սենյակներ: Սկզբում ձեզ թվում ե թե, այստեղ ինչ վոր անկարգություն ե տիրում: Սակայն սաստիկ զարմանում եք նկատելով, վոր սենյակներն այստեղ կառուցված են հարկերով, վորոնց թիվը յերբեմն քառասունի յե հասնում: Քառասուն հարկ, քսանը գետնի տակ, քսանը գետնից բարձր:

Յուրաքանչյուր հարկում դուք կտեսնեք նեղիկ անցքերով իրար հետ միացած անթիվ, անհամար փոքրիկ սենյակներ, վորոնք կարծես թե կազմում են չընդհատվող սրահներ: Բոլոր հարկերն իրար հետ միանում են նույնպես սրահներով: Բացի



նկ. 8. Մրջնացաց

այս փոքր սենյակներից, վորտեղ դուք կտևսնեք բազմաթիվ մըրշջյուն-ձագուլկներ կամ ձվի կույտեր, կան նաև մեծ սենյակներ՝ վորոնք զլիսավորապես կենսամթերքներ պահելու համար են: Այսպիսի սենյակների առաստաղները կամարավոր են, պատերը կանոնավոր, հատակը հարթ, կարծես ասֆալտած լինի: Վորպեսպի սենյակներն ամուր ու դիմացկուն լինեն, նրանց առաստաղների տակ հենարան սյուներ են դրված:

Մըրջյունի ինչին են պետք բնի վերին ու ներքին հարկերը: Ներքեւում նա պահում է իր ձագերը միայն գիշերը և վատ յեղանակին, իսկ ցերեկը և լավ յեղանակին նրանց փոխադրում է վերնահարկը:

Բոլոր փոքր սենյակները մեծերի հետ միացած են միջանցքներով, իսկ այստեղից արդեն սկսվում են մըրջնանոցի արտաքին անցքերը: Բնի արտաքին անցքերը յել ու մուտքի դաներն են: Մըրջյունը գիշեր ժամանակ և վատ յեղանակին այդ անցքերը փակում է, վորպեսպի խոնավությունն ու ցուրտը ներս չթափանցեն և փակվի թշնամի-ավագակների մուտքը, վորոնք գիշերը կարող են հեշտությամբ սողոսկել բունը, և բնակիչներին շատ չարիք ու տհաճություններ պատճառել: Սակայն մըրջյունը չի բավականանում այդ անցքերը զանազան մանր աղբով փակելով: Գիշերները համայնքի գոների առաջ պահակներ են կանգնեցնում:

Հետաքրքիր ետեսնել թե մըրջյուններն ինչպես են կառուցում իրենց բազմահարկ հաստրակական շենքերը:

«Հենց վոր գարնան սկսում է հանգարտ ու տաք անձրև տեղալ և հողը փափկում է, հողափոր մըրջյուններն իսկույն սկսում են իրենց շինարարությունը. հարյուրներով գուրս են թափվում այս քրտնաշան արարածներն իրենց բներից և նոր սենյակների ու անցքերի հիմնադրման համար շարում հողի կոշար՝ կոշտի վրա, ըստ վորում ճանապարհին պատահող խոտերի ցողունները, հավամըրքով ճյուղիկները, տերեների մասերը և բնական այլ հենարանները գործադրվում են վորպես սյուներ ու կամարներ» (Վասման):

Աշխատանքը յեռաց, բանվորներն շտապեցին զանազան կողմեր, գործի գրին իրենց շոշափելիքները, թութերը և, վոր զլիսավորն և, ծնոտները. կավի փոքրիկ կտօրները և ավագահատիկներն անսովոր արագությամբ մոտ են քաշում, կիտում շինարարության վայրում: Այսուհետ մըրջյուն-քարտաշները հիմնադրում են պատերն ու առաստաղների կամարները, այնուհետև գործ բանվորները պատրաստում են շինանյութեր, մի քանին առաստաղներ են պատրաստում, մյուսները նեցուկներն ու սյուները բարձրացնում, յերբորդները ծածկված անցքեր և մի-

ջանցքներ են անցկացնում սենյակից սենյակ ու գեպի դուրսը: Հենց այստեղ ել վիտում են բազմաթիվ կերակրող մըրջյունները, վորոնք յեռանդով սնում են ուժասպառ բանվորներին ու կրկին ուղեկործում կենսամթերքներ ձեռք բերելու:

Ահա մըրջնանոցն արդեն պատրաստ է: Դրսից ծածկում են նրան ավագահատիկներով, ճյուղերի կորուտանքներով ու ծղոտով: Վերջապես պատրաստվում են և արտաքին անցքերն ու հոգնատանջ աշխատավորները բնակություն են հաստատում նոր կացարանում:

Հաճախ մըրջնանոցի մոտ կարելի է տեսնել 20—40 մետր յերկարությամբ փոքրիկ ու բավական մաքուր շավիղներ. բանվոր-մըրջյունը շինել և այդ նրա համար, վոր մըրջնանոցից անտառ կամ դաշտ գնալն ավելի հեշտ ու հանգիստ լինի. հաճախ այն ծառերի ու թփերի վրա, գեպի վորոնց ձգված են այդ ձանապարհները, արածում են մըրջյունների «կթի անասունները»—աֆիսները (տես գլուխ «Անասունապահներ»): Յերբեմն, հաղորդակցության ձանապարհներ սարքելիս մըրջյունները վոչ միայն կրծոտում են ձանապարհի վրա յեղած բույսերն ու մաքրում մոլախոտերը, այլև նրանց ծածկում են ավագով: Սակայն գա դեռ բոլորը չեւ հաճախ մըրջյունն իր բնից գեպի զանազան կողմեր—յերբեմն ել մեծ տարածությունների վրա—անց և կացնում զաղտնի անցքեր ու ներքնուղիներ:

Հաճախ այդ տունելները կրկին տանում են գեպի այն ծառերը, վորոնց վրա տեղափորված են «մըրջնային կովերի»—աֆիսների ամրող հոտեր, իսկ ընդհանրապես ստորերկրյա անցքերն ու տունելները յերկու տեսակ ոգուած են տալիս մըրջյուններին. առաջին՝ նրանք բանվոր-մըրջյունների համար ծառայում են վորպես հաղորդակցության շատ հարմար ձանապարհներ, իսկ յերկրորդ՝ ոգնում են նրանց թագնվելու թշնամու հարձակման գեպ-քում:

Վերջապես, չի խանգարում մատնանշել, վոր խիտ բնակչություն ունեցող մըրջյունների մի շարք համայնքներ՝ բացի իսկամաներ—կան բներից, սարքում են նաև «ժամանակավոր կայաններ»—սովորաբար այն ծառերի ու թփերի մոտ, վորտեղ ապրում են նրանց կթի անասունները—աֆիսները:



Վասմանը գրում ե՝

«Համարյա չկա և վոչ մի տեսակ նյութ, վորից մրջյունը չկարողանա բռն շինել իր համար, համարյա չկա վոչ մի ձե, վոր մրջյունը չտա իր բնին և չկա մի տեղազրություն, վորտեղ հնարավոր շիներ շինել այս: Յերբեմն նա այնքան փոքր ե, ինչպես մի մատնոց, յերբեմն այնքան մեծ, վոր յեթե համեմտանք կառուցողի մեծությունը նրա շենքի մեծության հետ, ապա հին յեղիպատացիների բուրգերը համեմտած այս բնի հետ կթվան խուրդի բրակից վոչ մեծ:

Յերբեմն նու գտնվում ե գետնի տակ, ժայռերի պատռվածքների մեջ, քարերի տակ, յերբեմն ծառերի կեղեվի տակ, նրա բնափայտի մեջ, յերբեմն բույսի մնամեջ ցողունում, յերբեմն գլխորի կամ խխունջի լքած տնակում, յերբեմն կախված ե նա ծառի բարձր ճյուղերից, յերբեմն անտառում, գետնի մակերեսի վրա բարձրանում ե ինչպես մի գմբեթ, յերբեմն փորված ե նա հողում, յերբեմն ցեմենտից ծեփված, յերբեմն փայտի մեջ ե փորված, յերբեմն ել պատրաստված ե այս բոլոր աշխատանքների միասնական գործագրումով:

Ի՞նչպիսի բազմազանություն: Յեվ զարմանալի չե, չմոռանանք, վոր հինգ հազարից ավելի մրջյունի տարբեր ցեղեր գոյություն ունեն և նրանցից համարյա ամեն մեկն ապրում ե ըստ իր գիտցածի—նայած իր նախնիքներից ժառանգաբար ստացված ունակություններին, բնակավայրին, ապրելակերպին և ձեռքի տակ ունեցած անհրաժեշտ նյութերին:

Յերկրագնդի շոգ արևադարձային յերկրներում աճում ե մեծ ու փետրածե տերեզներով տկացիան: Ամեն մի այսպիսի տերեզի հիմքում կա մի ահագին սնամեջ փուշ, և ինչ Այս փուշը բնի տեղ ե ծառայում, վորտեղ բնակություն և հաստատում մըրշյունների մի առանձին ցեղ:

Մի շարք այլ մրջյուններ տեղավորվում են հաշահատիկների չոր տողունների ներսում: Այդպիսիներն են՝ ըստ Ֆորելի գիտությունների, չյուսիսային Ամերիկայի տափաստաններում ապրող մրջյունների զանազան ցեղերը:

Յերբորդները—անտառային մրջյուններից շատերը թեև շինարարական գործի հմուտ վարպետներ են, ընարում են պա-

տահաբար գտած վորեւ կիսապատրաս կացարան, ու հարմարեցած այն վորպես բնակարան իրենց համայնքի համար:

Անտառում հաճախ կարելի ե պատահել հին, փտած կոճղերի: Յերկար տարիներ նրանց մեջ ապրել են զանազան կեղեվակերներ (բգեղներ) և փայտահատ-բգեղների թթվուրներ: Այստեղ նրանք կրծել—պատրաստել են բազմաթիվ վորքիկ սենյակներ ու սառցերկրյա անցքեր, իհարկե, իրենց կարեղների համար. բայց մըրջյուններին վորպես բնակարան դրանից ավելի լավը պետք ել չի: Նրանք իմբողի ամբողջ համայնքով տեղափոխվում են այսպիսի բնակարան, ուսումն նրա նախկին աերերին, մաքրություն, կարգ ու կանոն հաստատում այնտեղ, ծածկում ավելորդ անցքերը հոգով կամ փայտի թեփով, նորոգում են ինչ տեղ վոր պետք ե, այս ու այնտեղ շինում միջնապատեր ու սկսում են իրենց համար ապրել բղեղներից խլած այս բնում:

Յեթե գրավելու ժամանակ յերևա, վոր կոճղի մի մասում մրջյունների այլ գաղութ ե հաստատվել արդեն, այն ժամանակ նոր տերերը կամ վոչնչացնում են անհաճո հարեաններին, կամ ուղղակի տանից գուրս են անում: Յեթե այդ չի հաջողվում նրանց, այն ժամանակ յերկու գաղութների մեջ հաստատվում են խաղաղ, բարի գրացիական փոխարարերություններ, ըստ վորում մի համայնքի տիրապետության սահմանները զավում են մյուսի սահմաններից առանձին պատճեղով, վոր նոր են շինում:

Մըրջյունները մեծ մասամբ հողագործներ են, բայց նրանց մեջ կան և «ատաղձագործներ»: Այդ աշխատանքների ժամանակ վորպես գործիք նրանք բանեցնում են իրենց ծնունդները, վորոնցով նրանք հին ծառերի բնում կրծում-փորում են իրենց բազմահարկ շինությունները:

Տեղավորվելով ծառի փչակում, վորոշ մրջյուններ այդ փչակն ուղագործում են վորպես համայնական բնակարանի բնական պատճեղ, կամ վորպես բերդի պատեր, իսկ սենյակներն ու միջանցքներն արդեն իրենք են կառուցում:

Այդպես ե կառուցում, որինակի համար, չնդկաստանում տպառող մրջյունների ցեղերից մեջ:

Փչակի ընտրություն անելուց հետո, նրանք ապագա շենքի համար շինանյութ են հավաքում այնտեղ, իսկ նրանց համար վորպես այդպիսի նյութ ծառայում ե կովի աղբը. հավաքելով կովալը կտորները, մրջյունները մշակության են յենքարկում ու նրանցից պատրաստում են փոքրիկ բավական ամուր թերթեր. այսպիսի յուրաքանչյուր թերթ կարծես աղյուսիկ կամ

կղմինդր լինի: Կղմինդրը պատրաստելու հետ միաժամանակ ըսկառում են նաև շինարարությունը: Կղմինդրը կարգով շարում են ու իրար վրա դարսում այնքան, մինչև վոր ստացվում է բավականածն արտաքինով գնդի նման մի բուն, վոր բաղկացած ե բազմաթիվ առանձին-առանձին փոքրիկ սենյակներից:

Բայց ապա ուր մնացին այն «կախված բները», վորոնց մասին գրում ե վասմանը. մենք գիտենք վոր այդպիսի բնակարաններ շատ են գործածում մրջյունի ազգակիցներից մեղուներն ու կրետները: Բայց վորեւ մեկը տեսել և արդյոք, վոր մրջյուններն ուներն ունենան այդպիսի բնակարան: Այս, տեսել և վոչ մեկ անգամ: Մեր յերկրներում ել կա այդպիսի վարպետ, վոր պատրաստում ե «կախված» կարգոնի բուն.—այդ ծառի ոկ փայլուն մրջյունն ե:

Նա կրծելով ծառերից թելեր և հանում, տրորում ե նրանց ծնուներով, խառնում ե նրանց հետ իր կպչուն թուքը և այսպիսի նյութից գուրս բերում փոքրիկ բուն, վորը կախում ե վորեւ տեղ ծառի կամ թփի ճյուղերից:

Ամերիկան և հնդկական մրցյաններն առանձնապես նման են նման գործի մեջ: Նրանց «կարտոնի» բները հաճախ շատ մեծ են լինում: Սակայն այս տեսակ բներից ամենամեծերն ունենում են միայն մի տեսակ մրջյուններ, վորոնք ապրում են Աֆրիկայի արեւլյան ափի մոտ գտնվող Մադագասկար կղզում: Այստեղ մի անգամ գտնվել ե մի այնպիսի կախված բուն, վորի մեջ մի հասակավոր մարդ ապատ կարող եր տեղավորվել:

Այդ բոլորը սակայն չնշին բաներ կթվան, յեթե համեմատելու լինենք Հնդկաստանի Ցեյլոն կղզում ապրող կարմրագեղինասիական մրջյունի արարքների հետ:

Նրան կարելի ե ջուհակ անվանել: Ցեղ իսկապես. Ցեյլոնի մրջյունն իր համար տերևներից ե բնակարան պատրաստում. բայց ինչպես:

Ահա բանվոր մրջյունների արտելը բարձրացավ մի ճյուղի վրա, վոր ընտրված ե բնակավայրի համար: Նրանք յեռանդով գործում են իրենց ծնուների միջոցով—ձգում, իրար են մոտեցնում տերեւները, պատշաճ ձեռվ կարգավորում ու այդպիսով պինդ ամրացնում իրար: Շուտով հայտնվում ե մի ուրիշ արտել: Նրանց անդամներից ամեն մեկը ծնուներով բռնած տանում է ինչ վոր սպիտակ, յերկարագուն գնդիկ: Սա նրանց «ճախարակներն» են: Սակայն ներեցեք, ճախարակներ չեն, այլ նրանց ան-



Նկ. 9. Հարավային Ամերիկայում ապրող մրջյունների մի ցեղի կախված բունը:

փական բրուտմերը, վորոնց հին բնից քաշ են տվել աշխատանքի վայրը:

Թրթուռի մի ծայրից բերանով բռնած, մանողը կամ տվելի շուտ ջուրհակն սկսում ե թրթուռի առաջին ծայրը իրար մոտեցրած տերեների յեզրերով հետ ու առաջ, աջ ու ձախ շարժելու Յել տերեկի մակերեսին, վորտեղ կպչում ե թրթուռի բերանը, իսկույն յերեսում ե վոստայնաթելիկը, վորն արտադրում ե ինքը թրթուռը:

Թելիկները կպչում են տերեմսերին և այսպիսով ամրացնում նրանց: Այս աշխատանքը յերկար ե տևում:

Վոստայնաթելերը խաչաձևվում են զանազան ուղղությամբ: Ամրացնող նյութն ավելի ու ավելի ե պնդանում, կազմելով ինչ վոր մի տեսակ թաղիքի հյուսվածք: Վերջապես բռնն արդեռ պատրաստ ե: Մնում ե ապահովելայն փոքրիկ մրջունների հարձակումից, վորոնց հետ մեր ջուրհակը մշտական ու անդադար պատերազմի մեջ և գտնվում: Յել մանողը կրկին գործի յե դնում իր «Ճախարակը», փաթաթելով ծառի բռնը 20—25 սանտիմետր լայնությամբ վոստայնի հյուսվածքով, վորի վրա կախված ե իր բռնը:

ՀԱՄԱԳՈՅՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԻՑԻ

Նկ. 10. «Ճախակ» մրջունն իր կենդանի ճախարակը ծնուաներում բռնած:

Փոքրիկ մրջունը աշխարհ և զալիս կատարելապի սպառապինված իրեն անհրաժեշտ ունակություններով, ինքնուրույն կյանքի հենց առաջին բոպեներից նա կարողանում է անել այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ ե իր գոյությունը պաշտպանելու համար, մատադ սերնդին դաստիարակելու և համայնքի բարորության համար:

Նրա ամենագլխավար ունակությունները ծնվում են հենց իր են միասին: Նա սանում ե այդ բօլորը պատրաս դրւորյամբ: Սովորելու, վարժվելու կարիք չի զգում նա:

Մրջունների ամեն մի տեսակը ամեն մի ցեղ ծնված որից ոժտված ե լինում իր բռնը համաձայն այս կամ այն բնդնականությունը:

Ալլանի շինելու ընդունակությամբ, այս կամ այն անհրաժեշտ նյութից, այս կամ այն ավանդական ձեռվ, այս կամ այն բնդութվան տեղամ։ «Էողափոր» մրջունը ծնված որից փորփրում ե հողը, «ատաղձագործը», հենց առաջին անգամից, յերբ սկսում ե ծառի բռնում սենյակներ ու անցքեր բաց անել, կատարում ե այդ այնպես, կարծես թե վաղուց ե սովորել այդ արհեստը: Մադագասկարյան գեռահաս մրջունն իր կախված բնի համար «կարտոն» պատրաստելու գործում մեծ մասամբ հետ չի մնում իր համայնքի ծեր «փորձված» ընկերություն իր կյանքում վոչ մի անգամ գեռ բռն չշինած ցելունյան «ջուլհակը» սովորաբար նույն ճարպկությամբ կարողանում ե ղեկավարել իր ճախարակները, ինչպես և նրա ամեն մի ցեղակից, վոր բազմաթիվ անդամներ ե զբաղվել այդ գործով:

Այդպես ե ընդհանուր կանոնը: Դա ապացուցված ե բազմաթիվ փորձերով ու դիտողություններով: Բայց այդ կանոնից չպետք ե սխալ յեզրակացություններ անել: Չպետք ե կարծել, թե մրջունը նման ե վորեւ մեկի կողմից խելոք մտածված ու լավ լարված մեքենայի: Չպետք ե յենթադրել, թե մրջունների առանձին ցեղեր ամեն ինչ և միշտ շաբունով են կատարում: Յես իսկույն մի շաբաթ փաստեր կբերեմ, վորոնք պարզ ցույց են տալիս, թե ինչու այդպես չպետք ե մտածել: Այդ փաստերն ավելի և հետաքրքիր են, վորովհետեւ պատմում ե վասմանը, իսկ նրան բոլորն ել ընդունում են, վորպես մրջունների կենցաղին քաջածանոթ մարդ:

Սովորական ալկարմիր մրջունն ամենից առաջ լավ գետնափոր ե: Նա իր բռնը շինում ե հողի մեջ, ծառերի ստորոտում, թփի տակ և մինչեւ անգամ քարերի տակ: Բնի վրա հողի մի բլրակ և բարձրացնում, ծածկում հավամրդու ճյուղերով, չոր տերեմսերով և այլն. յերեմն փոքր ե լինում նա, յերեմն, ընդհակառակը, մետրից ավելի բարձր: «Սովորաբար» այդպիս և լինում: Բայց հաճախ այդ միանույն մըրջյունը բնակություն ե հաստատում սոճու կամ կաղնու փուած կոճղերում, փտած արմատներում, կամ թե հենց դեռ կենդանի ծառում, նրա վոչ մեծ փշակի ճեղքերում—փտած տեղում կամ ծառի պոկված կեղերի տակ: Նշանակում ե գետնի մեջ ապրելն այս մրջունի համար բոլորովին ել պարտադիր չե: Նա կարող ե, հանգամանքներին նայած, բնակություն հաստատել և այլ տեղերում չենց բանն այն և—«նայած հանգամանքներին»: Հանգամանքները



զանազան են լինում, նրանց համեմատությամբ ել ալ-կարմիր մրջունը յերեմն փոխում ե իր ապրելու ձևը:

Մի քանի որ ե վոր յերաշտ ե Անտանելի շոգեր են, տհաճ ե արեի տակ, սոճու անտառի յեղում տեղափորված հին բնում:

Յեվ մրջունը հեռանում ե այնտեղից. տանում ե իր նետ փոքրիկներին ու բնակվում անտառի ստվերում մի տեղում:

Ծոգերն անցան, փչում ե դով քամին, հաճախ անձրևում ե. և մեր մրջունը կրկին տեղաշարժվում ե, թողնում վոչ վաղուց ձեռք բերած ու տաքացրած ըունը և իր ամբողջ գույքով տեղափոխում ե իր հին ոջախը կամ հորդ անձրևներից ապաստան մինտում վոչ թե գետնի տակ, այլ վորեե կազու կոճղում, վորն արագորեն վերափոխում ե համայնական հարմար բնակարանի և, իհարկե, տեղափորվելով այս կոճղում, մեր հողափորը կամա ակամա պետք ե փորձի նաև ատաղձագործություն անել:

Այստեղ գուք տեսնում եք, վոր տեղափոխություններն առաջանում են պատահական հանգամանքից: Բայց տարվա յեղանակները, գարունը, ամառը, աշունը ու ձմեռն ամեններն պատահական չեն—նրանք մեր յերկրներում կանոնավորապես հաջորդում են իրար: Յեվ ալ-կարմիր մրջունների շատ գաղութներ նույն՝ կանոնավորությամբ իրենց ամառային բնակարաններից գաղթում են ձմեռային բնակարանները, և ընդհակառակը:

Բանն այն ե, վոր այդ գաղութներն ունենում են յերկու տեսակ բնակարան՝ ձմեռային և ամառային: Ձմեռային բնակարանը շինվում ե շատ խոր ծառերի արմատների տակ կամ նրանց կոճղերում, վոր խիտ թփերով պաշտպանված ե ցուրտ քամիներից ու բուքերից—այստեղ և տաք ե, և ապահով: Բայց ահա ապրել ամիսն ե: Յեկել են ցանկալի ջերմ որերը: Արեգակը տաքացրել ե յերկիրը ու որեցոր ավելի ու ավելի յե շիկանում: Յեվ մրջունները գաղթում են ձմեռվա բնից ամառայինը, վորը մեծ մասամբ ազատորեն տեղալորված ե թփուտի յեղերքին: Իսկ սեպտեմբերին կամ հոկտեմբերի սկզբին նրանք տեղափոխվում են ձմեռային բնակարանը: Յերեմն սակայն պատահում ե այնպես, վոր մրջուններն ամառվա կեսին հանկարծ տեղահանվում ե բնակվում են ձմեռային բնում: Դուք արդեն գիտեք, ինչո՞ւ համար կամ ինչ հանգամանքներից ե առաջանում այս բանը—չե վոր լավ թագնված ձմեռային բնակարանը կարող ե նրանց վոչ միայն պաշտպանել ցրտից՝ այլ նաև սաստիկ շոգերից...

Հանգամանքներին նայելով՝ մրջունը միենույն բունը փո-

փոխության ե յենթարկում: Այդ հեշտությամբ կարելի ե ստուգել նայելով այն մրջունների աշխատանքին, վորոնք իրենց ստորերկրյա բնակարանի վրա գմբեթանան բլրակ են շինում կամ թե չե սոճու անտառում ապրող անտառային մրջունների նման իսկական մրջնային հողակույցեր կազմում:

Յերբ յեղանակը խոնավ ե, յերբ ողում շատ խոնավություն ե կուտակված, այն ժամանակ այս մրջուններն իրենց գմբեթներն ու բլրակները բարձրացնում են, միաժամանակ անցկացնելով այնտեղ յելքի բազմաթիվ անցքեր: այդ ոգնում ե խոնավության շուտ գոլորշիանալուն և բնից ազատ կերպով յելք ունենալուն, իսկ յեթե ողում սակավ ե խոնավությունը, և բնին չորանայու ու ճաքճքելու վտանգ ե սպառնում, այն ժամանակ, ընդհակառակը, մրջունները գմբեթներն ու բլրակները ցածր ու տափակ են շինում, քչացնելով միաժամանակ և յելքի անցքերը: այդ դանդաղեցնում ե գոլորշիացումը և չի թողնում, վոր բունը բուլորովին չորանա:

Բացի յեղանակից, կան և այլ շատ հանգամանքներ, վորոնց ցրտված մրջունն իր շինությունը զանազան ձեվերով և պատրաստում:

Վեցներ կրկին նույն ալ-կարմիր հողափորին, սա ևս, ինչ—պես և բոլոր մրջունները, ապրում ե համայնքով, բայց համայնքները տարբերվում են մեկը մյուսից: Մեկն ուժեղ ե, տասնյակներով, նույնիսկ հարյուր հազարներով մրջուններակիչներ ունի: Մյուսը թույլ ե, նրա բնակիչների թիվը միայն մի քանի հազարի հասնում, շատ անգամ ել հարյուրների:

Այսպիսի սակավազոր համայնքները հաճախ հարձարկման են յենթարկվում այլ տեսակի մրջունների կողմից: Ահա թե ինչու նրանք ստիպված են թագնելու, իրենց բներն ավելի խոր ու ծածկված տեղերում շինելու: Իրենց շինություններում վորոշ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ հետաքրքիր որինակ և ըերում զվիցերական հայտնի գիտնական ֆորեմ:

Ուժերում (հյուսիսային Աֆրիկա) ապրում ե մրջունների մի ցեղ, վորը սովորաբար իւ բնում մուտքի մեծ անցք և պատրաստում: Մի անգամ մրջունների մի ամբողջ համայնք փոխադրել են Զվերիքի և բնակեցրել մի այգում Յուրիի քաղաքից վոչ նեռու: Այստեղ նրանց սկսել են անհանգստացնել փոքրիկ մրջունները: Յեվ ահա ալժիրյան մրջունները, վորպեսզի կարողանան իրենց գույքը պաշտպանել պսատիկ աներես գողերի հարձակութներից, սկսում են ավելի

ավելի նեղացնել իրենց մուտքի անցքը և վերջիվերջո համարյա-
բոլորովին փակում են:

Վասմանը պատմում է մի այլ ավելի հետաքրքիր փաստի-
մասին:

Այս անգամ դեպքը տեղի յե ունեցել Գերմանիայում, մի-
մատաղ սոճու անտառում: Սոճու բնի շուրջը կազմված եր մեծ
մըջնային հողակույտ, իսկ նրանից մի քանի սաժեն հեռու գտնը-
վում եր ցեմենտով ծծված խավաքարտի պատահական մի կույտ
(այսպիսի կարտոնով կտուրներն են ծածկում):

«Այս գանձը, ասում ե վասմանը,—հայտաբերել են մի-
քանի մըջյուններ: Այդ նրանց ավելի յե դուր յեկել, քան իրենց
հին բնակավայրը և այդ պատճառով ել մըջյունները տեղափոխ-
վում են այստեղ իրենց ամբողջ ունեցվածքով: գաղթը տեսվում է
մի քանի շաբաթ»:

Բայց ինչպես և ինչու այդպիս պատահեց, ի՞նչ կարիք կար,
վոր մըջյունները տեղափոխել են այդպիսի մի անսովոր տեղում,
ինչպիսին եր տանիքի կարտոնի կույտը: Ի՞նչն ստիպեց նրանց
փոխելու իրենց հարազատ բունը, նոր պատահական բնի հետ-
և լաւ վասմանին:

«Առաջին մըջյուններին,—ասում ե նա, —վորոնք պատահա-
րար հանդիպեցին այս կարտոնի կտորներին, դուր և գալիս
նրանց տակ մնալը—նրանք այստեղ իրենց հարմար ու ապահով եյին-
գործ, դրա համար ել քաշ են տվել և իրենց մյուս ընկերներին:
Վորովինեւ սրանց ել ձիշտ նույնպես դուր յեկելնոր տեղը, ուստի
վերջիվերջո տեղի յե ունեցել այդ գաղթը գեպի նոր բնակավայրը:
Թե ինչու մըջյունները հետագայում կարտոնի վրա հողաթումը
չեն շինել—այդ ել նույնպես հետությամբ և բացատրվում:
Նրանք այդ արհեստական կտորի տակ իրենց բավական տա-
քուկ ու ապահով են զգացել: Դրա համար ել նրանք կարիք չեն
զդացել իրենց նոր բնին միացնել և զմբեթաձև վերնաշնքը: Զե-
գոր ուրիշ մըջյուններ նույնպես հաճախ բլրակ կամ զմբեթներ
չեն շինում, յեթե նրանց բնակարանը տեղափոխված և քարի տակ,
վորը նրանց տաք ու ապահով և պահում»... Կրկին մի հարց՝
պետք և յենթագրել արդյոք, վոր մըջյունն իր «շինարարական
տաղանդը» գործադրում ե միայն բները սարքավորելու և վորե-
այլ բան շինելու կարողություն չունի:

Ի, հարկե վոչ: Մենք արգեն գիտենք, վոր նա յերեմն ձա-

նապարհներ և շինում, սալահատակներ սարքում, ներքնուղիներ
անցկացնում, «գոմեր» կառուցում իր «կովիկների» համար:

Հետո հայտնի ե նաև, վոր մըջյունների շատ տեսակներ
ուսար ցեղերի արշավանքներից պաշտպանվելու համար իրենց
բնակարանների մոտ շինում են հողաթմբեր և բարիկադներ: Յեր-
բեմն նրանք հողի պատերի մեջ թաղում են զանազան անկոչ
հաճախորդների, —ինչպես, որինակ, սարգեր, բզեզներ կամ փոքր
մողեսներ, վորպեսզի իրենց ապահովին նրանց վտանգից: Վերջապես
հայտնի ե, վոր նրանք իրենց մեռելներին բնից դուրս չեն նետում,
այլ նրանց թաղում են հենց բնակարանի ներսում:

Սյրպիսով, բնուրյունից տված ընդունակությունների սահման-
ներում մշջունք կարողանում ե փոփոխել ու գտնազանակերպ դարձ-
նել իր շինուարական աշխատանքները:

Իսկ այդ ի՞նչ ընդունակություններ են:

Առաջին հերթին տարբեր բնագդներ—շինարարական, մայ-
րական, ուզմական, ճորտատիրական և այլն (տես հետագայում):

Բայց ի՞նչ բան ե բնազդը:

Դա հոգեկան մի առանձին ընդունակություն ե, վոր՝ ատար-
բերվում ե բանականությունից կամ խելքից: Բոլոր կենդանիները
նրանց թվում և մարդը ունեն այդ ընդունակությունը: Նոր ծըն-
ված կատվի ձագերը բնազդով են փնտուում ու գտնում իրենց մոր
կուրծքը, վորսորգական շան լակոտները հենց տառջին անգամ
բնազդով են հետախուզում վորսը, յերբ նրանց վորսի են տանում:
Նույն բնազդից զրդված բաղի ձուտիկներն իսկույն ջուրն են
թափվում, յերբ վտանգ են տեսնում, չնայած նրան, վոր վոչ վա-
գոչ մի ժամանակ այդ բանը նրանց չի սպառեցը:

Այլ կերպ ասած, բնազդը բնության կողմից չպարզաբան-
ված մի կույր ձգտում ե, վոր ստիպում ե այս կամ այն գեղքում
գործել այնպես, վոր կարողանա պահպանել իր սեփական ու իր
սերնդի կյանքը: Դա բնածին, ծնադներից ծառանգած պատրաստ
ունակություն ե՝ կատարելու այս կամ այն գործողությունը
առանց նախապատրաստման, տառանց սպառելու, տառանց փորձի-
գործելով ըստ բնազդի, կենդանին չի իմանում, ինչու նա վարկեց
այդպես և վոչ թե այլ կերպ, իր գործողությունների նեանափու-
րյունն ու նպատակը չի գիտակցում: Բայց նախմենայն դեպքու,
նա վարփառ ե նպատական ձևով, այսինքն անում ե այն, ինչ
անհրաժեշտ է ու ոգտակար իրեն և իր սենրդին, և անում ե այն-
պես, կարծես թե դատում ու հասկանում ե իր գործողություննե-
րի միտքն ու նշանակությունը:

«ԽՈՍՈՒՄ ԵՆ» ԱՐԴՅՈՒՆ ՄՐՁՅՈՒՆԵՐԸ

Անթե մրջյունները կամ մրջյուն-բանվորները վոչ միայն բնակարանների շինարարությամբ են զրադշում, այլև ամբողջ մրջնանոցը կերակրելու հոգսերն են տանում: Արուները, եգերը և նրանց փոքրիկները վոչինչ չեն անում, տնգամ իրենց համար կերակուր ել չեն ամառ, այն ժամանակ նա կարող է արմատանալ նրա մեջ ծողողներից անցնել յերեխաներին, յերեխաներից թոռներին, և այլն, և այն ժամանակ առաջանում է նոր բնազր:

Այսպիսով, մեր մրջյունների արարքի մեջ շատ բաներ կախված են նրանց հատուկ բնազրներից, զա անվիճելի են:

Սակայն ահա թե վորն է խնդիրը. բացի բնազրից արդյոք այսեղ չկա վորեե այլ բան:

Դժբախտաբար գիտնականներն այդ հարցի վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնում:

Նրանցից վոմանք, վորոնց թիվն իմքչի այլոց այնքան ելշատ չե, կարծում են, վոր մրջյունների վարքը նման է մարդկանց վարքին, վոր մրջյունն սժուլած է խելքով, վոր ընդհանրապես նման է մորդու կամ կապիկի խելքին և, վերջուղիս նա դատում է գլխի յե ընկնում, թե ինչու և ինչպես անել այս կամ այն դեպքում:

Մյուսները, վորոնց մեջ տուածինն է մեր հայտնի գիտնական վագները, վերջնականապես այն յեզրակացության են յեկեւ վոր մրջյունների հոգեկան կյանքն ամրողովին բնազրների արդյունք և, և վոր այդ մրջյունները հոգեկան վոչ մի այլ ընդունակություն չունեն:

Կա, վերջապես, մրջյունների կյանքին հմուտ մարդկանց մի յերրորդ խումբ եւ վորի մեջ են մտնում խոշոր գիտնականներ՝ ֆորելը, ֆաբրը, եշերիխը և Վասմանը, վորոնց մասին յես արդեն հիշել եմ զրքիս սկզբում:

Նրանք, ինարկե, լավ գիտեն, վոր բնազրները մրջյունների կյանքի մեջ շատ կարևոր տեղ են զբավում, բայց միենույն ժամանակ յենթադրում են, վոր այս միջատները, բացի զանազան բնազրներից, ունեն նաև «ինելքի նշույլներ», «բանականության սպամեր», կամ գուցե և ինչ վոր այլ, առանձին ընդունակություններ, վորոնք խելքի տեղ են ծառայում:

Այդ հարցը լրիվ ճշտությամբ վճռված չե առայժմ, ուստի ավելի լավ է դիմուք փաստերին: Տեսնենք ինչ կասեն նրանք մեզ:


Բանվոր-մրջյունը կերակրում ե վոչ միայն իրեն, այլև արուներին, եգերին և յերեխաններին:

Իսկ ինչ ե ուսում մրջյունը, ինչպիսի ուտելիք նա պետք է ձեռք բերի: Նա ուսում է ամեն բան - հատիկներ, պտուղներ, միջաներ, մինչև անգամ մի քանի խոշոր կենդանի ու մեռած եյակներ կազմում են նրա կերակուրը: Բայց առանձնապես սիրահար և գեղի զանազան քաղցրեղները, մեղրը, բույսերի քաղցր հյութը, զանազան սիրուղները, մուրաբաները, քաղցր խմբեղնենները և այլն: Այդ բոլորը մրջյունները շատ են սիրում: Յեկ յերբեմն ինչպիսի դառը փորձանքներ են կրում նրանք դեպի քաղցրեղներն ունեցած ուժեղ սաստիկ ցանկությունից: Մեկ ել տեսար թափեցին մեղրամանի կամ մուրաբայով բանկայի մեջ: Բերանները մի կուշա քաղցրացրին, տողեցին ու մինչև վկները խրվեցին քաղցր հյութի մեջ. գե արի ու դուրս պրծի այստեղից:

Դան մրջնանոցներ, վորոնց բնակիչները միայնակ են գուրս գալիս վորսի, սակայն նրանց մեծ մասը խմբերով են գնում ուտելիք վորոններու և այդ վորոննունները պակաս հետաքրքիր չեն: Քան բնակարանների շինարարական աշխատանքները:

Նայեցիք ահա այս բանվոր մրջյուննին, վոր ինչ վոր առանձին շտապողականությամբ, գործարար ձեռվ մտնում է մրջնանոց, մի՞րոպեյից հետո գուք կտեսնեք, վոր նա կրկին գուրս և գալիս այնտեղից իր նման մի քանի բանվոր մրջյունների ուղեկցությամբ: Նա գնաց հաղորդելու իր յեղբայրակիցներին՝ թե ինչ-վոր մոտիկ տեղում նա վորս և գտել Այսինքն՝ ինչպիս թե — նուղարեց, կհարցնեք զուք տարակուանքով: Մրջյունները իրոք խոսում են իրար հետ, միայն նրանց խոսակցությունները բոլորովին նման չեն մեր խոսակցությանը. նրանք հայտնում են միայն այն մասին, ինչ վոր օհուում ու զգում են իրենց բեխիկների ոգնությամբ:

Երջունների կյանքն ուսումնասիրող մարդկանցից մեկը մի անգամ մանր շաքարով մի աման կախում եւ պարանից ու այս տեղ մի մրջյուն բաց թողնում: Քաղցրեղենի այդ սիրահարը մեծ քավականությամբ կերպվ, հետո պարանի վրայով բարձրացավ առաստաղը, պատով ցած իջավ և վաղ տվեց մրջնանոցը: Մի քանի ժամանակից հետո նա հետ եւ գալիս մի քանի ընկերների հետ, վորոնք մեծ հաճույքով եւ ադահաբար ուտում են շաքարի փրանքները: Յերբ սրանք ել կուշտ ուտելուց հետո վերադառնում են տուն, այն ժամանակ մրջյունների մի ամբողջ շարան ձգվում եւ գեղի շաքարով ամանը: Սկզբում յերկու որ աշնչնդատնրանք պարանով եյին բարձրանում գեղի ամանը, հետո այլ կերպ սարքեցին: Շաքարով ամանը կախված եր պատուհանի գոգի վրա: Մրջյունների մեծ մասը տեղափորվում եւ պատունի գոգում, իսկ մյուսները բարձրանում են շաքարամանի մեջ: Արանք շաքարի կտորները մոտեցնում են ամանի յեղին ու այն արանք շաքարի կտորները մոտեցնում են ամանի յեղին ու այն:



Նկ. 11. մրջյունն աշխատանի ժամանակ

- 1—բանվոր, 2—նրա գլուխը, 3—թրթուրը, 4—արուն, 5—հարսնյակը,
6—եղը, 7—բնուժներ, 8—ուղիկ:

Նեղից ներքեւ գցում, իսկ այստեղ խռնված մրջյունները հավաքում են շաքարը:

Մի այլ գիտնական վերցնում եւ մրջյունի մի քանի ձուտեր, տեղափորում նրանց բաժակի մեջ և այստեղ նստեցնում մի հասակավոր մրջյուն: Սա մի վորոշ ժամանակ պատվում եւ բաժակի մեջ և հետ վազում իր բունը: շուտով այստեղ նստեցնում են գեղի միասին մոտենում են ավարին և գործադրություն կատարում անանձին, պոկում նրան գնդասեղից ու քաշ տալիս մրջնանոցը:

Հոլորը բարձրանում են բաժակի մեջ, ամեն սեղը մի ձուտ և բռնում ծնոտներով ու շտապով հեռանում են իրենց թանգագին բերների հետ:

Ահա ձեզ մի ուրիշ փաստ ել:

Մի գիտնական քորոցով մի մեծ ճանձ եւ ամրացնում սեղանին և նրա մոտ մի մրջյուն թողնում: Մի քանի բոպե չարչարվում եւ մրջյունը, բայց վորսը պոկել չի կարողանում, հետ եւ վագում մրջնանոցը: Հետո կրկին վերադառնում եւ, բայց վոչ մենակ, այլ մի խումբ ընկերներով: Շտապում եւ գեղի ճանձը, խոկ նրա հետեւ վորոշ հետավորության վրա ծուլորեն քաշ են գալիս մի հետեւ վարպետները. վորսին գեռ չմոտեցած, տեսնում եւ ընքանի այլ մրջյունները. վորսին գեռ չմոտեցած, տեսնում եւ ընկերները հետ են դառել ու տուն են վերադառնում: Հետ եւ դառնում եւ մայր մրջյունը, անհանգիստ գես ու գեն վազվզում, բեխիկներով խփում ընկերներին: բայց կրկին նույն պատմությունը՝ ընկերները վերադառնում են գեղի ճանձը, բայց գեռ նրան չհասած, նորից հետ են քաշվում: Այն ժամանակ մայր մրջյունն սկսում եւ կատաղած քաշը ճանձին: Հաղթություն—ճանձի յերկու թաթերը պոկ յեկան ու մնացին նրա ծնոտներում: Սողում եւ մրջյունը գեղի ընկերները, քաշ տալիս թաթերը գեղի բուն, տեղավորում եւ վորտեղ վոր պետք եւ ու կրկին վերադառնում գեղի վորսը: Այս անգամ ընկերներն ել նրա հետ միասին մոտենում են ավարին և միահամուռ ուժերով կպչում ճանձին, պոկում նրան գնդասեղից ու քաշ տալիս մրջնանոցը:

Ահա վերջապես մի ուրիշ վոչ պակաս հետաքրքիր փաստ:

Մի գիտնականի բուխարու վրա, բաժակի մեջ գրված եր մի փունջ թարմ մանուշակ, մրջյունները (հենց են փոքրիկ շեկ մրջյունները, վորոնք ճաճախի հայտնվում են կենսամթերքներ կամ քաղցրավենիքներ պարունակող պահարաններում) զգացիկ ծաղիկների հոտը և գգվեցին գեղի բաժակը:

Շուտով նրա շուրջը հավաքվում եւ մրջյունների մի ամբողջ խումբ: Գիտնականը մտառվ թեթեվակի խփում եւ նրանց կույտին—նրանցից մեծ մասը փախչում եւ, բայց մի քանիսը սպանվում ու վիրափորվում են: Փախածները ճանապարհին պատահում են ընկերների նոր խմբի, վորոնք: բուխարու վրայով բարձրանում են գեղի մանուշակներով բաժակը: Նկատեալ յուրայիններին, գեղի ծաղիկները գնացող մրջյունները կանգ են առնում: Կանգնում են նաև փախածները: Այսիդ բալորն եղ բեխիկներով առափառ են իրար ու ցրվամ:

Բայց ավարի գնացող մըջյունները հազիվ եյին հասել այն տեղ, ուր ընկած եյին նրանց սպանված ընկերները, յերբ նրանց մեջ ինչ-վոր խիստ անհանգստություն նկատվեց. խառնվեցին իրար ու սկսեցին փախչել սարսափելի տեղից: Հետ դառնալիս նրանց պատահում ե մըջյունների մի այլ խումբ, վորն ուղեկորդում եր կրկին նույն տեղը, դեպի մանուշակները՝ քաղցր հյութի համար:

Իրար պատահած մըջյունները կրկին կանդ են առնում, կըրակին բեխղիկներով իրար ծեծում, վորից հետո նրանք բոլորն եւ միասին հետ են վերադառնում դեպի իրենց բունը:

Մեկ կամ յերկու ժամից հետո բուխարու վրա այլևս վոչ մի մըջյուն չի մնում: Իրենց ընկերներին հասած դժբախտությունից հետո նրանք համարյա մի շաբաթ բոլորովին չեյին յերեսում...

Մըջյունների մասին հենց նոր պատմած բոլոր գործողություններն իմաստ ունեն և կարող են բացատրվել միայն այն պայմանով, յեթե ընդունեյինք, վոր մըջյուններն ընդունակ են իրար բան հաղորդելու: Յեվ Վասմանը իրավացի յի, ինարկե, յերբ առնում ե, վոր մըջյունների միասնական գործունեյնության համար ծառայում ե «զգայական բեխիկային լեզուն»:

«Եեխիկներն իրար հպերու միջոցով—զրում ե այս գիտնականը—հարյուր հազարավոր մրցաւնեներ իրար նախշաւմ են, վորպես միենույն համայնքի անդամների, տարբերում են իրենց մեջ խառնված ամեն մի ոտար մըջյունի: Եեխիկների հարպածների միջոցով նրանք լուրեր են հաղորդաւմ իրար: Նույն բեխիկային լեզուն ծառայում ե վարդոս միջնորդ և մըջյունների ու ոտար ողնական մըջյունների, և մըջնային հյուրերի ու նրանց տերերի միջն («ողնականների» և «հյուրերի մասին» հետո):

Պետք ե հիշել և այս մըջյունների մի քանի ցեղեր կարող են ձայն հանել: Խսկապես սա շատ կարևոր ե—նշանակում է «ձայն» ունեցող այսպիսի մըջյուններն իրար բան են հաղորդում վոչ միայն բեխիկների միջոցով, այլ զանազան ձայնների ողնությամբ:

ԵՐԻՍ ՎԱՍՏԱՆԸ - ՄՐՋՑՈՒՆԻ ԿԵՆՅԱՂԻ ԳԻՏԱԿ

Ահա արդեն մի քանի անգամ ե, վոր հիշում եմ վասմանի անունը: Ո՞վ ե նա:

Նա քահանա յե, գիտուն աստվածաբան, յեկեղեցական և

և կտթոլիկական հավատի պաշտպան: Բայց դա չի խանգարել նրան կատարելու բազմաթիվ գիտական հետաքրքիր դիտողություններ:

Վասմանը մեր ժամանակի ամենակրթված նատուրալիստներից մեկն ե, լուրջ և տաղանդավոր դիտող¹), թեև կրօնին նվիրվածությունը յերբեմն խանգարում ե նրան ճիշտ յեզրակացություններ հանել իր գիտողություններից:

Բնագիտության մեջ նա սիրով ընտրել ե վոչ մեծ, ըայց շատ գրավիչ մի անկյուն, մըջյունների կյանքն ու սովորությունները:

Այսակեղ արդեն նա հիանալի վարպետ ե, այս գործում նա շատ քիչ արժանավոր մրցակիցներ ունի:

Սակայն, գրքերից, այլ գիտնականների պատմածներից, փորձից ու գիտողություններից վորեե բան սովորելլ գեռ քիչ եւ Երիխ Վասմանը տոկում եր շատ բան ձեռք բերել և ձեռք ե բերել ինքը. նա ստուգում եր, ուղղում, լրացնում այլ գիտնականների պատմածները, իր սեփական գիտողությունները կատարում, փորձեր անում, պրապտում ու գտնում շատ ուրիշ ու նորանոր քաներ: Դրա համար ել մըջյունների գործունեյության և սովորությունների մասին գրած նրա գրքույկները լի յեն հափշտակիչ հետաքրքրությամբ. այդ գրքույկները կարելի ե կրկին ու կրկին անգամներ կարդալ վորպես վեպ: Թող այս գըրքերի հեղինակը յերբեմն ել յեկեղեցու փառքի ու կաթոլիկական հավատի համար իմաստակություններ հնարի, բայց չե վոր գործում հատիկից այնքան ել գժվար չե տարբերել իսկ «հատիկները» վասմանի՝ մըջյունների մասին գրած գրքերում ուժեղ են առողջ:

Ահա ինչու յես հաճախ խոսել եմ և ելի կխոսեմ վասմանի մասին: Նախորդ գլուխը վերջանում ե այս գիտնականի՝ մըջյունների «բեխային լեզվի» մասին խոսքերով: Յեթե մըջյունների այդ լեզուն չիներ, շատ կդժվարանար նրանց միասնական աշխատանքը—ամեն մեկն իր ուղածն ու իր ձեռլ կաներ և կստացվեր վոչ թե ընդհանուր աշխատանք, այլ ինչ-վոր իսկական

¹ Նախորդ այն գիտնականն ե, վորն իր կյանքը նվիրել ե քննության ուսումնասիրությունը, ծագւմ է լատիներեն «նախորդա» խոսքից. վոր նշանակում ե բնություն, նույն նշանակությունն ունեն նաև բնախոս, բնախորդ խոսքերը:

«բաքելրնյան խառնակություն»։ Բայց իսկապես այդպիսի բան չկա. և հազարավոր փաստեր ցույց են տալիս, վորմը յունները մեծ մասամբ գործում են ընդհանուր համաձայնությամբ, միտինամօւր կերպով կատարելով իսկապես այն, ինչ վորամեն մի գեղքում անհրաժեշտ ե անել ընդհանուր համայնքի ոգտի համար։

Ահա անտառային մրջյունների մի խումբ անտառային ձանապարհով միտցած ուժերով գեղի իրենց բունն են գլորում մի մեծ աղբարզեց։ Վոչ հեռու այստեղից մի այլ խումբ մրջյուններ շինության համար քաշ են տալիս մի ամբողջ «գերան», վորամեն մի բեռնակրից հիսուն անգամ ավելի ծանր ե. ինչպես ենում աշխատանք։

Անկմրդ ձեռվ. աշխատում են «շունք տիրոջը չի ճանաչում» առածի պես։ Լսենք Վասմանին։

«Մի քանիսը, —ասում ենա, —առջեից են քաշում, մյուսները հետեւից հրում, իսկ յեթե վերջինները յերբեմն մի քանի բովե հակառակ ուղղությամբ են քաշում, այն ժամանակ նրանք խկույն նկատում են այդ և ճանապարհորդությունը վերսկսվում ե գեղի բունը տանող ուղղությամբ։


«Մի անգամ, —պատմում ե կրկին նույն Վասմանը, —մարդագետնի մրջյունների բնի մոտ յես դիտում եյի, ինչպես յերկու բանվոր մրջյուն միասին մի բզեղ եյին քաշ տալիս դեղի իրենց հողաթումը. գործն արագ թափով առաջ եր գնում առանց իրար խանգարող վորեե գեղքի, շնորհիվ այն բանի, վոր յերկու մըրշյունն ել հետ եյին վազում միևնույն արագությամբ¹⁾։

Վորպեսզի ավելի լավ կտրողանա հետեւել մրջյունների աշխատանքին ու կենցաղին, Վասմանը սարքել եր առանձին դիտողական բուն, վոր նկարված ե այստեղ (նկ. 12)։

Այդ, ինչպես տեսնում եք, բավական բարդ էնք ե. աջից յերկու տափակ արկղ, մեկը (H) ավելի մեծ, մյուսը (N) նրանից

¹⁾ Այս ասթիվ վագները հետեւալին ե առում։ «Մըրջյունները իրը քարշեալիս գեղի բունը վոչ թե իրար աջակցելով, այլ յուրաքանչյուրն իր համար. յեթե նրանց աշխատանքը ուղղության հմասով համենկում ե ու արտաքուատ համաձայնիցը աշխատանքի տպավորություն ե թողնում, այս քառանի համար ե, վոր յուրաքանչյուրի շարժման ուղղությունը միևնույնն ե, և կամ պատահաբար իրի մի ծայրում ավելի մրջյուն ե հակարգել քան մյուսում։

Փոքր։ Նրանց պատերը փայտից են, իսկ հատակն ու կտորն ապակուց, վորպեսզի տեսնվի, ինչ ե կատարվում ընում։ Յերկու արկղներն ել իրար հետ միացած են առակյա խողովակով։ Այդպիսի մի խողովակ ել գնում ե դեպի միմյանց վրա զրժած ոգտի համար։



Նկ. 12. Արհեստական դիտողական բուն։

յերկու սրվակները (տես նկարի ձախ մասը V և O տառերը)։ Վերկե սրվակի հատակի անցքի միջոցով նրանք իրար հետ հաղորդակցություն ունեն։ Մըրջյունների մեծ մասն ապրում ե յերկու արկղներում. նրանց հոգային աշխատանքների համար ներքին սրվակում (V) հող ե լցրած, իսկ վերկե սրվակում (O) մըրշյուններին դիտելու համար տրվում ե վորեե վորս, սրինակ թթվում, բզեղ, ճանձ և այլն։ Բայց այդպիսի արանից, այս սրվակին կից կա յերկու փոքր տեղ՝ մեկում (F) սովորաբար գանվում ե մեղք կամ շաքար, իսկ մյուսը (A) ծառայում ե մրջյուններին աղբի արկղի տեղ, ուր նրանք տանում են բնից գուրս բերած անպետք բաները։

Այդպիսի բնում հիմանալի կերպով կարելի ե հետեւիլ նրա բնակիչների բոլոր աշխատանքներին ու ժամանակ անցկացներու յեղանակին։ Կարելի յե և փորձել թե ինչպես կվարվեն նրանք այս կամ այն պայմաններում, վորոնց մեջ նրանց դնում ե ինքը դիտողը։

Զարմանալի չե, վոր այս բունը Վասմանին ահազին ծառայություն ե մատուցել և մրջյունների կյանքի վերաբերյալ շատ նոր ու հետաքրքիր բաներ պարզել նրա համար։ Այսուղ ի միջի այլց Վասմանը առիթ ե ունեցել ակնհայտ կերպով համոզվելու,

թե ինչպես և ընթանում այս փոքրիկ միջատների միասնական տիտանանքը:

Այս ընում ապրում եյին ալ-կարմիր մրջյուններ, նաև նրանց «ոգնականները»—անտառային, սեմոխրագույն և մարգագետնի մրջյուններ:

Բունը խառն եր: Յեվ այսուամենայնիվ նրա բոլոր բնակիչները՝ և տերերը, և ոգնականներն աշխատում եյին համերաշխ, յուրաքանչյուրը կատարելով այն աշխատանքը, վորն ավելի յեր համապատասխանում նրա բնածին նախումներին: Նրանց մեջ վորոշ չափով աշխատանքի բաժանում եր կատարվել—վորմանք կատարում եյին գլխավորապես այս, մյուսներն այն գործերը, բայց այս բանը չեր խանգարում նրանց անհրաժեշտության դեպքում կատարելու ամեն տեսակ աշխատանք: Այսպես, տերերը (ալ-կարմիր մրջյունները) գլխավորապես զբաղվում եյին մատղաշխինամքով, սեվերն ավելի սիրով բարձրանում եյին մեղքի ու շաքարի պահեստը (նկ. 12 F տառը), լցնում իրենց քուշը քաղցր ավարով, վերադառնում բունը և բաժանում ընկերներին կերակրի պաշարը. իսկ մարգագետնի և անտառային մրջյուններն առանձին ճարպկությամբ և համառությամբ ոգնում եյին տերերին բուներու և պահելու այն խոշոր կենդանի վորսերին, ինչպես, որինակ՝ ճանձեր կամ բզեզներ, վորոնց վասմանը յերբեմ-յերբեմ զցում եր բնի վերին սրվակը (նկ. 12 O տառը): Իսկ յերբ ուժեղ ծնոտներով ոժտված ալ-կարմիր տերը սպանում ու մանրացնում եր վորսը, այն ժամանակ նրա առանձին կտրները կրկին անտառային մրջյուն-ողնականներն եյին տուն տանում կամ ինքնուրույն կերպով, կամ ալ-կարմիր բանվոր մրջյունների հետ միասին: Մի անգամ վասմանը սրվակը (O) յերկու բզեզ և զցում, վորոնք հաճախ ապրում են մրջնանցներում վորպես «հյուր»: Այդ ժամանակ այստեղ գտնվում եր անտառային մի մրջյուն: Նկատելով հյուրին, նա սկսում է նրանցից մեկին քաշքըշել, մտադրվելով նրան տուն տանել: Յերկար չարչարվեց, բայց անհաջող—նրա ուժից վեր եր բեռը բարձրացնել:

«Հանկարծ,—պատմում ե վասմանը,—նա վտզեց ներքե, մտավ առաջին բունը և յերեք վայրկյանից հետո վերադարձավ այնտեղից անտառային չորս մրջյունի հետ: Հինգն ել իսկույն սկսեցին յերկու բզեզի տեղափոխությունը. միահամուռ կերպով նրանց յերկուսին ել բարձրացնելուց հետո, յերկուական մրջյուն մեկ-մեկ բզեզ վեր առած, առանում են գլխավոր բունը»:

Մրջյունները քիչ թշնամիներ չունեն. այդպիսիներից են, ինչպես ասել եմ, այլ ցեղերի մրջյունները: Թշնամիների հետ պետք ե կովել, նրանց մոտենալու մասին պետք ե ժամանակին նախազգուշացնել ընկերներին: Մրջյունն այդպես ել անում ե: Համայնքներն այդ նպատակով «պահակներ» են կանգնեցնում: Դիտողի աշխատանք կարող է կատարել ամեն մի բանվոր մրջյուն կամ «գինվոր»: Վտանգի մասին կարող է տեղեկացնել ամեն մեկը, նա այդ գործ մ:

Յեթե գիշատիչ ալ-կարմիր մրջյունների ջոկատը մոտենում ե գորշ-սևագույն մրջյունների բնին, այն ժամանակ առաջին սև մրջյունը, վոր նկատում ե թշնամուն, անմիջապես նետվում ե գեղպի բունը, բեկիների ուժեղ հարվածների միջոցով իր սարսափը հայտնում առաջին պատահած բանվորներին և այսպիսով ընդհանուր փախուստի աղդանշան տալիս: Թրթուրներն ու բոժոժ-ները վերեկի հարկերից խկույն տեղափոխվում են բնի ավելի խոր անցքերն ու սենյակները, իսկ յեթե թշնամին մուտք ե գործում և այս տեղերը, այն ժամանակ սեերը հակառակ կողմի ծածուկ անցքերով գլխապատառ ծլկվում են իրենց թանգագին բեռների հետ միասին, բարձրանում խոտերի ցողունների ու մացառների վրա, վորպեսզի յերեխաներին պաշտպանեն թշնամուց. յերբեմն նրանք դիմում են փրկության այս վերջին միջոցին սարսափելի լուրը լսելու հենց առաջին մուենտին և բոլորն ել նախքան թշնամու իրենց բնիրը ներխուժելը լեղապատառ փախուստի են դիմում (Վասման):

Պատահում ե այնպես, վոր բեկիների լեզուն բավարար չափով համոզեցուցիչ չի լինում: Այն ժամանակ, ինչպես հաստատում ե Վասմանը, նրանք դիմում են ծնոտների ողնության: «Յեթե,—ասում ենա, —սաստիկ գրգոված ալ-կարմիր կամ սև մրջյունին չի հաջողվում զրդելու իր ընկերոջը վորոշ աշխատանքի համար հետեւելու իրեն, այն ժամանակ հաճախ նա բռնում ե ընկերոջ վոտը կամ ծնոտը ու ուղղակի քաշ տալիս նրան այնտեղ, վորտեղ գտնվում ե իրեն գրավող առարկան»:

«Յերբ,—շարունակում ե վասմանը,—վերեկի բնից յես վորապում եյի մի քանի «պահակների» (նկ. 12 N տառը), հաճախ նկատում եյի, վոր յելքի մոտ նստած մրջյուններից մեկը ցատկում եր գեղպի մյուս մրջյունները և նախազգուշացնելու համար հարվածում նրանց իր բեկիներով: Մի ընկերակցի, յերբ նա

կամենում եր շտապ գուրս գնալ բնից, վոտքից բռնեցին և յետ քաշ տվին կասկածելի տնցի մօսից...»

Այդպես են փաստերը: Նրանց թիվը կարելի ե շատացնել: Բայց ինչու համար, մեր այստեղ պատմածներն ել բավական են: Բավական են, վորովհետեւ նրանք բոլորն ել ցույց են տալիս, վոր մրջուններն իսկապես կարողանում են միաբան գործել:

Ինչով ե բացատրվում նրանց այդ «կազմակերպվածությունը»: Այսաեղ գործում են միաժամանակ յերեք պատճառներ:

Առաջին, միենուոյն ցեղի մրջունները, ինչպես ասացի, ոժաված են այս կամ այն աշխատանքը կատարելու ընդունակությամբ: Հորքան նրանց այդ հակումներն իրար նման են լինում, նույնքան ել նրանց աշխատանքից նման պտուղներ են ստացվում—հոգուտ ամբողջ համայնքի:

Յերկրորդ, բնականից մրջունները յերեան են հանում նմանավելու ձգում—մեկի գործողություններն ընդորինակում են և մյուսները: Դա ել նպաստում ե նրանց աշխատանքի պլանաշափությանը և ընդհանրությանը, չիսանգարելով մրջուններին զանազանակերպել և փափոխել իրենց գործունեյթյունը համաձայն ժամանակի ու տեղի հանգամանքների:

Երեվ, վերջապես, մրջուններն իրար հետ հաղորդակցում են բեկինների ոգնությամբ: Իսկ դա միաբան քիչ թե շատ պլանավորված աշխատանք կատարելու մրջուններից մեկն ե:

ՔՈՉՎՈՐՆԵՐ ՈՒ ՎՈՐՍՈՐԴՆԵՐ

Կան մրջուններ, վորոնք ապրում են որեց-որ, բոլորովին չմոտահոգիելով յերկար ժամանակված, գոնե ձմեռվահամար ուտելու պաշար մթերելու մասին: Վաղվառը նրանց համար, գոյություն չունի: Այդպես են, որինակի համար կերպահայթայթող մրջունները:

Նրանք ապրում են Ամերիկայում, Ամազոն գետի ափերին: Նրանք մշտական բուն չունեն և իրենց ամբողջ կյանքն անց են կացնում արշավանքների մեջ:

Հանգ են առնում միայն գիշերները և վորպես հանգստյան վայր ընտրելով վորեւ հին փշակ, խիտ մացառ կամ ուղղակի ծառի մի մեծ ճյուղ—բանակ են դնում, հաճախ միանում ահագին խումբ կամ կենդանի խիտ կծիկ են կազմում և կախվում ճյուղից ու այդպես անցկացնում գիշերը, իսկ առավոտյան նրանց հետքնել չես գտնի—կրկին շարժվում են վորեւ տեղ կողոպուտ տնելու:

Ամբողջ բանակն ահա հավաքվել ե արշավանքի, շարվել են նրանք ուղիղ շարքերով, կարծես զինվորների գնդեր լինեն, և ձամբա յեն ընկել մթերք և ավար հափշտակելու: Գլխավոր բանակից բաժանվում են փոքրիկ ջոկատներ և ցրվում զանազան վզողմեր, ուտելու մի բան վորոնելու համար: Ուր ասես չեն մըտնում նրանք, վորպեսզի վորեւ բան գտնեն: Ամեն տեղ փնտում, ամենուրեք տնտղում—և քարերի տակ, և տերենների տակ, ամեն մի անկյուն, ամեն մի ձեղք, վոչ մի տեղ չեն թողնում:

Անա «խուզարկունների» ամբոխը կանգ ե առնում, տեսնում են ճյուղից կախ ընկած մի մեծ թրթուր, վրա են տալիս չորս կողմից իսկույն, այնքան են քաշքում, կծոտում նրան, մինչև վոր նա իսպառ սատկում ե: Բայց վորսը տանել նրանց չի հաջողվում: «Խուզարկուններից յերկուսը կամ յերեքն շտապում են գլխավոր բանակ և մի առ ժամանակից հետո յետ են վերադառնում մի քանի տասնյակ այլ մրջուննի հետ: Նրանց համար այժմ զժվար չե բարձրացնել նույնիսկ գրանից ավելի մեծ թրթուրի: Այսուղ մնացած մրջուններն ել անգործ չեյին նստել—նրանք վորսը բաժանել եյին մի քանի մասերի: Վերջապես նրանք բուջորն ել միասին ծնոտներով բռնում են բաժան-բաժան մասերը և տալիս նրանց սպասող ընկերների մոտ:

Ճանապարհին նրանք պատահում են խուզարկունների փոքրիկ այլ ջոկատների—մեկը ձեռք ե բերել ինչ վոր հաստափոր մի ձանձ, մյուսը հազիվ հազ քաշ ե տալիս մի ահագին փայտահատքեղ, յերբորդը ինամքով տանում ե ինչ վոր սպիտակ վորդեր, վորոնց հանել ե նա կրեաների քար ու քանդ արած բնից: Բուջորն ել շտապում են հանձնելու ուր վոր պետք ե իրենց թանգագին բեռը:

Հանկարծ վորտեղից վոր ե հայտնվում են մի քանի տասնյակ բեռնակիրներ, վերցնում են բերված վորսն ու քաշ տալիս բանակի ծայրը: Յեվ կրկին նրանք շարժվում են առաջ, նորից կանգառնում, նոր հարձակումներ կատարում, նոր հարձակումներ ու թալաններ անում:

Երեվ այսպես, ամբողջ ժամանակ հանգստանալով միայն գի-

Նկ.13. Ամազոնյան քոչվոր մրջունը:

շերները, Ամազոն գետի ափերով թափառում են կեր հայթայթով մրջունների աճապին գնդեր—քարուքանդ անում ոտար բներ, վոչչացնում հազարավոր ամեն տեսակ միջատներ, խժում են բղեներ, ձանձեր, վորդեր, խխունջներ և այլ արարածներ:

Քոչվոր մրջուններ կան և Հնդկաստանում և Աֆրիկայի բնակիչները անվանում են նրանց վորսկան մրջուններ կամ «սիաֆու» տեղական լեզվով:

Մրջունների կենցաղին լավատեղյալ գերմանացի գիտնական Եշերիխը գեղեցիկ կերպով նկարագրում է «սիաֆու» մրջունի կյանքը: Աչա մի կտոր նրա պատմածից—կարդացեք:

«Անդիմադրելի հեղեղի նման, հաճախ կանոնավոր ռազմական գորասյուներով՝ 6—10 մրջուն ամեն մի շարքում, յերբեմն ել անկարգ, խառնիճաղանձ խմբերով չափչփում են անտառներնու բաց տեղերը և հարձակվում ճանապարհին պատահող ամեն մի կենդանի արարածի վրա: Վոչ մի կենդանի, ամենափոքրից սկսած մինչև ամենախոշորը, ապահովված չի նրանց հարձակումից: Վորսկան մրջունները հաճախակի այցելում են նաև մարդկային բնակավայրերը, ըստվորում վոչնչացնում են բավականաչափ մասը կինդանիներ, առանձնապես՝ ընտանի թոչուններ: Զիերը, եղերը, ջորիները նրանց կծածներից կատաղում են և այդ ժամանակ նրանց պետք ե զոմերից դուրս հանել, փոքր յերեխանեներին պետք ե հեռու պահել նրանցից, այլապես նրանց սպառնում ե առնջալից մահը!»

«Սակայն վորքան ել վտանգավոր ու ձանձրացող են «սիաֆունները», այսուամենայնիվ նրանց զործունեյությունն ունի և իր լավ կողմերը: Այն բնակարանները, վորտեղ մտնում են «սիաֆունները», հիմնավորապես մաքրվում են այնտեղ բուն գրած ամեն տեսակ միջատներից, տերմիտներից, ականջմտնուկներից, ծղրիդներից, հազարությաններից և այլն: Մրջունները նրանց ամբողջապես վոչնչացնում են ավելի լավ, քան մարդկարող և անել իր ձեռքի տակ յեղած բոլոր միջոցներով»:

Ամեն տեսակ կուլտուրական տունկերի, այգիների, բանջարանոցների համար «սիաֆուններն» անփոխարինելի յեն:

«Նրանք ամենակարճ ժամանակամիջոցում այնպիսի անգիտությամբ են վոչնչացնում պտղատու ծառերի ու բանջարանոցների բոլոր վնասատուներին, ինչպես չեն կարող անել ընդհանուր ջանքերով մարդու միջատակեր ողնականները—թոչունները, մողեսները, դոդոշները և այլն...»

Քոչվոր մրջունների վոչ բոլոր ցեղերն են թափառում և որը ցերեկով կողովուտ անում: Նրանցից մի քանիսը գերադա-

սում են այդ բանը գիշերները կատարել, իսկ յեթե ցերեկը նաև նապարհորդում ել են, այդ անում են վոչ բացեկերաց, այլ թագուն, իրենց ճանապարհը գետնի տակից կցելով, յերկար տունելներ փորեկով:

«Յերբեմն,—գրում ե Եշերիխը,—նրանք թագուն ճանապարհների փոխարեն ոգտվում են և բաց ճանապարհներով: մինչև անգամ այն ցեղերը, վորոնք թափառում են տունց թագնվելու պաշտպանության կարիք զգացող վայրերում յերբեմն կառուցում են ծածկված ված անցքեր:

«Յերբեմն միայն կողքի պատեր են շինվում, վորոնց կատարից դեպի ներքեւ են ձգվում զինվորների բազմաթիվ շարքեր: Նրանք գլուխները գեմ են անում իրար ու կանչում, կարծես կենդանի թափանցիկ տունել:

«Վորտեղ չկան վոչ ծածկոցներ, վոչ թմբեր, այնտեղ յերկու կողմից ել շարքում են զինվոր մրջունների բազմաթիվ ու խիտ շարքեր, կարծես ճանապարհի յերկու կողքով յերկշար զինվորներ լինեն կանդամած պաշտպաննելու իրենց միջով անցնող բանվորների խիտ շարքը»...

Բոլոր այդ մրջուններով (նրանց կարելի և անվանել և մրջուն վորտերներ, մրջուն հավատակիչներ, ինչպես կուգենաք) չեն նմանվում մի շարք այլ մրջունների, վորոնք ավելի խաղաղ կյանք են վարում, պատերազմում են հազվագյուտ գեպքում, իրենց համար մշտական բներ են շինում, ուր հավաքում են զանազան հատիկների մեծ պաշար—ձմեռվա կամ ընդհանրապես այլեալ հեղեղ համար: Մրջունները շատ հաճախ հատիկները քաշ են տալիս իրենց բները ուղղակի գաշտերից ու դարսում այնտեղ առանձին սենյակներում, վորոնց կարելի յեն համեմատել մեր շտեմարանների հետ: Հավաքված հատիկների պաշտպանները յերբեմն հսկայական չափերի յեն հասնում:

ՃՆՉՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ, ՏԵՐԵՎԱՇԱՏԱՑՆԵՐԸ

Մրջունների մի քանի ցեղեր հավաքում են զանազան խոտերի սերմեր, վոր իրենք են պոկում բույսերից: Դրա համար ել նրանց անվանել են հնձվոր մրջուններ:

Հենց վոր հնձվորների սերմերը հասունանում են,



Նկ. 14. Վորսկան մրջուն:

Նրանք մեկնում են հնձիւ Այսաեղ նրանց մի մասը բարձրանում
և բույսերի կատարը, իսկ մյուսները մնում են ներքնում:

Բույսերի վրա նստածները ծնոտներով կրծում—կտրում են
սերմերը և ներքն գցում, իսկ ներքեռում յեղածները հավաքում են
այդ սերմերն ու տաճում իրենց բունը:

Ահա հնձվորների մի ամբողջ շարան, քաշ են տալիս նրանք
սերմերը գլխներից վերև պահած, փորպեսզի պատահարար չդիպ-
չեն վորևե բանի ու գլորվեն իրենց բեռան հետ, իսկ դեմ հան-
դիման գալիս ե մըջյունների մի այլ խումբ—դատարկ ձեռներով.
Նրանք հենց նոր են հատիկներն իրենց բները հասցրել և այժմ
յետ են դառնում նոր ավար տանելու: Մինչ այդ բույսերի վրա
նստածները շարունակում են իրենց գործը, արագությամբ գոր-
ծում են ծնոտներով, զգույշ կտրում հատիկները և գցում գե-
տին: Նոր վերադարձողները վերցնում են հատիկներն ու կրկին
հեռանում: Սակայն ծանր բեռից պարզապես հոգնած լինելով
նրանք իրենց բեռը կես ճանապարհին դարսում—թողնում են,
իսկ իրենք կրկին վերադարձնում հնձատեղ: Շուտով վրա յե հաս-
նում մըջյունների նոր խումբ: Նրանք հավաքում են ճանապար-
հին դարսած հատիկներն ու բոլորը միասին ուղեկորվում գեպի
տուն: Յերբ բոլոր հատիկները հասցնում են բնի մոտ, մըջյուն-
ներն սկսում են հատիկները պատիճանանել, վորից հետո միայն
լցնում են ամբարը: Պատիճներն ավելում, կիսուլի են կազմում, իսկ
քամին ցիր ու ցան ե անում այն:

Հատիկի պաշարները մըջյունների համար մեծ գլխացա-
վանք են: Յերբ նրանք նկատում են, վոր հատիկները խոնավա-
ցել են, դրանք իսկույն դուրս են բերում արևի տակչորացնելու:
Իսկ յեթե բանվորները մոռացության տան, վոր շատ հազվադեպ
ե, և հատիկներն ամբարում սկսեն ծիկլ, այս դեպքում ել ինչ վոր
հոտառությամբ կամ բնազդով կարողանում են փորձանքից դուրս
գալ. նրանք կրծում են սերմերի ծիկլն ու սերմերը դադարում
են աճելուց:

Պատահում ե, վոր հատիկները տեղափոխելիս մըջյունը
նրանց մի մասը պատահարար բնի մոտ թափթփում ե: Հատիկ-
ները, ծլում են, հասկալարում, հասունանում ու թափփում, իսկ
մեր ակամա հողագործը, մեկին չօրս կամ հինգ բերք ստանալով՝
հոգատարությամբ տանում, տեղափորում ե իր ամբարներում: Ամազոն գետի ափերին, հենց այնտեղ, ուր ապրում են սազմիկ
մըջյունների հայթայթողները, ապրում ե սերե կրծող կամ

Հերեահատ-մըջյուն կոչված առանձին ցեղը (նկ. 15): Դուք իս-
կույն կհասկանաք—ինչու են նրանք այդ անունն ստացելք:
Ահա տերև կրծողների մի ամբողջ բազմություն գուրս թափ-



Նկ. 15. Մըջյուն տերեահատներն աշխատելիութեա:

լեց բնից, գասափորվեց կարգերով և յերկար շարանով ծանոթ,
ապ հարթած ճանապարհով ուղեկորվեց գեպի մի մեծ ծառ, վոր
իրենց բնից հիսուն սաժեն հեռու. և գտնվում: Հասնելով ծառին,
սրա բնի վրայով մազլցեցին գեպի վեր և ցրվեցին ճյուղերի վրա.
մի քանի ըսպեցից հետո նրանք բոլորն ել գործի յեն անցնում:
Մըջյուններից մեկը տեղափորվեց տերե վրա, իր մեծ սուր ծնոտ-

ներով տեղ տեղ ծակծկեց, կտրեց, հետո ծնոտով ամուս բռնեց տերեի յեզրից ու մի քանի անգամ ուժգին ձգելով՝ մի կտոր պոկեց:

Նույն բանն սկսեցին անել և մյուսները: Տերեների պոկված կտորներն սկսեցին թափվել գետնի վրա: Դեռ ծառի տակ յեղած մրջյուններն սկսեցին հավաքել նրանց: Տերեւահատների մեծ մասն էր վորսը ծառից ինքն եր իջեցնում և շարունակում քաշ առ գեղի իր բունը: Շուտով ծառից դեպի իրենց բնակարանը ձըդվում ե նրանց յերկար շարանը, ծանրաբեռնված տերեների կտորներով, բռնած գլուխներից բարձր: Կանաչ հեղեղի նման գնում են նրանք հարթված ճանապարհի մի կողմով, իսկ նրանց ընդառաջ, ճանապարհի մյուս կողքով, անկարգ բազմությամբ վագում են այլ տերեւահատներ, վորոնք վերադառնում են բնից՝ նոր շալակ առանելու:

Հանկարծ բեռան գնացողները կանգ առան, մի ինչ վոր կտակասեր¹⁾, ցանկանալով իմանալ թե ինչպես կվարվեն մրջյունները, ճանապարհը մի հաստ ճյուղով փակում ե:

Չորս կողմը խիտ կանաչ ե, վոչ աչ կարելի ե գնար, վոչ ձախ, իսկ առջեկից խանգարում ե հսկայական ճյուղը, վորը կիալ կպել ե գետնին: Ի՞նչ պետք ե անել: Առաջից գնացողները փորձեցին ճյուղի տակից սողալ կամ ճյուղի վրայով անցնել բայց չհաջողվեց—բեռը խանգարում եր: Այն ժամանակ առաջընթացներից մի քանիսը տերեները դրին գետին: Մինույնն արին և մյուսներից շատերը, հետո մի խումբ անցավ ճյուղի մյուս կողմը առանց բեռի, այդ նրանց համար գժվար չեր, իսկ մյուս մասը մնաց իր տեղում: Յեկ ահա արգելքի յերկու կողմից ել սկսում ե աշխատանքը յեռալ—տերեւահատներն սկսեցին անցք փորել: Յերտունելը փորված եր, մրջյունները վերցնելով իրենց բեռները, առաջ գնացին:

Յերբ բոլոր տերեներն արդին տեղափոխվել եյին բնի ներսը, այստեղ ել տերեների հետ այլ աշխատանք են սկսում փոքրիկ բանվոր մրջյունները, վորոնք իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում գետնի տակ և բնից դուրս են գալիս միայն իրենց հոգնած անգամները կարգի բերելու, մտքուր ող շնչելու և մի քեչ ել աղատորեն զվարձանալու համար: Նրանք սկսեցին տերեները կտրատել մանրիկ կտորների, և յերբ ամբողջն արդեն կտրված եր, ինչպես վոր սիետք եր, ավարը կանոնավոր կերպով դարսեցին իրենց ամբարներում:

¹⁾ Դա գիտական, գոկտոր ելլենորֆն ե, վոր ուշագրությամբ ուսումնասիրել ե տերեւահատ մրջյունների վարք ու բարք:

Եւ, հետո ի՞նչ: Ի՞նչի յեն պետք դրանք տերեւահատներին: Միթե միջյուններն ուսումն են նրանց, բնավլ վոչ: Բանն այն ե, վոր մանրացված տերեների վրա շատ լավ ածում են հատուկ առեսակի սնկեր, վորոնցով տերեւահատները կերակրվում են: Նշանակում ե, այդ մրջյունների համար կարենոր են վոչ թե տերեները, այլ այն սնկերը, վորոնք հեշտությամբ բազմանում են մանրացված տերեների վրա: Ահա և բոլորը:

ԱՆԱՍՆԱԳԱՀՆԵՐ

«Յեթե կան վորսորդ և հսձոր մրջյուններ, ապա ինչու չպետք ե լինեն և մրջյունահամապահներ», կարող ե կատակով հարց տալ ընթնցողը: Կան և այդպիսիները, կպատասխանեմ յես նրանց լրջությամբ: Կամենում եք լսել, այդինչ յեղջյուրավոր անսառւն ե, վոր պահում են մրջյունների շատ ցեղեր: Ի մի ջի այլոց, մենք նրա մասին թեթևակի հիշել ենք:

Գոյյություն ունի մի փոքրիկ աննշան կանաչագույն բլիճ կամ արոտավոջիլ անունով միջատ: Դա հենց ինքը մրջնանոցի «կթի անսառւնն ե», դրա համար ել լվիճին անվանում են մըրջյունների կով:

Այս միջատի (նկ. 16) մարմնի յետեի մասի վրա (ավելի լավ կիմի գիտել խոշորացույցով) կան յերկու փոքրիկ խողովակներ, վորոնցից յերբեմն-յերբեմն արտաթորագում են մածուցիկ մածուցիկ ու քաղցրավուն հեղուկ. մըրջյուններն այդ հեղուկը շատ են սիրում: Հետաքրքրելու ինչպես ե մրջյունը ինսամում լվիճին: Ամեն տեսակ բգեցների այդ սիրահար-մրջյունը վոչ միայն չի ուսումն լվիճներին, այլև մեծ յեղջուղով պաշտպանում ե նրանց այլ միջատներից, վորոնք լվիճներին գործ են ածում վորպես նկ. 16. Լվիճ (վարգատուիճ)



Նայեցեք մրջյունների ինչ ահագին բազմություն ե հավաքվել այս փոքրիկ բույսի վրա: Ի՞նչն ե հրապուրում նրանց այնատեղ: Ինչու նրանք առնասարակ մեծ ուրախությամբ բարձրանուն են շատ բույսերի վրա: Պարզ ե, վորովհետեւ այստեղ տերեւահատները մրջյունների վարքում մի մըրջալորված են բազմաթիվ լվիճներ: Ահա մոտ ե վազում մի մըրջյուններից մեկին և սկսում լվիճը կանոնավոր կտրված էր յետեի փոքրիկ խողովակից

բաց թողեց մի կաթիլ արցունքի նման թափանցիկ քազցը հեղուկ. մրջյունը վերցրեց այն և, ըստ յերեւոյթին, մեծ քավականությամբ կուլ տվեց: Մի քանի անգամնույնը կրկնելով և կշատնալով՝ միքիչ ել այդ նյութից առնում ե բերանն ու վազում մրջնանոց, վորտեղ նրան սպասում են արու մրջյունները, եղերը, յերեխաները, վորոնք նույնպես սիրահար են լվիճի «կաթին»: Բայց այդ բոլորը դեռ այնքան ել հետաքրքիր չե: Կարեռն այն և, վոր մրջյունն «արածեցնում ե» իր կթի անասուններին: Լվիճներին նա ոգտագործած ճյուղերից փոխադրում ե դեռ թարժայուղերի վրա, վորտեղ նրանք կարող են գտնել թարժ ու համով կեր, և նա փոխագրում ե նրանց իր բնակարանը: Տանը նույնպիսի հոգածարությամբ ե վերաբերվում ըլլիճներին, ինչպես և գուրսը, մշտապես հայթայթելով նրանց թարժու համով կեր:

Բայց դա դեռ բոլորը չե: Մըրջյունը լվիճների ձվերը փոխադրում ե իր բունը և յերը լվիճները դուրս են գալիս ձվերից, այն ժամանակ նրանց փոխադրում ե դուրս: Տեղափորելով նրանց բնիմուտ յեղած բույսերի վրա, մըրջյունը հողի պարապով՝ շրջապատում ե նրանց—շինելով գոմիկակի նման մի բան, վորտեղ լվիճներն ստանում են լավ խընամք, թարմ կեր և պաշտպանվում թշնամիներից: Սակայն յերբեմն մրջյունները լվիճների համար առանձին շինքեր են սարքում վոչ թե իրենց բների մոտ, այլ ոյն բույսերի վրա, վորտեղ ավելի սիրով են արածում նրանց «կթի անտառնները»:

Այսպես, որինակ՝ Շարլ Բոննե անունով մի հայտնի գիտնական



Ակ. 17. Մըրջյուններն արածում են լվիճներով բռնված ճյուղի վրա:

մի անդամ ծիծեռնախոտի ցողունի վրա գտել ե մի փոքրիկ գունդ՝ վոր մրջյունները լինել եյին հողից: Մաս-մաս քանդելով այդ տարրինակ շենքը, բոննեն նրա մեջ գտնում ե կամարաձև առաստաղով հողած ու կոկ մի փոքրիկ սենյակ: Սենյակում աեղավորված եր լվիճների մի բավական մեծ ընտանիք, վորտեղ մրջյունները դեռ ու գեն եյին վազվզում: Պարզ բան ե, վոր այդ շենքը նրանք շինել եյին լվիճների համար, վորոնց յերեմն-յերբեմն մրջյուններն այցելում եյին քազցը հյութի համար: Գնդաձև խրձիթում տեղափորված լվիճներն ոգտվում եյին վոչ միայն լավ հսկողությամբ, այլև լիովին պաշտպանված եյին թշնամիներից՝ վորովհետև խրձիթում բացի մրջյուններից ու լվիճներից վոչ վոր մուտք գործել չեր կարող: Վասմանն առում լվիճներից վոչ վոր մուտք գործել չեր կարող: Վասմանն առում ե, վոր իր մոտ մինչեւ այժմ ել պահվում ե լվիճների համար հոգից շինված ընկույզի չափ մի տնակ, և պետք ե ճիշտն ասել, լվիճները լիովի վարձատրում են իրենց տերերի քաշած բոլոր հոգմերը: Վորպեսզի դուք մրջյունների և լվիճների մեջ յեղած հարաբերությունների մասին մինչև այժմ պատմածները հերքիալ չհամարեք, մեջ կրեմ նշանավոր բնագետ Դարվինի հետաքրքիթ գիտողությունը: Ահա ինչ ե ասում նա. «Թրթնջուկի վրա նըստած մի խումբ լվիճների միջից բոլոր մրջյուններին յես հեռացրի և մի քանի ժամ թույլ չտվի նրանց խառնվել լվիճների մեջ: Այդ ժամանակն անցնելուց հետո յես համոզվեցի, վոր լվիճները ցանկանում են արտաթորել իրենց հյութը: Յես միառժամանակ խոշորացույցով դիտում եյի, բայց վոչվոք չարտաթորեց այդ հյութը: Հետո յես սկսեցի մազի թելով դիպչել լվիճներին և խտուտ ածել նրանց մոտավորապես այնպես, ինչպես այդ անումնեն մրջյուններն իրենց բեխիկներով, բայց վոչ մեկը բաց չթողեց իր հյութը: Դրանից հետո յես մի մրջյունի թողի նրանց մոտ՝ նայելով լվիճների շուրջը կտարած նրա գործողություններին:



«Պարզվեց, վոր նա զգաց, թե ինչպիսի հարուստ հոտի մեջ ե ընկել Նա իսկույն սկսեց իր բեխիկներով խտաղել սկզբում մի լվիճի փորիկը, չետո յերկրորդին և ամեն մեկը, հենց վոր մրջյունը շոշափում եր նրանց բեխիկներով, իսկույն բարձրացնում եր իր փորիկն ու բաց թողնում մի կաթիլ քազցը հեղուկ, վորն ագաւությամբ լվանում եր մրջյունը:

«Նույնիսկ ամենաջահել լվիճներն ել այդպես եյին վարվում»: Բացի լվիճներից, մրջյունների բներում դուք հաճախ կպատճենեք և այլ միջամաների, որինակ՝ բղեղների, վորոնց նույնպես առանձին յե անվանել մրջյունների ընտանի կենդանիներ:

Այդ բգեղներն իրենց տերերի հետ ապրում են: Կողք-կողքի՝ մրջյունները նրանց մտքուր ու խնամքով են պահում, կերակ-

բում են ունեցածի չափ և պաշտպանում թշնամիներից: Իսկ ինչն համար. կարելի՞ ե արդյոք յենթաղը վոր նրանց այդ հռագատարությունն անշահասեր ե, վոչ, իհարկե:

Մըջյունի հաշվին ապրող բղկաները լիլիճների նման արտադրում են հոտավետ, դուրեկան համով մի հեղուկ՝ զարմանալի չե ուրեմն, վոր մըջյունը խնամքով ու հոգատարությամբ ե վերաբերվում դեպի նա:



Նկ. 18. Մըջյունը և իր բարեկամներց մեկը՝ ձախից (վերևում) մըջյունը հերալդում և բղեղին, աջից՝ բղեղը շոյում և մըջյունին:

Որիգինալ և վերին աստիճանի հետաքրքիր և մըջյունների այդ ցեղը: Նրա բունը գտնվում ե գետնի տակ, իսկ նրա բավական բազմաքանակ բնակչությունը սովորաբար բաղկացած և արուներից և եգերից, բանվորներից և ռազմիկներից: Բայց այստեղ բանվորների մեջ իր արտաքին շատ տարրորինակ տեսքով ուշագրություն և գրավում մի առանձին «գաս»: անմիջապես աշքի յերնկնում նրանց մեջ սիսեռի կամ բալի մեծության կլոր փորը, իսկ գլուխն ու կուրծքը, վոր նման են սովորական բանվոր մըջյուններին, շատ ծիծաղելի յենթվում, փորի հետ համեմատած, իրենց փոքրությամբ: Ամրող և սմբով կզած իրենց մեծ, արձաւ տան առաստաղից, համբերությամբ համարյա անշարժ կախված են նրանք:

Ցեթե նրանցից մեկն ու մեկը պատահմամբ ցած ընկնի հատակի վրա, այնպես ել անշարժ կմնա պառկած անողնական, փորի ծանրությունից չկարողանալով շարժիլ յել (նկ. 19):

Բայց ահա աշունը վրա յե հասնում: Ուտելիքը պակասում եւ Մըջնանոցի ազգաբնակչությունն սկսում և արգեն սով

զգալ: Այն ժամանակ բանվորները փոքր խմբերով կամ առանձինութեավում են գեղագի իրենց հաստավոր ընկերները, բերանները գնում նշանց բերաններին ու... հագեցնում քաղցի զգացողությունը: Ի՞նչպես, ինչո՞ւ համար:

Դուք գլուխ ընկաք, իհարկե:



Նկ. 19. Մեջութիւն մեղրատունները բնի ներբում հանգստանում են:

Առաստաղից կախված մըջյուններն ուտելիքի առատ ժամանակ տողացրել են իրենց փորին այն վճիռ մեղրանման հյութով, փորը թափանցում և փորիկի պինդ խիտինե մասնիկների արանքում ձգված բարակ թաղանթի միջով:

Այս հյութը հավաքել են կազմու տերենների վրա աճող փոքր «ընկույզիկներից», վորոնք հաճախ պատահում են Հյութսային Ամերիկայում: Ահա ինչու բանվոր մըջյունների այս որի գինալ «գասը» կոչվում և մեղրատու:

Վորքան վոր սովորական բանվոր մըջյունները դուրս են քաշում ուտելիքն իրենց «մեղրի կենդանի տակառիկներից», նույն չափով մեղրատունների փորի կոչտ հոգերի արանքում յեղած թաղանթը կծկվում ե, փորն իջնում և մեղրատուն սովորական բանվոր-մըջյունի տեսքն ե ընդունում:

Մի ժամանակ կարծում եյին, թի մեղրատունները պատահում են միայն Հյութսային Ամերիկայում և այն ել հազվագյուտ զեպքում: Բայց Զոն Լեբրուլը՝ մըջյունների, իշամեղունների կրետների և մեղունների հայտնի մասնագետներից մեկը՝ մեղրատուններ գտել ե Ավստրալիայում, իսկ նշանավոր Ֆորելը հայտ-

նաբերել և նրանց և Հարավային Աֆրիկայում: Վերջապես պարզ գել ե, վոր մեղրատուների առանձին ցեղեր կան և մեզ մոտ կովկասում ու Ղրիմում:

Այս գյուտը կատարել ե մեր հայտնի կենդանաբան Եղիաբետ Մայերը վոչ վաղուց, 1917 և 1919 թվերին:

Մի փոքր բան պատմեմ հետաքրքիր այս բնագետի դիտություններից, վորը միքանի տարի ուսումնասիրել ե իր մեղրատուներին և՝ ազատ դրությամբ, նրանց կյանքի բնական պայմաններում, և՛ զանազան դրությամբ իր տանը, արհեստական բներում:

Մեղրատունների կովկասյան ցեղը, վոր տարբերվում է ամերիկականից, ապրում ե փոքր գաղութներով, բուն և դնում գետնի տակ և բավական հաճախ պատահում է Թբիլիսիի շրջակայքում: Նրա բնակչության բանվորական մասը բաշկացած է մեծ մասամբ մանրիկ մրջուններից, վորոնց մեջ պարզ ու արեգոտ որին, յերբ նրանք բազմությամբ դուրս են թափվում բնից, կարելի յև նկատել և ավելի խոշոր տեսակներ: Վերջիններն այնպան ել շարժուն ու գործունյա չեն, ինչպես առաջինները, չնայած չեն խուսափում ամեն բանվոր մրջունի սովորական պայմունքներից, սակայն կարևորն այդ չե:

Առաջինը Մեյերը ուշազրություն դարձեց այն բանի վրա, վոր այս մրջուններից մի քանիսիւթեանը մանրերը և թե խոշորաները, բշտիկանման փորիկներ ունեն: Իսկ յերբ ավելի մոտիկից ծանոթացավ նրանց, այն ժամանակ բոլորովին պարզվեց, վոր գրանք ել մեղրատունների մի տեսակն են, և վոր նրանց փորիկը ցված և հստակ, սովորաբար անգույն, իսկ յերբեմն ել գեղնավուն հեղուկով: Դրա հետ միասին յերևաց, վոր «մեղրի տակառիկների» գերը կատարում են մեծ մասամբ խոշոր բանվորները, վորոնք կամ իրենք են առտեսում «մեղրը», կամ վոր հաճախ ե պատահում, այն ստանում են մանր բանվորներից:

Ի՞նչպիսի մեղր ե այդ և վերտեղից ե ստացվում:

Մեյերը կարծում ե, թե այդ նույն քաղցր հյութն ե, ինչ վոր արտադրում են լիինները: Բանվորները ուղեվորվելով լիիններով ծածկված արտատեղը, «կթում են» իրենց «կովկաներին», հետո առւն վերադառնում մեղրի մեծ պաշարով, վորից և բաժին են հանում իրենց ընկերներին: Ընդ ոմին նրանք առանձնապես յեռանդավ կերակրում են ամենից ավելի խուսը և ամենից տեղին շատակեր ընկերներին: Այս վերջիններն ել գառնում են «մեղր

տակառներ», վորոնցից և «կյանքի ծանր բոպեներին» բանվորներն ստանում են «մեղրի» անհրաժեշտ բաժինը...

Մեղրատունների կովկասյան ցեղը պատահում ե Ղրիմում, բայց ավելի սակագ: Այստեղ գերազում ե մի այլ տեսակը, վորն ապրում ե նաև կովկասում: Մեյերը մի անգամ նրան գտել և Միաժերապովի շրջակայքում և Ղրիմի հարավային ափի մի քանի վայրերում:

Այս ցեղը նույնպես սովորաբար ապրում ե հողի մեջ, վորեավե քարի տակ. նրա բանվոր բնակչությունը կազմված է տարբեր մեծության անհատներից. նրանք բոլորն ել լցվում են «մեղրով»: Սակայն այստեղ ել «մեղրի» տակառիկների գերն ընկնում ե խոշոր բանվորների վրա, վորոնք կամ իրենք են քաղցր հյութի մեծ պաշար պատրաստում, կամ այն ստանում են մյուս մըրջուններից:

Սովորական բանվորների մեջ, ըստ յերևույթին, կան այնպիսինները, վորոնք սիրում են «կենդանի տակառները» «մեղրով» լցնել, այսպես ասած, ամբողջ համայնքի բարորության համար: Այդ տեսակիտից Մեյերի բազմաթիվ դիտողություններից մեկն առանձնապես հետաքրքիր եւ:

Ինչպես արդեն ասել եմ, այս գիտնականն իր դիտողությունների մի մասը կատարում եր արհեստական դիտողական բներում, վորոնք հենց ինքը վարպետորեն պատրաստում եր գիպասից, փայտից և ապակուց: յես նրանցից շատերը տեսել եմ նրա աշխատանքի սեղանի և պատուհանի վրա: Բայց այս անգամ գործը տեղի յեր ունենում սովորական, տափակ ապակյա ամանի մեջ:

Նրա մեջ գտնվում եր Ղրիմի մեղրատունների մի փոքրիկ գաղութ: Նրանց թիվը քսանի յեր հասնում, բոլորն ել տարբեր մեծության բանվորները: Ամանը կիսով չափ ստերի տեղ եր. այստեղ հավաքված եյին մրջունները, իսկ ամանի չստվերած մասում, ուղղակի նրա հատակի վրա, Մեյերը դրել եր մի քանի կաթիլ շաքարաջուր: Յեվ ահա թե ինչ պատահեց:

«Զորս փոքրիկ մրջուններ շուտով մոտեցան շաքարաջրին, խմեցին, վազեցին ամանի տեղած մասը, ուր գտնվում եյին մասցած բանվորները և արագությամբ հետ վերադարձան. Կրկն գեպի այդ կաթիլները: Հետո, յերբ փոքրիկ բանվորներից մեկը, շաքարաջուր վերցնելով, կրկն վերադարձավ ամանի ստվերած մասը, յես, գրում ե Մեյերը, —ամանից հեռացրի ստվերող ծածկոցը և տեսա, ինչպես նա ուղեվորվեց գեպի ամանի մեջտեղը

Խիտառիսիտ նստած խոշոր մրջյունների խումբը—իր հետ բերած շաքարաջուրը տալիս եր նրանց և յեթե խոշոր բանվորներից մեկնուում էլլը չեր նկատում իրեն, նա իր շոշափուկների միքանի արագ հարվածով խնուռ եր ածում, վորից հետո նա . . . իր մեծ զլուխը դարձնում եր զեպի կերակրողը և ընդունում տաշջարկած ուտելիքը։ Փոքրիկ բանվորն իր զործը կատարում եր մեծ յեռանդով և շատ անգամներ վազում շաքարաջրից զեպի իր



Նկ. 20. Մեղրատուն կերակրում
և բանվորներին։

Նկ. 21. Կովկասյան խոշոր բանվոր
մրջյունը մեղր ընդունելուց առաջ (Ա)՝
և հետո (Բ):

մեծագույն ընկերները։ Այդ ժամանակ պարզորեն կարելի յեր զիշտել, թե ինչպես նրանց փորիկն աստիճանաբար ավելի ու ավելի յեր ուռչում։ Այդ կերակուր բաժանողը զուղընթացար բաժին եր հանում ավելի քիչ խոշոր մրջյուններից մերժ սրան, մերժ նրան . . . Այսպիսով «մեղրի տակառիկներից» մի բանիսը, ինչպես և միջին մեծության բանվորներից վամանք, բավարար չափով լցվեցին «միղրով», վորը նրանք բաժանում եյին և իրար, և գաղութի այլ անգամների միջև, հենց վոր նրանք իրենց շոշափուկների թեթև ու արագ հարվածներով հիշեցնում եյին այդ մասին։

Մյուս որը, այս դիտողությունից հետո, Մեյերը ամրող գաղութն ամանից փոխադրում է դիտողական բունը։ Սակայն փոխադրության ժամանակ հինգ փոքր մրջյուն վոշնչացան, այնպես վոր մնացած 15 մրջյունների մեջ մնացին յերկու փոքրիկ բանվոր, վորոնք իրենց վրա վերցրին ամբողջ գաղութին «միղրայթայթելու գործ»։

Վորպեսպի նրանց գործը հեշտանա, Մեյերը այլ տեղից վերցրած մի քանի փոքր բանվորներ և ավելացնում այստեղ։ Բայց անկոչ ողնուկաններին թշնամաբար դիմավորեցին. նրանք ուրիշ բնից եյին և ինչպես կարելի յեր սպասել, «կուրվ» սկսվեց, վորի մեջ առանձնապես յեռանդուն մասնակցությունն եյին ցույց տալիս զիտողական բնի կենդանի մնացած յերկու փոքր բանվորները։ Մեծագույնները նույնպես շարժվեցին կոմի . . . Հետեւալ առավոտյան ճակատամարտը վերջացավ բոլոր յեկվորների լրիվ պարտությամբ—նրանք բոլորն ել սպանվեցին. իսկ մյուս խմբի փոքրիկ մեղր կոմի ժամանակ կորցնելով հետեւ աջ ու ձախ վոտները՝ խեղանդամ դարձավ։ Զնայած դրան, այդ փոքրիկ հաշմանդամը, ինչպես ցույց տվին հետագա զիտողությունները, իր վրա վերցրեց ամրող փոքրիկ դարձութին պարեն մատակարարելու դժվարին գործը։ Որորվելով վեցի փոխարեն մնացած իր չորս վոտների վրա, նա անվելջ հետ ու առաջ եր վազում բնի մեջ փոքրիկ կերակրատաշտից զեպի ընկերների սենյակը, վորտեղ կամ կերակուր եր մատակարարում նրանց, կամ շաքարաջուրը լցում մեղրի տակառները...

Այս պատմությունն ակնհայտ կերպով ցույց է տալիս, վոր մեղրատունների բնում քաղցր հյութ ձեռք բերելու աշխատանքը և «միղրի տակառիկները» լցնելու գործն ընկնում և սովորաբար փոքր բանվորների վրա, վորոնք համայնքում կատարում են նաև ամեն տեսակ այլ աշխատանքներ։


ՅԵՐԵՆԵԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Հուլիսի կամ օգոստոսի շոգ որերից մեկին, եդ մրջյունները, կամ ինչպես նրանց անվանում են՝ թագուհիները մրջնանոցից գուրս են թացում։ Արուները նույնպես շատագով թողնում են բունը, թացում ու միանում են նրանց։ Հասավ և նրանց ժամանակն «իրենց պարտքը կատարելու»։ Միասնական կարճատև թոփչքից հետո արուները շուտով վոշնչանում են, իսկ եգերը՝ ըրջապատված բանվորների հոգատարությամբ, փոխադրվում են մրջնանոցի ներսը։ Այդ ժամանակ եգերի թեկերն ընկնում են, կամ յեթե այդ չի պատահում, իրենք են պոկում նրանց։ Սակայն յերբեմն բանվոր մրջյունները նախարար կրծելով նրանց թմերը, արուներին և եգերին բոլորովին թույլ չեն տալիս բնից գուրս գալ։

Մրջնանոց տարվելուց հետո եզն սկսում են ձու ածել։ Մի եղը

կարող եմի քանի հազար ձռւ դնել, իսկ նրան շրջապատող բաները մը ջյուններն իսկույն վերցնում են դրված ձվերը, չորս կողմից խնամքով լիզում, փոխազրում նրանց համար հատկացված սենյակները և գարսում այստեղ կանոնավոր կույտերով:

Զվարումից հետո սկսվում է բանվոր մը ջյունների յեռուն աշխատանքը: Նրանք ցերեկը ձվերը տեղ ափոխում են մի հարկից մյուս հարկը, նայած ինչ աստիճանի տաքություն կամ խոնավություն ե պահանջվում, վորակեսղի մը ջյունների մատաղ սերունդը ձվերից դուրս գա. վերջապես, մի քանի որից հետո ձվերից դուրս են սողում փոքրիկ «վորդիկները», վորոնք բոլորովին նման չեն հասակավոր մը ջյուններին. դրանք բրուրենք են, վոր հետաքայում դառնում են իսկական մը ջյուններ (նկ. 22):



Նկ. 22. Բնի ներսի մի մասը, վերեսում թրթուրներով սենյակները, ներքում հարսնյակներն ու նրանց խնամող դայակները:

ավելի լավ ե թափանցում. հետո ամեն յերեկո վորոշակի ժամին—արեի մայըամուտից մի ժամ առաջ նրանք լրիին հետ են տառում նրանց ներքին հարկերը:

Քիչ աշխատանք չի պահանջում նաև թրթուրներին մաքուր պահելը. չե վոր սրանք առայժմ շատ քննուշ արարածներ են:

Նրանց փափուկ ու խոնավ կաշին հեշտությամբ ծածկվում ե մանրիկ ավազահատերով և ամեն տեսակ փոշիով, վորոնցով լիքն են նրանց հողեւ սենյակները: Կա և այլ վտանգ—թրթուրների խոնավ և կեղառափած մաշկի վրա բորբոք հեշտությամբ կարող ե բնակություն հաստատել ու բազմանալ, վոր նույնպես վասակար և մտադի սերնդի առողջության և կանոնավոր աճման համար:


Բայց մը ջյունն բանվորը թրթուրներին այնպես մաքուր և պահում, վոր մինչեւ անգամ խոզորացույցի ոգնությամբ ել նրանց վրա փոշի կամ բորբոք բողբոջ գտնել չեն կարող: «Վոչ մի կատու, ասում վասմանը,—իր ճուտիկներին այնքան կանոնավոր ու քննուշ ուշաբնությամբ չի լվանում, վորքան մը ջյունն իր թրթուրներին»:

Իսկ վորքան հոգս ե պահանջում փոքրիկ եյտակների կերակրումը: Մը ջյունդայակը կերակուրը վերցնում ե նախ իր բերանը այստեղ նա վեր և ածվում մի մածուցիկ հեղուկի, վորը դայակը հետ ե տալիս ու լցնում թրթուրի բերանը՝ դիպունելով իր գլուխը նրա զլիխն: Թրթուրներն զգալով իրենց մոտով անցնող մը ըշշյունդայակներին, մի քիչ բարձրանում են, կարծես դրանով ուշ գում են ցույց տալ, վոր իրենք արգեն քաղցած են և սպասում են իրենց բաժին կերակրին:

Իսկ ինչպես են այս «վորդուկները» կամ թրթուրները գառնում իսկական մը ջյունները: Ամեն մի թրթուր նախ աճում ե, հետո վորոշ չափի հասնելով, սկսում ե իր բերանից բաց թողնել մի մածուցիկ հեղուկ, վորն ողի մեջ փոխվում, զատնում ե մետաքսի մի նման բարակ թելիկները: Այս թելիկներով իրեն փաթաթում ե այնքան, մինչեւ վոր իր շուրջը կազմվում ե ձվածեւ մի փոքրիկ տոպրակ: Սա կոչվում ե բոժոժ, յեթե դուքչյերբենից տեսել եք շերամի վորդի պատրաստած բոժոժները, ուրիշն դժվար չի լինի հասկանալ, թե ինչ բան ե մը ջյունի բոժոժն ու ինչպես ե պատրաստում նա այդ: Տեղին ե ասել, վոր մը ջյունի բոժոժներն իրենց մեջ պարունակած թրթուրներով բնավ ձվեր չեն, ինչպես շատերը սխալմամբ կարծում են— մը ջյունի ձվերն անհամեմատ փոքր են և հասարակ աշքով դժվար են նկատվում: Այդ ձվածեւ փոքր են և հասարակ աշքով ձիշտ կլիներ անվանել հարսնյակով բաժոժ, տոպրակներն ավելի ձիշտ կլիներ անվանել հարսնյակով բաժոժ, վոր ստացվում ե թրթուրի կերպարանափոխությունից (նկ. 23):

Մը ջյունները ջանասիրությամբ խնամում են և հարսնյակներին. նրանք նույնպես պաշտպանում են նրանց և որվա դա-

Նազան ժամերին, ինչպես թրթուրներին, փոխաղբում են սենյակից-ուենյակի Սպիտակ բոժոժի ներսում հարսնյակը դառնում է իսկական մը ջուռ։ Յերբ մրջունի գուրս գալու ժամանակը հասնում է, կրկին առանց մյուս մրջյունների ոգնության գործը զլուխ չի գալիս Մի քանի բանվորներ բարձրանում են բոժոժի վրա և իրենց ծնոտներով կրծում այն տեղը, զորտեղ գտնվում ե յերիտասարդ մրջյունի զլիսիկը։ Յերբ անցքու այնքան և մեծանում, վոր մրջյունը կարող է գուրս սողալ, բանվորները, կամ յեթե կամենուս եք «տատմւըները», զուրս են քաշում նրան այնտեղից, հանում նրա ամբողջ մարմինը շրջապատող բարակ թաղանթը, լիզում ու մաքրում են նրան և քանի վոր յերիտաս



Նկ. 25. Մրջյունի զարգացման պատճեններ։
1—ձռն, 2—թթթուրը, 3—նույնը իբուտ մեծացրած,
4—բոժոժը ներսում յեղած հարսնյակով, 5—բոժոժից
հանգած հարսնյակը

ասրդ մրջյունը գեռ լիովին չի ամրացն ուժեղ կերպով խնամում են նրան . . . իսկ հետո . . . յերիտասարդն արդեն ել ծերերի ոգնության կարիքը չի զգում—ինքն արդեն աշխատանքի յե անցնում այնպես, կարծես թե մրջնային գիտությունների ամբողջ կուրսը լրիվ անցել ե.

Եգ մրջյունի ածած ձկերն սկզբնական շրջանում և թրթուրներն իրարից վոչ մի բանով չեն զանազանվում, բայց վերջինունից նրանցից միատեսակ մրջյուններ չեն առաջ գալիս—միթքանիսները գառնում են թերակոր «թագուհիներ», յերկուր յերեք տասնյակ թմբավոր արուներ, իսկ մասցածներից զուրս են գալիս կամ բանվորներ (մեծ մասամբ), կամ ուղմիկներ։ Ի՞նչպես ե պատահում այդ:

Մի քանի գիտնականներ յենթադրում են, իբր թե այդքանը կախված ե նրանից, վոր եղած միատեսակ ձկեր չի գնում։ Նրանք, վորոնցից արուներ պիտի զուրս գան, նման չեն այն ձկերին, վորոնցից եղեր են զուրս գալիս, իսկ նրանք, վորոնցից

ստացվում են բանվորներ կամ ուղմիկներ, վոչ առաջիններին են նման և վոչ ել վերջիններին։

Մյուսներն այլ կերպ են բացատրում այդ—նրանք կարծում են, վոր այդ բանի պատճառը թագնված ե թրթուրների խնամքի և նրանց մնուցման ձեփ մեջ։

Ամեն մի ձվից, ասում են նրանք, կարելի յե ստանալ մըրջյունի ցանկալի տեսակը, բայց արդյոք նրանցից բանվոր գուրս կամ, թե թեավոր «թագուհի», ուղմասեր զինվորներ, թե սովորական արու—այդ բոլորը կախված ե մրջնային համայնքի կերպակողներից և դաստիարակներից։

Եեվ այդ բացատրությունը, թերեւ ավելի մոտ ե ճշմարտության։ Ահա ինչու:

Ինչպես ասել եմ, մեղունները մրջյուններին մոտիկ ազգակիցներ են։ Իսկ մեղունները կարող են անհրաժեշտության դեպքում ցանկացած բանվորտկան թրթուրից ստանալ արգասաքեր եք—պարամայր—գրա համար նրանք միքանի անգամ մեծացնում են այն բջիջը, վորի մեջ տեղավորված ե սովորական թըրթուրն ու սկսում են սրան ընտրովի ուտելիքով ուժեղ կերպակել կարելի յե յենթադրել, վոր նման մի բան տեղի յե ունենում և մրջնանոցում։

Տերմիտ (սպիտակ մրջյուն) անունով միջատներ գոյություն ունեն, վորոնց կյանքը, վարքն ու բարքը շատ նման են մըրջյուններին։ Տերմիտները նույնպես բաժանվում են «կաստանների»։ Տերմիտների բնում դուք կտեսնեք և «թագուհի», և՝ արուներ, և՝ աազմիկներ ու աշխատավորներ Այսինչ, ըստ միքանի գիտնականների գիտողությունների, այստեղ տարբերությունն առաջանում ե նրանից, վոր տերմիտները տարբեր ձևով են կերպակում ու տարբեր ձևով գաստիարակում միննույն սերնդի թրթուրներին։

Հնարավոր ե, վոր միենույն բանը տեղի յե ունենում և մըրջանոցում։

Վերջապես, նորից մի ուսանելի գիտողություն։

Մըրջնանոցում հաճախ կարելի յե պատահել այնպիսի մըրջյունների, վորոնց եղ կամ բանվոր լինելը գժվար և վորոշել։ Մի քանիս վոչ այս ե, վոչ այն, այլ ինչ վոր յերկու միջինը։ Մի քանիս ավելի շատ նմանվում են բանվորների, քան թե եղերի։ Մյուս ները, ընդհակառակը, այնպիսի տեսք ունեն, վոր թվում ե, թե ները, ընդհակառակը, վոր իսկական եղի նմանվեն, իսկ յերրորդահամ մի քիչ ե մասցել, վոր իսկական գործությունները—գրականապես, ինչ վոր գժրախտ արարածներ են. բանվորները

ների գերը խաղալու համար անպետք են. չեն մասնակցում վոչ թրթուրների ինամքին, վոչ համայնքի պաշտպանությանը, վոչ ել բնակչինարարությանը, և միևնույն ժամանակ ձեր ել չեն դում: Այդ յերեւոյթը կարծես թե չարամիտ մի ծաղր և մրջնային ցեղի համար:

Զի՞ կարելի արդյոք յենթագրել վոր բոլոր այս տեսակ վիճածներն արդյունք են մրջյուն «գայակների» և «կերակրողների» անկարգ սնուցման և անկանոն ինսամքի:

Մրջյունների կյանքը հաճախ բարդանում և թշնամիների ներխուժումով, վորոնց ներկայությունն արդեն բավական և մրջնային համայնքում ամեն ինչ տակն ու վրա անելու համար:

Նման դեպքերում մրջյուն-բանվորը սովորաբար կորցնում է իր «առողջ» բնական հոտառությունը և սկսում, և անկարգ ու անկապ շատ բաներ անել:

Անկարգ կարող ե կատարել և յերիտասարդների—թրթուրների խնամքը, —իսկ այդ բոլորի արդյունք կարող են լինել վիճածներ ու այլանդակություններ...

Այդ բոլորը շատ հավանական ե: Ահա թե ինչու հիմք կա կարծելու, վոր մրջյունների զանազան «կաստաները»—թագուհիները, արուները, զինվորներն ու բանվորներն առաջ են գալիս միատեսակ ձերից, շնորհիվ թրթուրների վրա գործադրած տարբեր խնամքի: Սակայն, դա գեռես վերջնականապես հաստատված չե դիտության կողմից:

ՏԱՐՈՒԻՆԱԿ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանվոր մրջյունը չափազանց կապված է իր փոքրիկների հետ: Թրթուրների և հարույակների խնամատարությունը, «յերեխաներին դաստիարակելու» անդիմադրելի ձգտումը հաճախ նրա ամբողջ կյանքը կլանում է: Նա խնամում է ճուտիկներին, վտանգի ըրպեներին պաշտպանում նրանց: «Ամբողջ գաղութը սաստիկ կատաղում է, յերբ փորձում են ուժով խլել նրա թըրթուրներն ու հարույակները: Յեթե անտառային մրջյուններին անհանդստացնում ես ձողիկով, այդ, ի հարկե, ահազին խլըռտում և առաջացնում, և մրջյունները խմբովին նետվում են պաշտպանվելու թշնամուց, և յեթե այդ միջոցին պատահես թըրթուրների պահեստին ու փորձես հավաքել բոժոժները, այն ժա-

մանակ փոքրիկ մրջյունների զայրույթը գաղաթնակետին և հասնում, նրանք կատաղությամբ հարձակվում են թշնամու վրա և անխնա խայթում ու թույն են թափում նրա վրա: Թշնամին կարող ե նրանցից հարյուրներին, հազարներին կոխտել, և այնուամենայնիվ նոր հարյուր ու հազարներ նետվում են գեղի մահը, առանց սարսափի: Այնինչ, այն ձագուկը, վորի համար նա այդպիսի «անձնուրացությամբ զոհաբերում ե իրեն», մինչև անգամ իր սեփական զավակը չե—բանկոր մրջյունն անպտուղ ե—այդ նրա սանիկն ե միայն» (Վասման):

Այդպես ե մրջյունների իրենց փոքրիկներին դաստիարակելու հզոր սիրո ուժը: Յեկ այդ սերը նրանք հայտարերում են վոչ միայն բնի փոքրիկների նկատմամբ, այլև ուրիշ, իրենց համայնքներին մոտիկների, աղջակիցների վերաբերմամբ: Դեռ ավելին: Մրջյունները հաճախ «փորդեզրում են» մրջնային այլ ցեղերի յերեխաներին, մինչև անգամ այլ միջատների, որինակ բզեզներին, այդ արդեն մենք զիտենք: Գիտենք, վոր մրջնանցներում շատ բզեզներ ապրում են վորակն «ընտանի անսուռն»: Այս միջատների անոգնական ձագերը մրջյունների կողմից նույն հոգատարությունն են վայելում, ինչ վոր իրենց սեփական փոքրիկները:


Քանի վոր խոսքը վերաբերում է մրջնային առորյա կյանքի համար այդպիսի ոգտակար միջատներին—դեռ հասկանալի յե: Այդ հասկանալի յե և այն ժամանակ, յերբ մրջյունը փորդեզրում է և վորպիս «հյուր» կամ ճաշորդ պահում է իր բնում զանազան, ճիշտ ե, անոգուտ, բայց իր համար օբյուրովին անվետա միջատների: Բայց ահա ձեզ մի փաստ, վոր մեր՝ մարդկային տեսակետից բոլորովին անհամկանալի և մինչև անգամ անմիտ և թվում:

Արկարմիր մրջյունների բնում ապրում ե լումինուզա անունով կարձ թեկով մի միջատ (նկ. 24):

Այս բզեզի թրթուրների հոտը, նրանց վայելու կեցվածքն ու մրջյունի թրթուրների նման կատարած շարժումները, այս բոլորն ալ-կարմիր աշխատավորների ուշադրությունը գրավում է իրենց վրա: Նրանք ուժեղ կերակրում են նրանց, մաքրում խնամքով, պահում, պաշտպանում են թշնամիներից, իսկ փորձանքի գեղագում շատապում են ավելի ապահով տեղ թաղցնել առաջին հերթին վոչ թե սեփական, այլ հենց այս թրթուրներին:

Լումինուզաները բախտավոր կյանք են վայելում, ուստամ են, աճուց, ալելի արագ աճում, քան մրջնային թրթուրները: Իսկ

այս հաճամամանքը կարծես գրգռում և ալ-կարմիր աշխատավորներին: Նրանք սկսում են արհամարհնել իրենց սեփական սերունդը, վատ են կերակրում փոքրերին, անկանոն խնամում նրանց և ահա այդ բոլորի արդյունք են հանդիսանում այն վիժվածներն ու այլանդակությունները, փորոնց մասին պատմել եմ նախորդ զիսում: Սա գեռ քիչ է: Դաստիարակները կարծես թե չեն ել նկատում, վոր լոմեխուզայի թրթուրները — այս վորկրամոլ «ընկեցիներն» իրենց մրջնանոցն ուղղակի կորստի յեն մատնում. որեցոր ուտում են մրջնային ձվերի ամրող կույտեր, անխնա վոչըն-



Նկ. 24. Լոմեխուզ բգեղն ու նրա հարսնյակը:

չացնում ահագին թրթուրներ: Պատահում ե անդամ, վոր աշխատավորներն իրենք են քաշ տալիս լոմեխուզային թրթուրներին այն սենյակները, ուր մեծ քանակությամբ մրջնային յերիտասարդներ են լինում և վորտեղ նրանք անարգել կարող են իրենց ավերիչ գործը կատարել:

Բայց ահա լոմեխուզայի թրթուրները մեծացան, ժամանակն ե, վոր նրանք հարսնյակների փոխվեն: Յեվ այստեղ սկսվում ե նրանց կյանքի ամենատխուր շրջանը:

Բանն այն ե, վոր լոմեխուզայի թրթուրը, յերբ հարսնյակի յե վերածվում, այնպես ամուր բոժոժ չի հյուսում իր համար, ինչպես այդ անում և մրջունի թրթուրը, իսկ նրա հարսնյակն այնպիսի խնամքի կարիք չի զգում, ինչպիսին անհրաժեշտ և մըրջունի հարսնյակի համար, բայց անմտորեն ջանացող «դայակներն» ու «դաստիարակներն» այդ հաճամամանքը հաշվի չեն առնում: Նրանք լոմեխուզայի հարսնյակները թաղում են հողի մեջ, հետո դուրս են հանում, մի տեղից մյուսը, մի հարկից մյուսը քաշ տալիս—մի խոսքով՝ կատարում են այն ամենը, ինչ վոր պետք ե կատարի մրջնային հարսնյակներին խնամնու ժամանակ:

Ծորհիվ դրա, լոմեխուզների մեծ մասը վոչնչանում ե,

հարյուրավորներից կենդանի յի մնում միտայն մի տասնյակից վոչ ավելի, յերբեմն և ավելի քիչ: Այլապես մրջնանցի գրությունը վագելի, յեթե այստեղ բազմանար մրջնային յերիտասարդության կործանիչների ու խժողների վոհմակը:

Սակայն դառնալով բգեղն, նրանք իրենց տերերին ու գաստիարակներին վորոշ չափով ոգուտ են տալիս: Հասակավոր բգեղի մեջքի վրա ցցված են մաղլիկների դեղին փնջիկներ, վորոնք մրջունների համար հաճելի հեղուկ են արտազրում: Բայց այս հաճույքը, ինչպիս տեսնում ենք, շատ թանգ կնով և ձեռք բերածում...

Ահա թե ինչու յես առում եյի, վոր մրջունների՝ վորդեղերն ու ուժեղ հակումը յերեկին մեր մարդկային հասկացությամբ ինչշփոր հիվանդութ, անմիտ բնույթ և ստանում...

Մինչև այժմ յես ձեզ պատմում եյի այն մասին, թե ինչպես և աշխատում մրջունը, ուկայն հանդստանում և արդյոք նա յերեղեվիցե: Հավանորեն հանգստանում ե: Յեվ այդ ժամանակ մըրջունը պահանջի զրագվում, քան աշխատանքի միջոցին: Այդ մասին նույնական գոյությունն ունեն հետաքրքիր պատմությունները: Մի զիտանական պատմում ե, վոր ինքը տեսել ե, թե ինչպես «մըրջունները հանգստի ժամին բարձրանում եյին հետին թաթերի զյունները հանգստի ժամին բարձրանում իրար և սուս կովի բռնվում»: Ուրիշ վրա, բելիկներով վաղաքում իրար և սուս կովի բռնվում: Ուրիշ վրա, բելիկներով վաղաքում իրար և սուս կովի բռնվում: Ուրիշ վրա, թավալում գետնին, թերով ու ծնոտներով բռնում եյին իրար, թավալում գետնին, թաշքում ընկերներին և այդ բոլորն առանց վես պատճառելու վորեւ մեկին:

Ակամայից մարդու գլխում միտաք և ծագում, վոր այդ բոլորը կոչ այլ ինչ են, յեթե վոչ զվարճությունների խաղեր:

Վոչ այլ ինչ են, յեթե վոչ զվարճությունները ներում եմ մի այլ փաստ, վորի մասին պատմում և Եշերիիւը: Նա սսում ե, վոր մրջունների մի մասին բատմություն, յերեկին համարյա ամբողջ մրջնանոցը, հատհագին բազմություն, յերեկին համարյա ամբողջ մրջնանոցը, հատհագին բազմություն, առվորարար այդ ժամանակ նրանք կանգնաքվում և «ժողովի», — առվորարար այդ ժամանակ նրանք կանգնաքվում և դեղի իրար դարձրած, բոլորովին անշարժ, նուռմ են զլուխները դեղի իրար դարձրած, բոլորովին անշարժ, միայն անընդհատ և գանգաղորեն շարժվում են նրանց շոշափուկներն ու փորիկները: Յերեկին «ժողովը» զըսպատված ե լինում ներն ու փորիկները: Յերեկին «ժողովը» վորոնք կանգնում են զլուխները դարձրած զինվորների շղթայով, վորոնք կանգնում են զլուխները դարձրած զինվորների շղթայով, վորոնք կանգնում են զլուխները դարձրած զինվորների կողմը:

շվթայի ներսն ու խանգարեն խաղաղությունը։ Այդպիսի տարօ-
քինակ անշարժ գրությամբ մըջյունները կարող են մնալ ժամե-
րավ, անդամ որերով։

ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐ

Միևնույն մըջնանոցի մըջյունները համերաշխ են ապրում և
յերբեմն ծիծաղելի կերպով խնամում իրար։ Հայտնի յե, վրը նրանք
շատ մաքրասեր են և շատ յեռանդով իրար մաքրում են ու այն
ել որական համարյա մի քանի անդամ։

Ահա մըջյուններից մեկը վագելով մոտենում ե մյուսին, պառ-
կում ե նրա առաջ, տարածում թաթիկներն ու սպասում, մինչեւ
նա կսկսի նրան լվանալ ու «սանրել»։ Մաքրողն, ահա, գործի
յե անցնում։ Սկզբում նա խնամքով մաքրում ե յերեսը, ծնուա-
ները, բեխիկները, հետո ձեռնարկում ե կրծքի մաքրությունը,
կրծքից անցնում ե առաջին վոտներին, հետո հետեւ վոտներին,
իսկ հետո սկսում ե փորիկով զրադվել, և այդ բոլորը նա կատա-
րում ե շատ յեռանդով, առանց շտապելու, մի քանի անդամ, մին-
չե վոր ընկերն իսպառ կմաքրվի։

«Իմ դիտողական բնի մոտ,— գրում ե Վասմանը,— հարկա-
վոր եր միայն բարձրացնել բնի ապակյա կտուրը ծածկող սե-
կորը, վորպեսզի տեսնեյի մեկ կամ մի քանի այդպիսի տեսա-
քաններ։

Ահա ալ-կարմիր բանվորներից մեկը կողքի վրա անշարժ պառ-
կած, թույլ ե տալիս իրեն «լվանալ»։ Նրանք յերեք հոգի յեն։
Բոլորն ել զբաղված են այս աշխատանքով և խնամքով լիզում են
իրենց առջևը պառկած մըջյունին, հետո շուրջ են տալիս նրան ու
նույնպիսի ջանասիրությամբ լիզում են մյուս կողմից։ Կես բո-
ռվելից հետո մաքրողները՝ իրենց բնակ սրանը լույս թափանցե-
լու պատճառով թողնում են իրենց զրադմունքը, փախչում բնի
մութ մասը, և լողացած ընկերակիցը նույնպես բարձրանում ու
հետեւում ե նրանց»...

Այսպիսի որինակներ շատ կարելի յե բերել։ Դրա փոխարեն
մըջյունները սովորաբար այլ բների ու այլ ցեղի բնակիչներին
թշնամաբար են վերաբերվում, ինչպես վահերը թշնամիների,
վորոնց հալածում են անսովոր անգիտությամբ և հաճախ սպանելու
չափ ծեծում են։ Յեթե համարձակներից մեկը դիտմամբ կամ պա-
տահամամբ վոտ դնի ոտար մըջնանոց կամ մինչեւ անդամ համայն-

քին չպատկանող ճանապարհի վրա, այդ նրան եժան չի նստի։
նրան դուրս կշպտեն, կկծոտեն, կսպանեն կամ թե չե ամբողջո-
վին կուտեն։ Այդպես չեն վերաբերվի մըջյունները պատահմամբ
մեկ-յերկու որով բնից հեռու գնացած կորած իրենց յեղայրակ-
ցին—նրա վերադարձը, ինչպես ոտարականի հայտնվելը, անմի-
ջապես նկատում են, բայց սիրալիք ընդունում։ Մըջնանոցից դի-
տավորյալ կերպով հեռացնում են յերկու-յերեք մըջյունների և
մի քանի որ գերության մեջ պահում այն յենթադրությամբ, վոր
յեղբայրակիցները կմոռանան նրանց գոյության մասին։ Բայց
ինչ պարզվեց, յերբ, կալանքի ժամկետն անցնելուց հետո, գեր-
ված մըջյունին կրկին բաց են թողնում իր հարազատ բունը։
Նրան լիզում եյին, մաքրում, կերակրում և տանում ներսի սե-
նյակները։ Բայց փորձեցնեք նույն տեղը բաց թողնել մի ոտարա-
կանի, նա մահից չի ազատվի, կամ ամենալավ դեպքում դուրս
կվոնդվի։ Ահա ձեզ նորից մի այլ որինակ։ յերկու տարրեր մըջնա-
նոցից մի քանի մըջյուններ վերցրին ու բանտարկեցին ապակյա-
անոթների մեջ, վորոնց բերանը բարակ մարմաշով կապված եր։ հետո
այդ անոթները զրին այնպես, վոր մի մըջնանոցի բնակիչները կարո-
ղանան տեսնել թե մեկ և թե մյուս մըջյուններին։ Ճշմարիա-
կ, յերբ մըջյունները տեսան յուրայիններին բանտարկված, վոչ
միային չփորձեցին, այլ մինչեւ անդամ ցանկություն ել չարտահայ-
տեցին ազատելու նրանց գերությունից։ Գրա փոխարեն ինչ գաղա-
գած վերաբերմունք ցույց տվին հանդեպ մյուս մըջնանոցի վերի-
ներին—մարպկությամբ բարձրանալով անոթի վրա, ադահու-
թյամբ գես ու զեն են վազվզում մարմաշի շուրջը, աշխատելով
գլուխները մարմաշի անցքերից ներս մտցնել ու կրծոտել ոտարա-
կաններին։

Կան և այլ փաստեր, վորոնք վկայում յեն մըջյունների դե-
պի իրենց ցեղակիցների ճակատագիրը ցույց տված անտարբեր
վերաբերմունքի մասին։ որինակ, պատահել և այնպես, վոր մըջ-
յունների մի փոքր խումբ մտել և մեղրամանի մեջ։ Մի քանիսը
ներսից թաղվել են մեղրի մեջ և քիչ և մնացել, վոր բուրութին
լսեղդվեն, մինչդեռ նրանց ընկերները տեսնելով այդ, բանի տեղ
չեն զրել, շարունակել են առաջկա նման մեղրը լափել։

Սակայն այդ բուրութ գործի միայն մի կողմն են ցույց տա-
միս, և մենք անարդարացի կլինեյինք, վոր վերևում նկարագրված
գեղքերի վրա հեն կելով յեղակացնեյինք, թե մըջյունները բո-
ւուղքերի վրա հեն կեպի իրենց բնակից ընկերները։

Կան գեպքեր, վորոնք հակառակն են ապացուցում: Այդ առթիվ շատ հետաքրքիր դիոզություն և առաջ բերում գիտնական թելուը, վոր քիչ չի զբաղվել մրջյունների կյանքի ուսումնասիրությամբ:

«Մի անգամ,—ասում են նա,—զիտելով մրջյունների մի փոքրիկ խումբ, նրանցից մեկի վրա յես մի փոքրիկ քարի կտոր գրեցին: Սրան մոտեցող հետեյալ մրջյունը հենց վոր ահսագ իր ընկերոջ դությունը, իսկույն հետ վազեց և այդ նորությունը «հայտնեց» ընկերներին: Նրանք անմիջապես հետեւցին ազատելու, մի քանիսը կրծում եյին քարի կտորը, աշխատում նրան շարժել տեղից, մյուսները քաշում եյին նրա վոտից այնպիսի ուժով, վոր յես կարծում եյի, վոր կպոկին նրա վոտները, բայց նրանք շարունակեցին այնքան, մինչև վոր ազատեցին իրենց ընկերոջը: Մի այլ անգամ յես նկատել եմ, վոր մի քանի մրջյուն սողում են ճանապարհով, մեկին մի փոքր հեռացը ի ճանապարհից և հոգով ծածկեցի այնպիս, վոր միայն վլուխն եր յերեւում: Մի քանի մրջյուն անցնում եյին մոտով, վերջապես մեկը նկատեց նրան և փոքեց ազատել բայց չկարողացավ: Այն ժամանակ ամբողջ ուժով սկսեց հետ փախչել նրանից, և յետ կարծեցի, վոր նա լքեց իր ընկերոջը, բայց յերեւաց, վոր գնացել եր ոգնություն կանչելու. շուտով վրա հասան տասներկու մրջյուն, նրանք ուղիղ վազեցին գերին ու ազատեցին նրան»:

Սրգեն հայտնի ե, վոր մրջյունն իր հիվանդ ու վիրավորված ընկերներին հավաքում և միջնանոց և տանում, վորտեղ ամենահոգատար կերպով նրան խնամում ե այնքան, մինչև վոր առողջանում ե: Յեվ միայն այն ժամանակի, յերբ հիվանդն արգեն անհուսալի յե, մեռնում ե ջարդվածներից, թույնից կամ վերքերից, նրան բնից դուրս են տանում և թողնում ձակատագրի կամքին: Մրջյունների կյանքին քաշածանոթ բոլոր աչքի ընկնող զիտնականները՝ և կերպով, և մորելը, և վասմանը—բոլոր միաբերան ընդունում են, վոր մրջյունները հօգտարարամբ խնաման են իրենց հիվանդ ու վիրավոր ընկերներին:

«Մրջյունների հիվանդներին խնամելը,—պրումեն վասմանը,—ինձ այնքան ուշագրավ թվաց, վոր հազիվ հավատացի անձամբ դիտողություններ անելուց հետո միայն»

«Առաջին անգամ զա պատահեց 1895 թվի մարտի 16-ին: Իմ դիտողական բնի ալ-կարմիր բանվոր մրջյուններից մեկը թուշավորվաց մրջնային թույնով: Անդամալույթի նման նստած եր բնի

ապակյա խողովակների մեջ և հազիվ եր կարողանում շարժվել դաճախություններից: Յես պինցետով բռնեցի նրան և կրկին նըստեցրի պիտի բնի մեջ:

«Մկզբում ինձ թվում եր, վոր մոտեցող ընկերները նրա վրա վոչ մի ուշագրություն չեյին դարձնում և թողնում եյին նրան պառկելու: Սակայն նրանք շուտով իրենց շոշափուկների միջոցով քննության յենթարկեցին նրան և հետո փոխադրեցին բնի մյուս մասը, վորտեղ հավաքված եր մրջյունների մեծ մասը: Այստեղ հիվանդը պառկած մնաց մի ամբողջ որ, շրջապատված մի շաբթ տերերով ու ստրուկներով, վորոնք մերթ ընդ մերթ զբաղվում եյին նրանով—նրանք խնամքով լիզում եյին հիվանդին, հետո շուռ տալիս ու կրկին լիզում, ապա բեկիրկներով զնուում ու նորից լիզում:

«Այս բուժման հաջողությունը լրիվ եր: Հետեյալ որը հիվանդը բոլորովին առողջ եր, այնինչ առանց այդ խնամքի հավանութեան նա կմեռներ, վոր հաճախ և պատահում թունավորված մրջյունների հետ»...

Այս և վասմանի պատմածը:

Պ Ա Տ Ե Բ Ա Զ Մ

Մենք արդեն գիտենք թե տարրեր ցեղերի մրջյուններն ինչպես են վերաբերվում իրար—այս վերաբերմունքը վոչ միայն հետու յերաբեկամական լինելուց, այլ ուղղակի թշնամական ե: Բավականաշատ փոքեր ու զիտողություններ կան, վորոնք բացարձակ կերպով ապացուցում են այդ բանը:

Մի անգամ Ֆորելը մարդագետնի մրջյունների մի գաղութ տոպրակի մեջ լցրած ածում և շիկակարմիք մրջյուններով բռնված մի մրջնանցի մոտ. նկատելով սրանց՝ շիկակարմիքները կատաղությամբ նետվեցին նրանց կուտակված տեղը և արագությամբ քշեցին անսպասելի կերպով հայտնված հակառակորդին:

Մի ալ անգամ Ֆորելը տեսել և շիկակարմիքների մի ամբողջ բանակ, վոր վերագանում եր ինչ վոր վորսից. նա թույլ տվեց նրանց մտնել բռնը և ավարը տեղափորեր: Բայց հենց վոր շիկակարմիքները նորից գուրս թափեցին և կրկին արշավանքի շարժվեցին, այն ժամանակ ֆորելը նրանց ձանապարհից քիչ հետու թափում և մարդագետնի մրջյունների մի նոր գաղութ իրենց ունեցվածքով: Կրկին նույն պատմությունն և տեղի ունենում:

Զանցավ ՚ի քանի ըստե, յերբ շիկակարմիրների ամբողջ խռումը՝ ըստագությամբ նետվեց նրան վրա, փախուստի մատնեց և տիրեց նրանց ամբողջ կայքը, վորոնց մեջ գտնվում եյին և բավական հարսնյակներ:

Նման փաստեր կարելի յե բերել վորքան կամենում եք: Յեվ նրանք բոլորը խոսում են մի բանի մասին—մըջնանոցների տարբեր ցեղերի ընակիչներն իրար թշնամի յեն: Յեթե այդ այլ պես ե, ապա չպետք ե զարմանալ, վոր մըջյուններն իրար գեմ պատերազմում են:

Շիկակարմիր մըջյունը պատերազմ ե գնում ու մըջնի վրա: Մեկերը հարձակման չեն սպասում և անցնում են իրենց սովորական խաղաղ զբաղմունքներին: Հանկարծ նրանցից մի քանիսը նկատում են իրենց ճանապարհով շարժվող շեկավուն մի ժապավեն: Իրար են անցնում և շեշտակի նետվում գեպի մըջնանոց: Ցնցվում են մըջյուն ~ ուազմիկները, հուզվում սովորական մըջյունը բանվորները, զգում են փորձանքը մեծագույխ կույրերը: Պետք ե պաշտպանել հարազատ բունը, յերեխաներին, ընտանի անառուններին ու գույքը: Մըջնանոցից գուրս են թափվում և սպասում հակառակորդին: Իսկ անեղ ալիքը շարժվում և շարունակ ավելի ու ավելի մոտ: Առաջից վազում են «հետախույզները», ավանդարդում ու թեվերում կանոնավոր զորասյուններով շարվում են մըջյուն-ուազմիկները: Երանց հետեւից քիչ խառնիխուռն հետեւում են սովորական բանվորները:

Զորասյունների կողքերով ոլանում են մի քանի մեծագույխներ, կարծիս արշավանքը ղեկավարող հրամանատարներ լինեն:

Վերջապես զորքը հասնում և նպատակին ու սկսվում է կառավի ճակատամարտ: Գործի յեն գրվում ամուր ծնոտները: Կըռվում են իրար խառնված կույտերով, կովում են առանձին-առանձին: ահա յերկուը բռնում են իրար ծնոտներով և նրանցից մեկն աշխատում է փորիկով հարցածել մյուսի վերքին: Ի՞նչ ե անում նա կամ ինչ ե ցանկանում: Ահա տեսնք, նրա փորիկից արտադրվում ե քայքայիչ նեղուկ-թույն, վոր կոչվում ե մըջնաթռւյն: Յեթե նա վերքի վրա ընկնի, ապա մըջյունը եժան չի պրծնի — հասել ե նրա անխուսափելի վախճանը:

Այստեղ նայեցեք, ինչ ծիծաղաշարժ բան ե: մի քանի փոքրիկ շիկակարմիր աշխատավորներ շրջապատել են մի ու ուազմիկի ու անհավատավի կերպով նրան քաշըշում են. վերջապես շիկակարմիրներից մի համարձակը հարմար մոմենտ ե գտնում, բարձ-

րանում և հակառակորդի մեջքին և ծնոտների արագ շարժումով կըծում, պղկաւմ և նրա մեծ գլուխը—կորավ մեծագույխ հերոսը:

Մըջնանոցի մուտքի դռների մոտ նույնպես ահազին իրանցում կա. շիկակարմիրներն աշխատում են մըջնանոց ներխուժմանը:

Կերջապես նրանք հետ են մղում «պահակներին», անկարգ բաղմությամբ ներս խուժում սկվերի բունը, խլում յերեխաներին, հարսնյակներին, ուտեղու մթերքն ու հետ փախչում գեպի իրենց բունը:

Մինչդեռ գուրսը գեռ կոխվը շարունակվում է, բայց նկատելի չափով ավելի թույլ—սպատակն իրագործված ե. հաղթեցին շիկակարմիրները—ահա նրանք շտապով վազում են իրենց մըջնանոցը, տանելով իրենց հետ ծնոտներում բռնած հարսնյակներ, հատիկներ, անգամ սեղերի մեռելները, վորոնցով մտադիր են բերանները քաղցրացնել:

Ավերածության ու մահվան տխուր տեսարան ե. ավերած քուն, ցիր ու ցան հարսնյակներ, շաղ տված հատիկներ և ուազմի գաշտ՝ ծածկված սպանվածների դիակներով: Պոկված գլուխներով, փոտներով ու ծնոտներով, հենց այստեղ իրար են խառնվել միքանի շիկակարմիր ու սև մըջյուններ. նրանք հավաքում են վիրավորներին ու հաշմանդամներին և քաշ տալիս իրենց մըջնանոցները, վորպեսզի նրանց հնարավոր ողնություն ցույց տան...

Այսպես և շիկակարմիրների ու սեղերի պատերազմի ընդհանուր պատկերը: Բայց ահա այն արշավանքների նկարագրությունը, վոր շատ անգամներ դիտել ե ֆարը:

«Հունիսյան ու հուլիսյան շողերն ընկնելիս,—ասում ե նա, — յետ հաճախ տեսնում եմ այս շիկակարմիր զինվորականներին, վորոնք հետմաշյա ժամերին գուրս են գալիս և արշավանքի ուղեկորվում: Նրանց զորասյունը 56 մետր յերկարություն ունի: Յեթե ճանապարհին ուշագրության արժանիքան չի պատահում, այն ժամանակ շարքերը կարգով են շարժվում: Բայց ոտար մըջնանոցի ամենափոքր նշաններ նկատելիս, առաջընթաց ջոկատը կանգ ե առնում և ցրվում անհանդիստ ամբոխի նման: Հետախույզները բաժանվում են, գտնում սխալը, և արշավանքը կրկին շարունակվում է: Զորքն անցնում է այգիների, ծառուղիների միջով, անհայտանում խոտերի մեջ, հետո կրկին հայտնվում, անցնում և չոր տերենների կույտերի վրայով ու կրկին սկսում փնտուել ըստ

վորում փնտում ե բախտահույսորեն: Վերջապես սկսերի բունը գոնված ե. շիկակարմիներն շտապով իջնում են այն ննջարան-ները, վորտեղ գրված են սելքերի հարսնյակները և շուտով վերադառնում ավարով:

«Ահա այդ ժամանակ ստորերկը քաղաքի դռների մոտ սկսվում ե իրենց գույքը պաշտպանող սեվերի յեռանդուն կոիլը շիկակարմիների դեմ, վորոնք աշխատում են հափշտակել այն: Հաղթությունը մնում է շիկակարմիների կողմը: Նրանք շտապում են դեսլի իրենց բնակարանը, ամեն մեկն իր ծնոտներում բռնած ավարը՝ բոժոժի մեջ փակված հարսնյակին...»

«Տարածությունը, վորով կողոպտիչ զորքը փոխադրում ե հարսնյակներին, տարբերելի ինում. յերբեմն հազիվ 10—20 քայլ այլ գեղղերում նա ստիպված է սողալ 50—100 և ավելի քայլ: Մի անգամ յետ տեսա, վոր հարձակումը կատարվում է մի այգու հետեւում. ուղղմիկներն անցան ցանկապատի վրայով, առաջ զնացին ու հասան մինչև հացանատիկ ցանկած դաշտը:

«Ինչ վերաբերում ե ճանապարհին, այդ մինչեւյն և զորքի համար՝ լինի գա մերկ գետնին իրա աճած խոտ, կամ չոր տերեների կույտ, քարեր, թփեր, այդ բոլորի վրայով անցնում ե նա առանց նկատելի խտրություն դնելու նրանց մեջ: Շիկակարմիր մրջյունները ծանրաբեռնված ավարով յերբեմն վերադառնում են իրենց բունը շատ գժվարին ճանապարհով, վորն առաջին անգամ անցնում են շնորհիվ վորսի պատահականությունների: Նրանք գնում են ալճեղով, վարեղով արգեն ներտեք տեցել են: Այդ նրանց համար այնքան ստիպողական անհրաժեշտություն է, վոր խիստ հոգնածությունը, մինչև անգամ վտանգը չեն կարող փոխել նրանց ուղղությունը»:

Թե ինչու յե զորքը «գնում այնտեղով, վորտեղով արդեն անցել ե», այդ մասին հետո կզրուցենք, իսկ այժմ շարունակենք մեր պատմությունը մրջնային պատերազմների մասին:

ՆԱՐԻՑ ՄՐՁԵՌՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հակառակորդի դեմ հարձակման դուրս յեկող մրջնային բանակները բաղկացած են լինում հազարավոր ուղղմիկներից: Մըրջյունների գնդերը շարժվում են յերբեմն շատ արագ—ձեզ լինթաց քայլով, ամեն մի բոպեյում մեկ ու կես մետր ճանապարհ կտրելով: Սակայն յերբ բանակը վերցնում ե իրենց բունը:

Այսպիսներից կողոպտած հարստությամբ, այն ժամանակ գնդերը գնում են զգալի շափով գանգաղ, վորովհետեւ բեռնված գնալը, իհարկե, ավելի գժվար ե, քան առանց բեռան:

Մըրջյունների պատերազմները յերբեմն բավական յերկարում են, միքանի որ կամ շարաթներ տեղում, յերբեմն եւ ընդհակառակը, պատերազմն արագ ե վերջանում—միքանի ժամ տեղող յերկու—յերեք արյունահեղ հակամարտերը վորոշում են՝ ուս կողմն ե հաղթությունը և տիրում ե խաղաղություն: Բայց կըրկնում եմ, գործը միշտ այդպիս արագ չի վերջանում: մի անգամ մի գիտնականի վիճակվում ե դիտել մըջյունների մի պատերազմ, վորը փոքր ընդհատումներով տեղել ե 46 որ, հունվարի 18-ից մինչև մարտի 4-ը:

Շատ հետաքրքիր ձեվով ե պատերազմը վարում արնագույն կամ աշկարմիր մըջյունը: Սովորաբար աշկարմիրների բանակը բաժանվում է մի քանի փոքր ջոկատների: Ջոկատների մեջ շարունակ շրջում են «հետախույզները»: Մոտենալով հակառակորդի բնին, այդ փոքրիկ ջոկատը չի վստահանում հարձակվել, այլ ուշագիր զնում ե հակառակորդի զորաբանակը, առաջ «հետախույզներ» և ուղարկում և սպասում ոգնական ուժերի: Յել ահա այդ ուժերը մատենում են, մի քանի փոքրիկ ջոկատներ միացան իրար հետ և սկսվեց թշնամու բնի պաշարումը: Հարձակվողներն ողածե շրջապատում են բունը և զորքերը չորս կողմից գանգաղորդեն ավելի ու ավելի մոտենում են հակառակորդի բնակարանի յելքի ու մուտքի անցքերին: Նրանք արդեն անցքերի մոտ կանգնած են: Ամեն մի անցք շրջապատված է և պահպանվում է գրոհների առանձին ջոկատով: Պաշարվածները վերցնում են իրենց հարսնյակներին և պատրաստվում են դուրս փախչելու բնից: Բայց յելքի անցքերի մոտ կանգնած աշկարմիրները նրանց ճանապարհ չեն տալիս—նրանք փախչողներից կամ խլում են հարսնյակները, կամ փախստականներին հետ քշում իրենց բունը: Իսկ յեթե մրջյունը դուրս ե վազում առանց հարսնյակի, նրան բաց են թողնում: Մի քանի ժամանակից հետո համարյա բոլոր մըջյունները մեկ-մեկ դուրս են գալիս բնից, հակառակորդին թողնելով իրենց հարսնյակները: Իսկ վերջնինիս ել հենց այդ և պետք: Համերաշխ խմբով նրանք իջնում են թշնամու բունը, հավաքում հարսնյակները ու փոխադրում իրենց բունը:

Աշկարմիր մըջյունների գլխավոր խնդիրն իրագործված է: Նրանք այժմ ունեն ոտար հարսնյակների մեծ պաշար:

Այսպիսով դուք տեսնում եք, վոր ալ-կարմիր մըջյունները, շինակարմիրների նմանությամբ, նախքան թշնամու բունը «սեղմած շարքերով ու ամբողջ ճակատով շրջապատելը», հետախուզության են ուղարկում առանձին լրտեսների: Նրանք նախորդ հետախուզում են հակառակորդի բունը և գրանից հետո միայն բանակը ձեռնարկում է հարձակման:

Դրանից զատ ալ-կարմիրներն ունեն պատերազմական տաքատիկայի մի այլ հետաքրքր գիծ: Այս մըջյունները գերազասում են արշավանքի դուրս գալ փոքրիկ չոկատներով: Զոկատներն ավելի կամ պակաս չափով անկախ են դործում իրարից, սեփական ուսկով և պատասխանատվությամբ: Իսկ յեթե վարեն տեղ նրանք պատահում են ուժեղ դիմադրության, այն ժամանակ շտապում են միանալ: Բայց այդ բանը նրանց միշտ չի հաջողվում՝ միշտ ե, սև մըջյունները, վորոնց հետ սովորաբար պատերազմում են ալ-կարմիրները, մեծ մասամբ ապրում են փոքրիկ գաղութներով, հետևապես կարմիրների փոքրիկ չոկատների համար այնքան ել դժվար չեն նրանց հաղթելը: Բայց հաճախ պատահում ե այնպիս, վոր ինչպիս առում են՝ ջուրը չտեսած բրդանում են՝ ջոկատը անսպասելիորեն հանդիպում ե սև մըջյունների ուժեղ ընի, կովի յերսին վունվում ու սաղմի դաշտում ջարդվամբող չոկատով, շնորհիվ պարտիգանորեն դործելու վոչ միշտ արդարացվող այդ յեղանակի: Մըջյունների կյանքը բարդ բան ե: Այդ պատճառով ել ամեն տեսակ դժությունների և վեճ ու կոփմերի առիթները շատ են պատահում, ինչպիս, որինակ՝ հաճախ նրանց մեջ պատերազմ ե բռնկում «սահմանային վեճերի» շուրջը:

Դիցուք վորեն քարի տակ, հենց կողք-կողքի ապրում է յերկու գաղութ, վորպես հարեւան: Յուրաքանչյուր գաղութի սահմանները խիստ վորոշակի բաժանված են միջնապատերով: Անցնել այդ սահմանները վոչ վաք չի համարձակվի, իսկ յեթե անցնի, խիստ կպատճի, լավ ե, յեթե բավականանա միայն դուրս քշելով, թե չե կարող են տեղն ու տեղն սպանել:

Բայց ահա յեկավ մի մարդ և հետաքրքրությունից քարը շուրջ տվեց, սահմանները վոչնչացված են, մինչև այժմ խաղաղ ապրող հարեւանների հանգիստը խանգարված ե: Պետք է վեճը շուրջ վճռել «զենքի ուժով»: և կոխին սկսվում է, նա տեղում է մեկ, յերկու որ, յերեխն՝ ամբողջ մի շաբաթ: Յեթե վիճող կողմերի ուժերը հագուստը են, խաղաղությունը վերականգնվում է միայն այն ժամանակ, յերբ յերկու գաղութն ել «վերականգնում են իրենց

իրավունքները»: Այսինքն, կրկին սահմանագծվում են ինչպես վոր պետք ե ու նորից շինում իրենց տիրապետությունը բաժանողի հոգի պատճենները: Բայց յեթե պատերազմող յերկու համայնքներից մեկն ու մեկն ավելի ուժեղ ե մյուսից, այն ժամանակ գործը վերջանում է նրանով, վոր թույլերին բոլորովին վոնդում են իրենց հարազատ բնից և հաղթողներն այդպիսով «լորացնում են իրենց տիրապետությունը»:

Պատերազմ կարող է բորբոքվել և այն ժամանակ յերբ միենույն ցեղին պատկանող յերկու գաղութները բնակվուժ են իրար շատ մոտիկ: Այս գեղքում արդեն կովի առիթները չեն կարող հաջուկի:

Այդ տեսակետից շատ հետաքրքիր են փոքրիկ ու սև մըրջյունները, վորոնք հարյուրավոր գաղութներով բնակվում են իրար շափազանց մոտիկ: Սրա հետևանքով ել նրանց մեջ հաճախակի կոփմեր են անդի ունենում:

«1886 թվի հունիսի 8-ին,—գրում ե Վասմանը,—մի ավագոտ բանուկ ձանապարհի վրա յես գտա ձմի մըջյունների մի խկական ուղմաղաշտ: Կոլողների թիվը հասնում էր հաղարների և ամբողջովին ծածկում 80 սմ յերկարության և 10 սմ լայնության մի հողակտոր:»

«Կովող բազմության մեջ մըջյունները զատ-զատ չեյին նկատվում, այլ յերեսում ելին 2—14 կովողներից բաղկացած անկանոն ձևի կույտեր, վորոնք փոխադարձաբար միմիկ ելին իրար ու թույն ելին շաղ տալիս միմյանց վրա... Կոփմերը վերջացավ հավանութեն մմի մըջյունների յերկու պետքանություններից մեկն ու մեկի ներկայացուցիչների արտաքսումով կամ իսպառ վոչնչացումով»...

Ինչպիս հաճախ մարդկանց պատերազմները վերջանում են գեռ վոչ վազուց իրար վոչնչացնելու պատրաստ հակառակորդների գաշինքով, նույնն ել նկատվում է յերեխն և մըջյունների մոտ: Ամենից հաճախ այդպիսի դաշինքներ կողմում են միենույն ցեղի մըջյունների մեջ—որինակ կարմիր մըջյունների համայնքների միջև: Բայց պատճառում ե այնպիս, վոր տարբեր ցեղերի համայնքներն ել սիսնում են և կազմում: մի ընդհանուր խառը կարգ մըջնախոց:

Սովորաբար դա տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ թշնամիները միատեսակ ուժ ու քաջություն ունեն, յերբ նրանց վեճը պատերազմով չի լուծվում, վորովհետեւ հակառակորդ կողմերից մեկը մյուսին հաղթել չի կարող: Այդպիսի գեղքերում կոփմերից յեկավ մյուսին հաղթել չի կարող:

Ները վերջանում են նրանով, վոր թշնամիներն սկզբում իրար ներկայությունը մի կերպ տանում են, իսկ հետո միանում, գաղանակից մի համայնք կազմում:

ՍՏԻԿԱՏԵՐԵՐ

Կարմիրներն ու շիկակարմիրներն ի՞նչ կարիք ունեն ոև մըջյունների: Ինչո՞ւ յեն տանում նրանց հարսնյակներն ու թըրաժուններն իրենց մըջնանցը: Սև գերիները պարտավոր են իրենց շիկակարմիր ու կարմիր «տերերի» համար կատարել «ստրուկների» կամ ավելի ճիշտ ծառաների ու ոգնականների դեր—այդպես և այն յերիտասարդ մըջյունների ճակատագիրը, վորոնք դուրս են յեկել պատերազմի ժամանակ հափշտակված հարսնյակներից:

Տարբեր մըջնանոցներում «ստրուկների» կատարած գերը տարբեր է լինում: Յերբեմն նրանք հավասարապես աշխատում են այն մըջնանցի այլ բան վորների հետ, վորտեղ նրանց տարել են—կատարում են դաշտակների, կերակրողների, շինարարների, վորոսորդների և այլ պարտականություններ: Այլ գեպքերում նրանք պարտավորվում են մըջնանցի ներսում բացառապես տնտեսությամբ զբաղվել, այսինքն «տերերին» խնամել ու յերեխաներին կերակրել: Կարմիր մըջյունների «ստրուկների» դրությունը համարյա վոչչով չի տարբերվում «տերերի» դրությունից:

Այդպես չե շիկակարմիրների մոտ, վորտեղ «տերերը» բառին բուն մտքով վոչինչ չեն անում: Բանվոր մըջյուններին դու այստեղ ըոլորովին չեն ճանաչի: Նրանց միակ զբաղմունքը պատերազմն ե, վոր նրանց հարստացնում ե նոր ճարտերով: Մնացած բոլոր բաներում նրանք ուղղակի խոճուկ արարածներ են իրենց անողնականությամբ: Բանն այն ե, վոր այս մըջյունները վոչ միայն իրենց համար քներ չեն շինում, ուտելիք բերելու չեն գնում և իրենց յերիխաներին չեն խնամում, այլ անգամ ուտելին ել մոռացել են. այդ բոլորը, մինչև անգամ «տերերին» կերակրելը, «ստրուկների» պարտականությունն ե:

Այժմ դուք կարող եք պատերացնել, թե ինչ տխուր, թերեւ ծիծաղելի դրության մեջ ընկած կլինեյին «պարունները», յերբ գիտական դիտող նշանավոր Գյուրերը այս ստրկատերերի ու ծառաներին ճեռացրել ե բնից: Նրանցից շատերը սովոր ստակեցին: Ավելի դիմացկունները քաղցից ընկել եյին, վոր նույն-

ակես կմեռնեյին, յեթե նրանց մոտ բաց չթողնեյին մի քանի ու մըջյունների, վորոնք անմիջապես սկսեցին լիզել ու կերակրել սրանց:

Այս «ստրկատերերը» մինչև անգամ կորցրել են շարժվելու ընդունակությունը, ոյնպիս վոր, յեթե վորեւ պատճառով, ասենք՝ պատերազմի գեպքում, նրանք ստիպված լինեն աեղափոխվել մի այլ ապահով տեղ, ծառաներն են նրանց շալակած տանում:

Շիկակարմիր ստրկատերերի ծնոտներն ել մինչև անգամ այնպես են կազմված, վոր նրանցով ավելի հարմար ու հեշտ է հակառակորդի գրությը պոկել, քան մի կտոր շաքար կրծել: Յեկ գրա համար ուտելու ժամանակ «ստրուկ» սպասավորը պետք է ուտելիքն ուղիղ «տիրոջ» բերանը դնի—այն ժամանակ «ստրկատերերը» կուլ են տալիս և խկույն բերանը լայն բաց անում, սպասելով նոր բաժինն ստանալու, իսկ յեթե ստրուկը մի քիչ ուշանում ե, —ասենք՝ հենց թեկուզ նրա համար, վոր ինքն ել ուզել ե իր բերանը մի քիչ քաղցրացնի, —այն ժամանակ պարունը մոտենանում է ստրուկին, յեռանդով բաղխում նրան իր բեխիկներով կամ վոտներից ձգում:

Այսպիսով մեր աչքի առաջ են մըջյուն-ստրկատերերի յերկու ցեղ՝ շիկակարմիրներ, կարմիրներ:

Շիկակարմիրների համայնքում ստրուկների թիվը համարյա միշտ ավելի յել լինում, քան տերերի թիվը. կարմիրների մոտ, ընդհակառակը—տերերի թիվը ե ավելի, քան ստրուկներինը: Վորքան ուժեղ ե տիկակարմիրների համայնքը, այնքան մեծ ե նրա սպասավորների թիվը, իսկ կարմիրների մոտ կը կին ընդհակառակն ե. ամենամեծ գաղութները պահում են ամենափոքը թվով ստրո. կներ, մինչդեռ փոքրիկ թուղլ գաղութներն առանձնապես շատ ստրուկներ ունեն. ուժեղ համայնքներում ստրուկների թիվը տասնակների յե ժամանում, իսկ թույլերում հարյուրների: Ամենաուժեղ գաղութներում հարյուր տիրոջը մի ստրուկից ավելի չի ընկնում, իսկ ամենաթույլերում հաճախ ամեն մի «տեր» մի «ստրուկ» է ունենում: Յեկ շիկակարմիրները, և կարմիրներն ոտար հարսնակների կողոպտիչներ են, ստրկատերեր, իսկ ինչո՞ւ նրանք տարբեր քանակի սպասավորներ են պահում իրենց մոտ:

Սրան միայն մի պատասխան կարող ել լինել. շիկակարմիրները բոլորովին անողնական ժողովուրդ են, նրանց ներքին տնտեսական կյանքը պահպան է միայն ստրուկների աշխատանքով:

Յեվ զրա համար, վորքան բազմամարդ և նրանց համայնքը՝
այնքան ել նրանք ստրուկների աշխատանքի ու ծառայություն-
ների կարիքն ավելի յին գգում:

Բոլորովին այլ ե կարմիրների բանը: Ստրկատերեր լինելով
հանդիք, նրանք միկնույն ժամանակ չեն կորցրել աշխատանքի
իրենց ընդունակությունները, նրանք այնպես անոփնական չեն,
ինչպես շիկակարմիրները. Նրանք անհամեմատ պակաս կարիք են
զգում ստրուկների աշխատանքի, քան վերջինները: Դրա համար
ել վորքան ուժեղ ե կարմիրների համայնքը, այնքան ել քիչ ե
նրա մեջ ստրուկների թիվը—յիրքեմն պատահում են կարմիրնե-
րի այնպիսի գաղութներ, վորտեղ սպասավորներ բոլորովին չկան-
խակ շիկակարմիրների մոտ այդպիսի բան չի կարող լինել, վո-
րովհետև նրանց կյանքն առանց ստրուկների կյանք չի, այլ
մահ...

Հետաքրքիր բան ե ստրկատիրությունը. վորքան հարցեր
և բարձրացնում նա մարդու սեջ, որինակ:

Մենք գիտենք, վոր մրջյունն ոժոված ե գեսահասներին
գաստիարակելու անհաղթելի ձգումով—գաստիարակում և վոչ
միայն իր թրթուրներին, այլ որանց քիչ թե շատ նման այն
բգեղների թրթուրներին, վորոնք, ինչպես տեսանք, շատ տհաճու-
թյուններ են պատճառում համայնքին—այնքան ուժեղ ե նրա
«գաստիարակելու», «վորդեգրելու» հակումը:

Հարց ե ծագում, չի՞ շիփոթում արդյոք մրջյուն ստրկատերը
սև մրջյունի հարսնյակներին իր սեփականների հետ: Դրանց չի՞
արդյոք, վոր նա այնպես հոգատարությամբ խնամում ե նրանց,
վորովհետև ընդունում ե նրանց իր «արյունակից» յիրեխանների
տեղ:

Բայց վոչ, կարծես այդ այնքան ել ձիշտ չե: Վերցնենք կար-
միր ստրկատիրոջը, Յերբ նա ոտար բուն և թալանում, իր մոտ
տանում ե ասեն տեսակ հարսնյակներ—և նրանց, վորոնցից պետք
ե սև արուներ և եգեր գուրս գան, և այն տեսակները, վորոնք
ժամանակին դառնալու յին սև աշխատավորներ: Ի՞նչ ե անում նա:
Առաջիններին ուտում, վոչնչացնում ե, յերկրորդներին դաստիա-
րակում. պարզ ե, վոր նա գործ չունի սև արուների ու եգերի
հետ:

Նրան պետք են ոգնականներ իր սեփական բանվորներին
գաստիարակելու համար: Յեվ ահա այդպիսիներին նա ստանում
և այն հարսնյակներից, վորոնցից պետք ե սև ստրուկներ դուրս գան:

Կամ մի ուրիշ բան: Կարելի յե՞ առել, վոր մրջյուն ստրկա-
տերը միշտ սիկնույն ցեղի մրջյուններից ե վերցնում իր «սպա-
սավորներին», ասենք հենց անպայման սերից:

Կրկին վերցնենք նույն ալ-կարմիր մրջյուններին: Ովքեր
են նրա «սպակուկները». արդյոք ելի նույն սերից, վոչ, նա զեմ
չե շահագործելու նույնպես մրջային այլ ցեղերի ևս: Նրա հա-
մայնքների մեջ դուք հաճախ կտևնեք բավական խայտարդիտ
ազգաբնակչություն... այստեղ ե ահա ի՞նքը—«տերը» և ծառա-
ների բազմազան խումբը, վոր բաղկացած ե սև, մարդագետնի և
անտառային մրջյուններից: Կարմիր ստրկատերն այդ տեսակե-
տից այնքան ել բծախնդիր չե—նրան միայն հարկավոր ե, վոր
սովորական համար ոգնականներ լինեն, իսկ թե նրանք ինչ
«ազգից» են, այդ նրան քիչ ե հետաքրքրում:

Այդ պատճառով ել, յեթե նրա բնի մոտ ածենք մի խումբ
սեվ, տեսառալին կամ մարզագետնի մրջյուններ իրենց հարսնյակ-
ների ներ միասին, այն ժամանակ նա հասակավորներին կքշի, իսկ
հարսնյակներին իր համայնքը քաշ կտա, նրանցից իր համար նե-
ցուկներ դաստիարակելու:

Այստեղ պետք ե ուշադրություն դարձնել մի շատ կարևոր
հանգամանքի վրա:

Յեզ հետ միասին մենք տեսակ վոր անգամ միկնույն տեսակ
բնակչություն ունեցող մրջանցում աշխատանքը բաժանված ե
մրջյունների տարբեր «կաստաների» միջեւ—նրանցից վուանք մաս-
նակցում են միայն հարսնյակների վրա գործած արշավանքներին ու
ճակատամարտերին. Պրանք ոազմիկներ են, մյուսները բանվաներ
են, վորոնք զբաղված են զանազան տեսակ խաղաղ գործերով,
իսկ այնտեղ, վորտեղ մրջնանցը խառն ե, հավաքական, վուանք
պահում են իրենց վորպես «տերեր», իսկ մյուսները հանդիսա-
նում են նրանց «ստրուկները», «ծառանները»: Ի՞նչո՞ւ յե այդպես
վերտեղից առաջացավ «սոցիալական դրաման» այդպիսի տար-
բերություն:

Այստեղ բան այն ե, վոր վուանք մոլի «սուպիկներ» են
կամ «թրեվ յեկողներ», իսկ մյուսները, ընդհակառակը, տողորված
են ասեն տեսակ «առաքինություններով» և տարբերվում են
իրենց «անշահախնդիր» սիրով զեպի աշխատանքը: Իհարկե, վոչ
վոք չի վործի ժխտել վոր շնորհիվ կյանքի անողոք պայման-
ների, ժամանակի ընթացքում առաջինների մեջ զարգացել ե առան-

Հին «ռազմասիրական» կամ «ստրկատիրական» բնագդ. իսկ յերկրորդների մեջ ստեղծվել և անպարտելի, իրենց համար իսկ անհամանալի ձգում դեպի խաղաղ կյանքը: Սակայն, այստեղ կամ մի ուրիշ հիմնական պատճառ: Այսինքն՝ մըջունների զանազան դասերը—բանվորները, ռազմիկները, տերերը, ծառաները կտղմակերպված են, այսինքն՝ կազմված են այնպես, վոր նրանք ի վիճակի յեն միայն վորոշ գործ կտարել:

Ամեն մի դաս ֆիզիկապես անընդունակ է փոխելու իր գործունեյությունը և այլ աշխատանքի անցնելու դե, իհարկե, բանվորն ինչպես կարող է, որինակի համար, փոխարինել զինվորին, քանի վոր նո չունի այնպիսի ուժեղ ծնոտներ, վորոնցով բնությունն ոժել և զինվորին և վորոնք հատկապես նախասահմանված են «պատերազմի ու հաղթությունների համար»: Յեվ, ընդհակառակը, ռազմիկները կարող են կերակրել յերեխաններին, քանի վոր նա ուտելիքը մատուցելու գործար աններ չունի: Նրանցից ամեն մեկը՝ թե ռազմիկը և թե բանվորն ունեն առանձին բնագդ և համաձայն այդ բնագդի՝ մարմնի համապատասխան կառուցվածք:

Ճիշտ նույն ձեռվ, որինակի համար, շիկալորմիր մըջունների ռազմասիրական հակումներն ու «ստրկատիրական» բնագդն ամուր կերպով կազմված են նրանց մատմի այս կամ այն մասի կազմվածքի հետ. նրանց մոտ զարգացած չեն այն որդանները, վորոնք անհրաժեշտ են ուտելիքը կրծելու և բնի ներսում աշխատելու համար: Այդ նույնը չենք տեսնում մենք «ստրուկների» և «ծառանների» մոտ: Մըջունների այս դասը վոչ միայն բնագդ ունի, վոր դրդութե նրանց հոգատարություն ցույց տալ ուրիշների հանդեպ, այլև ունի բոլոր այն գործարանները, վորոնք անհրաժեշտ են նման «իրազալ» աշխատանքի համար:

Այսպիսով անկանկած ե, վոր մըջունների բաժանումն առանձին «գտասերի», բանվորների, ռազմիկների, ծառաների և այլն կատարել և աստիճանաբար—դարերի ընթացքում: Ընդամեն ամեն մի «գտասի», ինչպես իրեն հատուկ քնազդն ու սովորությունները, նույնպես և նրանց մարմնակազմի փոփոխություններն առաջեցել են միաժամանակ, Այս կամ այն բնագդի գոյացման հետ իսկ հայտնվել ու զարգացել են նրանց որդանիզմի այս կամ այն մասերի կազմվածքի փոփոխությունները, փոփոխությունները, վորոնք անհրաժեշտ են մըջուններն նրա համար, վորպեսզե՞նա կարողանա զբաղվել իր մեջ նոր գոյացած բնագդի պահանջների համաձայն: Յեվ վերջիվերջո այնպես գուրս յեկավ, վոր

մըջնանոցում լինում են մըջյուններ, վորոնք ֆիզիկապես անընդունակ են վոր և տեսակ գործ կտարելու, բացի այն, վոր, կարծես թե բնությունն ինքն և նախատեսել նրանց համար:

Նորից մի գիտողություն: Ցերք մենք ասում ենք «ստրկատիրեր» կամ «տերեր», «ստրուկներ» կամ «ծառաններ», այդ պետք են հականաւ իհարկե, վորպես մի պատկերավոր արտահայտություն:

Չե վոր շիկակարմիր մըջյունների ամբողջ համայնքի, մինչև անգամ հենց իրենց՝ տերերի կյանքն ամբողջովին գտավում են ստրուկների ձեռքում, վորովհետեւ, ինչպես մենք տեսանք, նրանք ինքնություն կերպով ուտելի իսկ մոռացության են տվել: Իսկ կարմիր ստրկատերերը, վորոնք իրենց ծառանների հետ հավասար կերպով ամեն բան անում են, վերջինների գրությունը վոչնչով չի տարբերվում տերերի գրությունից:

ՖԱԲՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շատ անգամ արդեն խոսվեց այն մասին, վոր մըջյունները «ձանաչում են» իրենց համաքաղաքացիներին և նրանց հեղտությամբ «տարբերում» ոտարականներից: Բայց ինչպես են հասնում նրանք այդ բանին, ինչից են՝ ոգտվում: տեսողությունից, թե վորին այլ զգայարանից:

Շատ գիտնականներ—իսկ առաջին հերթին վասմանը—յենթաղրում են, վոր մըջյուններն այդ ժամանակ դեկավարվում են հօտառության զգայարանավ, հօտավ են ձանաչում յուրայիններին ու տարբերում ոտարականներին:

«Միհնույն գաղութի անշամակիցները, ասում են Վասմանը, ունեն միեվնույն նույր բնային մի նոս և ընդունակ են լիզելու միջոցով այդ հոտը սալու մինչև անգամ այլ արարածների»: Իսկ վմբռտեղից և այդ «բնային հոտը», ինչ միջոցներով են ձանաչում մըջյուններն այդ հոտը:

Մըջյունն ունի բբային զեղձեր—փոքր տոպպակներ, վորոնք թուք են պատրաստում: Այս թուքն ունի իր հոտը և մըջյունների ամեն մի ցեղի թուքն առանձին տեսակ հոտ և արձակում: Այնուհետեւ մըջյուններն ունեն բեխիներ, վորոնցով նրանք մշտապես խփում են և իրար, և զանազան առարկաների, ինչպես չնչազոր նույնպես և անշունչ: Այդ բեխիները մըջնի կյանքի համար զանազան դեր են խաղում: Նրանք ծառայում են վոչ

միայն առարկաներ շոշափելու, վոչ միայն «խոսակցությունների» համար, այլև զանազան հոտեր զգալու համար—մըջունների համար այդ բեխիկները նույնն են, ինչ վոր քիթը մեզ համար։ Մենք հոտն զգում ենք քթով, իսկ նրանք՝ բեխիկներով։

Նրանցով իրար գիպչելով՝ նրանք կարծես թե հոտ են քաշում, այդ ձևով հոտով տարբերում են յուրայիններին ոտարականներից, բարեկամներին—վոչ բարեկամներից։

Մի խոսքով՝ թքի հոտն ու բեխիկները—ահ ո այն գենքը, վորի ոգնությամբ մըջունները ճանաչում են իրենց համաքաղաքացիներին, ցեղակիցիներին—վոչ բարեկամներին։

Վասմանն այսպես է կարծում։ Այդպես են մտածում, կըրկնում եմ, և շատ ուրիշ գիտնականներ, վորոնց թվում և Ֆորելը։ Այս վերջինը մի անգամ այս տեսակ փորձ է կատարել։ Նա մի ամբողջ բուռմարգագետնի մըջուններ և դնում այն բնի մոտ, վորուել բնակվում եյին կարմիր ստրկատերեր, և հենց մարդագետնի ստրուկներ։ Յեթե մըջուններն իրար ճանաչեյին տեսողության ոգնությամբ, ապա այս խառը բնի թե տերերը և թե ծառաները յեկվորներին պետք է բարեկամաբար ընդունեյին, այնպես չե։ Չե վոր կարմիր տերերն այստեղ ապրում եյին մարդագետնային ծառաների հետ միասին։ Մըջունների ներկայությունն իրենց բնում չպետք է նրանց տարորինակ կամ ինչ-վոր անսովոր յերեւոյթ թվար, մյուս կողմից և նրանց ծառաները չեյին կարող յեկվորներին յուրայինների տեղ չընդունել, վորովհետև դրանք ել իրենց նման մարդագետնային մըջուններ եյին։

Բայց ինչ պատահեց իրոք,

Կարմիրներն արագ նետվեցին յեկվորների վրա և նրանցից շատերին խեղղեցին ու սպանեցին։ Ճիշտ ե, մարդագետնայինները չմասնակցեցին այս վայրենի կովին, բայց միենույն ժամանակ իրենց ցեղակիցներին վորեւ ոգնություն զլացան ցույց տալ։ Յերեսում եր, վոր նրանք լավ չեն ճանաչում նրանց, անվտահությամբ են վերաբերվում, և մի առ ժամանակ անցնելուց հետո միայն սկսեցին իրենց բուռնը քաշ տալ նրանց։ Անցավ միքանիք որ կարմիրները վոչ մի կերպ չեյին մեղմանում ու միշտ ել նեղացնում եյին յեկվորներին։

Իսկ ստրուկներն առաջվա նման սառնասիրա վերաբերմունք եյին ցույց տալիս նրանց։

Միայն մի շաբաթ անցնելուց հետո բնում խաղաղություն

ու համաձայնություն տիրեց ու բոլորն ել սկսեցին բարեկամաւրար ապրել իրար հետ։

Ինչնիվ բացատրել այդ պատմությունը։ Քանի վոր յեկվորները պահում եյին իրենց «ընային հոտը», կարմիրները նրանց գլուխում եյին, մարդագետնի մըջուններն ել չեյին ճանաչում, իսկ յերեսում մի շաբաթ ապրելով ստացան այն համայնքի «ընային հոտը», վորտեղ ընկել եյին ճակատագրի և ֆորելի կամքով, սկսեցին նրանց հետ վարվել ինչպես յուրայինների հետ։

Դուք արդեն գիտեք, վոր մըջունները՝ թե խարապանները, թե ննձվորները, թե տերեւահատները, շեկերը և կարմիրները—հաճախ մեծ տարածություն են անցնում, իրենց բնից բավական չեռանում, բայց այսուամենայնիվ կրկին տուն են վերագառնում, ճանապարհը չեն կորցնում։ Բնականորեն հարց և առաջանում—բնչպես են նրանք ճանապարհը ճանաչում։

Հայտնի ե, վոր արշավանքից կամ վորսից տուն վերադառնալիս մըջունները նետ են գալիս այն նույն նանապահով, վօրով զնացել են, ինչքան ել գժվար ու վորորապտույտ լինի այդ ճանապարհը, միշտ նրանով են յերթեկեկում և իրենց մարդուտը բնավշեն փոփոխում։ Ակնհայտ ե, վոր ինչ-վոր մի բան ստիպում ե նրանց վարվել ուղիղ այդ ձևով և վոչ այլ կերպ։

Ի՞նչն ե այդ—ահա հարցը։

Մի ժամանակ յենթաղբում եյին, թե մի տեղից մի այլ տեղ տեղափոխելիս մըջուններն իրենց անցած վայրերում բուրիչ նետք են թողնում և հետո այդ նույն հետքով հետ վերագառնում։

Այլ կերպ ասած՝ կարծում եյին, վոր այդ գեղքում ևս նրանք հոտով են դեկախորհում։

Սակայն փրանսիացի գիտնական ֆաբրը,—վորի մասին յես արդեն մի քանի անգամ եմ հիշել, ցույց տվեց, վոր այդպիսի բացատրությունը ճիշտ չե։ Խորհուրդ եմ տալիս լսել նրան—հետաքրքր եւ։

Ահա շեկակարմիրները դուրս յեկան արշավանքի, ֆաբրը և իր փոքրիկ թռանիկը մի կույտ քար հավաքած, սկսեցին քայլ առ քայլ հետևել մարտիկների լարմանը, քարեր գցելով նրանց անցած ճանապարհին։ Վորտեղից անցնում եյին մըջունները, այսուեղ քարեր եյին դնում։

Մինչև շեկակարմիրների տուն վերագառնալը բավական ժամանակ անցավ։ Դնում եյին նրանք, ինչպես և պետք եր սպառել, քարերով նշան արած ճանապարհով։ Մինչև բուն հասնելը

Ֆնում եր հարյուր քայլից վոչ ավելի, յերբ ֆարբը խողանակը վերցնելով, սկսեց նրանով մըջյունների անցնելիք մնացած ձանապարհը յետանդով սրբել: Նա այսպես եր մտածում. «յեթե մըջյունները գնում են բուրիչ հետքով, այն ժամանակ, խողանակով սրբելուց հետո, ձանապարհի հետքը կոչնչանա և մըջյունները ձանապարհը կորցնեն»: Յեզ նրանց մեջ իսկապես մեծ շփոթություն առաջացավ. յերբ նրանք հաստի այնտեղ, վորտեղ ֆարբը խողանակով տրորել եր—սկսեցին հուզվել—վոմանք հետ դասան, բայց շուտով կրկին վերադարձան—մյուսն երը ցրկեցին ձանապարհի կողքերին, յերբորդները փորձեցին պտույտ տալ անծանոթ տեղը:

Սակայն շուտով մի քանի մըջյուններ բախտի վրա հույս զբած շարժվեցին ավելած ձանապարհով—այն ժամանակ կարդը վերականգնվեց—բոլորն ել ուղղվեցին խիզախների հետքով և հաջողությամբ հասան բունը:

Բանն ինչումն ե այստեղ: Ի՞նչը շփոթեցրեց մըջյուններին, և ձանապարհը կորցնելով ի՞նչպես կարողացան նորից գտնել այնու արագ քայլով ուղղվեցին դեպի բուն: Այնպես ե դուրս գալիս, վոր իբր թե նրանք իրոք վոր հօտով են դեկագրվում: Կարող ե պատահել վոր խողանակն իր գործը լավ չեր կատարել, բուրիչ հեաքը լրիվ սրբած չի յեղել, մըջյուններն սկզբում լավ չեն ձանաչել, իսկ հետո հոտ քաշելով ինչպես վոր պետք ե, դասան, ինչ վոր կորցրել եյին, սթափվեցին և առաջ շարժվեցին նախկին ձանապարհով:

Ֆարբը հավատացած չե արդյոք այդ այդպիս ե: Վորոշում ե կրկնել իր փորձը, բայց այս անգամ ուրիշ ձևով արդեն—այնպես, վոր վոչ մի կասկած չնախ այլն:

Գործը տեղի յե ունենում ֆարբի տան մոտիկ այգում: Այստեղ կար մի կաշեփող, վորով ջրում եյին պարտեզը: Ֆարբը վորոշում ե հենց այդ ոգտագործել խողանակի փոխարեն: Ջրի շիթն ավելի լավ կլվանա բուրիչ հետքը, յեթե նա կա, իհարկե, քան վորեւ խողանակ:

Ան նորից արշավանքի շարժվեցին շիկակարմիր հափշտակիչները: Ֆարբն ու իր թոռնիկը կրկին ձանապարհը նշում են քարերով: Հետո բացվում ե ջրի ծորակը և մըջյունների անցած ձանապարհն արագորեն ջրվում ե խողովակով:

Մըջյունները հետ են դառնում: Նրանց ձանապարհը ծածկված ե ջրի վոչ խոր շերտով. սկզբում նրանք տատանվում են, բայց հետո վորոշում են, ինչ ել վոր լինի, ձանապարհ ընկնել հեղեղի միջով, այս ու այնտեղ լողացող խոտերի ոգնությամբ: Հատակը

կտրվում ե նրանց վոտքերի տակից, հեղեղը քշում ե ամենից խիզախներին: Նրանք վորսը բաց չիտղնելով, լողում են հոսանքի հետ, ընկնում բարակ տեղու կրկին սկսում փնտուել ծանծաղություն եւ առաջնում այս ու այն տեղ. այս խախուտ կամրջիկներով մըջյունները ձանապարհ են ընկնում:

«Զիթապողի չոր տերենները վերածվում են ձանապարհորդներով ծանրաբեռնված լաստերի: Ամենից ճարպիկները, մասսամբ սեփական ջանքերով, մասսամբ ել բախտավոր պատահարների ջնորդիվ անմիջապես հասնում են հակառակ ափիր:

«Մի քանիսը հեղեղից 2—3 քայլ հեռու քշված լինելով, շատ մտահոգված են ինչպես վարվելու հարցով: Այս ընդհանուր խառնաշղոթության մեջ, խեղդվելու վտանգի բուպեններին և վոչ վոք նրանցից վորսը բաց չի թողնում ձեռքից: Կարճ ասած՝ այս կամ այն կերպ հեղեղն անցել են ջորինիկ հին հետքի»: Զարմանալի համառություն եւ Մի անգամ անցած ձանապարհը, վոր հեղեղված ե ջրով, դժվարություններով ու վտանգն երով, մըջյուններն անպայման պետք ե նույն, միայն նույն տեղով անցնեն: Ի՞նչն ե նրանց այդպես ձգում: «Բուրիչ հետքը»: Բայց այդ այլս չկա: Յեթե նա յեղած ել լիներ, ջուրը միանգամայն սրբել, քեզ ե նրան: Վոչ, պարզ ե, վոր մըջյունները հոտառությամբ չեն դեկագարվում, այլ ինչ վոր մի ուրիշ բանով:

Սակայն ֆարբը վարանում ե դեռ այդպիսի յեղակացություն հանել: Նա ձեռնարկում ե նոր փորձի, և դատում ե այսպիս:

Փորձենք «մըջնային հոտը» ինդղել վորեւ այլ, ավելի ուժեղը բուրիչ նյութով: Նա, իհարկե, մըջյուններին կշփոթեցնի և նրանք ձանապարհը կիրըցնեն:

Յեզ ահա, մեր անխոնջ դիտողը թարմ անանուխ ե քսում մըջյունների նոր անցած ձանապարհին:

Անանուխը շատ սուր հոտ ունի: Նրա հոտն առնելուց հետո դժվար թե զգացվի մըջնային հոտի թողած հետքերը: Տեսնենք ինչպես կարպիկն աշխատանիլ երը հետ վերագառնալիս:

Առանձնապես վոչինչ գնում են իրենց համար ձանապարհով, առանց վոչինչ նկատելու, առանց տատանումների, առանց հուզումների, կարծես թե վոչինչ չի պատահել: Պարզ ե, բուրիչ հետքն այստեղ վոչ մի գործ չունի:

Բայց ֆարբը զբանով ել չի բավականանում: Նա շարունակում ե իր փորձերը:

Այն ճանապարհը, վորով շիկակարմիրները վերադառնում են արշավանքից, զրց գույն ունի: Ֆաբրը լրագրով ծածկում ե ճանապարհի մի մասը: Լրագիրը չի կարող վոչնչացնել «բուրիչ հետքը»—յեթե նա կա, և չնայած դրան, հասնելով այստեղ, մըրջունները կորցնում են իրենց, շփոթվում, խառնվում են իրաբարպարզ ե, վոր չեն ճանաչում իրենց ճանապարհը

Մի ուրիշ անգամ Ֆաբրը ձեռնարկում ե ինչ վոր մի այլ բան. դեղին ավազի բարակ շերտավ ծածկում ե այն ճանապարհի մի փոքրիկ մասը, վորով շիկակարմիրները հետ պետք ե գային: Նրանք վիրադառնում են, բայց հասնելով ավազով ծածկում տեղը, կրկին մեծ հուզմունքի մեջ են ընկնում: Ավազի բարակ շերտը «բուրիչ հետքի» համար խանգարիչ հանգամանք չի, բայց նա փոխում ե ճանապարհի տեսքը, մըրջունները չեն ճանաչում նրան և... շվարում են:

Թվում ե, վոր պարզ ե արդեն—մըրջունները ղեկավարվում են վոչ թե հոտառությամբ, այլ տեսողությամբ:

Սակայն այս ել չի բավարարում Ֆաբրին, նա կատարում ե նորից ու ղերջին մի փորձ:

Բանն այն ե, վոր նրա այգում ապրող շիկակարմիրները վորսի յեն գնում—այգու հյուսիսային մասը, ուր կողոպուտն ավելի առատ ե, քան հարավային մասը, վորտեղ համարյա վոտք ել չեն գնում:

Այդ մասը նրանց անծանոթ ե, մինչդեռ հյուսիսային մասում նրանք իրենց զգում են վորպիս իրենց տանը: Յեվ Ֆաբրը վորոշեց ահա այդ հանգամանքն ոգտագործել:

«Յես,—պատմում ե Ֆաբրը,—տեղավորվում եմ մըրջնանոցի մոտ, և յերբ սարուկներ բերելու գնացած ջոկատը վերադառնում ե, յես մի մըրջունի հրապուրում եմ մի չոր տերեկի վրա և գումարտակից 2—3 քայլ հեռացնում նրան, բայց հարավային ուղղությամբ: Դա բավական եր նրան միանգումից շեղելու իր ճանապարհից: Գետնի վրա դնելով նրան, յես տեսնում եմ, թե ինչպիս նա հույսը բախտի վրա դրած թափառում ե՝ ավարը միշտ ծնոտներում բռնած: յես տեսնում եմ ինչպիս նա շտագով հեռանում ե իր ընկերներից, կարծելով վոր նրանց ե հետապըն գումար: Տեսնում եմ ինչպիս ղերադառնում ե, կրկին հեռանում, փորձում ե աջ գնալ, հետո՝ ձախ, ապա՝ այլ ուղղություններով—և միշտ ել իջուր:

«Ուժեղ ծնոտներով այդ հաղթողն իր ջոկատից միայն յերկու քայլի վրա մոլորգել եր այժմ: Կրկնենք փորձը: Բայց հիմա

նրան զեպի նյութիս տանհնք: Ավելի կամ պակաս յերկար տառանումներից և բոլոր ուղղություններով կատարած փնտռումներից հետո մըրջունը ղերջապես հասնում ե իր ջոկատին, վօրովնեմք նեղը նրան ծանօթ ե...

Ֆաբրն այսպես ե յեղափակում իր պատմությունը. «Վորովնեակ վայրը մըրջունին ծանոթ ե», նա կարծես թե հիշեց այդ ճանապարհը՝ հիմնվելով իր աշքերով տեսածի վրա: Վոչ թե հուսառությունը, այլ տեսողությունը, վոչ թե բեխիկները, այլ աշքերն են այստեղ զեր խաղում:

Ահա այն բոլորը, ինչ վոր առայժմ գիտությունն ասում ե այդ մտախն: Տեսողություն ու հիշողություն, ահա այն միջոցները, վորոնցով ոգտվում ե մըրջունն իր ճամբորդությունների քամանակ, իսկ ինչպիսի հիշողություն ունի նա կամ վորմե բանով նման ե մերին—անհայտ ե:

Պետք ե յենթաղբեր, վոր նրա հիշողությունն ուղղակի մըրջնային ե, ինչ վոր յուրահատուկ, առանձին... Այստեղ չպարզված գեր շատ բան ե մնում:

ՄՐՋՅՈՒՆԻ «ՀՈԳԵԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Մեր ամրող պատմածը ցույց ե տալիս, վոր մըրջունները քնությունից սժուկած են՝ բազմապիսի ընդունակություններով, բնագիտներով, սակայն, չպետք ե վոչ չափագանցներ, վոչ ել նվազագենել այս ընդունակությունները: Պետք ե խելացի չափ պահանջել նրանց գնահատելիս՝ կարիք չկա վերագրել մըրջունին այն, ինչ վոր նա չունի, բայց միևնույն ժամանակ կարիք չկա նրանից իրել այն, ինչով բնությունն իրոք վոր պարզեատրել ե նրան: Այդ հեշտ գործ չեւ:

Այդ պատճառով ելանհրաժեշտ ե մըրջունների կյանքի վերաբերյալ կատարած ամեն մի դիտողություն գնահատել մտածված կերպով և զգուշությամբ:

Վերցնենք, որինալիք համար, այսպիսի մի փառական կարք փաստը բերում ե ղերմանացի նշանավոր գիտնական կարք Փալտու:

«Իմ բարեկամի այգում մըրջուններն ուտում-վշացնում եյին մի ծառի բալիրը: Վորպեսզի նրանց հեռացնի, նա ծառի ընի կողմից 4 և կես ամ լայնությամբ ծխամորնի միջի ծխախոտի թանձր տականք ե քսում: Ծառ բարձրացած մըրջունները բարձրով հետ դարձան, յերբ պատահեցին այս մածուցիկ ու գարանու ողակին:

«Նրանք, վորոնք ծառի վրա եյին և կամենում եյին ներքեվ իջներ չհամաձակվեցին ողակի վրայով անցնել ու կրկին վերեվ բարձրացան և ճյուղերից ներքեւ գլորվեցին:

«Այդ ձեռվ նրանք բոլորն ել շուտով հեռացան ծառից Բայց մի քանի ժամանակից հետո մըջյունները խմբերով բարձրանում եյին ընի վրայով: Նրանցից ամեն մեկը ծնոտներով տանում եր մի փոքրիկ հողակտոր. մեծագույն զգուշությամբ նրանք սկսեցին հողի գնդերը մոտ առ մոտ դարսել ծխախոտի տականքի վրա այն գիս, վոր կամաց կամաց կաղմվեց իսկական սալահատակած ճանապարհ, վորը նրանք ամրացրին ու լայնացրին մեծագույն ջանասիրությամբ:

«Այնուհետև, յերբ յերկու սանտիմետր լայնությամբ մի փոքր շերտիկ գոյացավ, մըջյունների շարանը բոլորովին տպառվ կարողացավ նորից բարձրանալ ծառը. վերջինս անմիջապես ծածկվեց ավերիչների խմբերով»:

Ուշագրավ փաստ ե: Մըջյունները գուրս յեկան այն գժվար կացությունից, վորի մեջ նրանց դրել եր մարդը. միայն հարցն ահա թե ինչումն ե: Ներկա դեպքում մըջյունները արդյոք վորին արտակարգ բան արին, կամ գուցե այն, ինչ վոր նրանք նախաձեռնեցին այգում, ստիպված են միշտ և ամեն տեղ նմույն աներ, միայն այսպիս ասած սովորական հանգամանքների ժամանակի: Դուրս ե զալիս, վոր յերկրորդ յենթաղրությունն ավելի մոտ և ծշմարտության:

Իսկապես, յեթե մըջյուններն իրենց բնում դեմ են առնում վորեւ մածացիկ առարկայի, վորը միւնույն ժամանակ և վտա հոտե արձակաւ, այն ժամանակ նրանք կամ գուրս են զցում նրան, կամ ուղղակի ծածկում հողի գնդերով:

Այն մըջյունները, վորոնց մասին պատմում ե Կարլ Ֆոպտը, իրենց ճանապարհին գեմ առան հենց այդպիսի «ժամանուցիկ ու զգվելի հոտ արձակող նյութի, —դա ծխախոտի այրուքի «կպչուու գարշանոտ ողակն» եր: Յեկ դեմ առնելով նրան, նրանք գործադրեցին այն միջոցը, վորով նրանք սովորաբար ոգտվում են նման գեպերում:

Վերցնմանք ուրիշ որինակ, ել ավելի զարմանալի, Մի փոքրիկ և տափակ ապակյա ափսեյի մեջ, նման ժամանույցի ապակուն, վասմանը ջուր լցրեց, իսկ նրա մեջտեղում տեղավորեց ապակյա մի ուրիշ ավելի փոքր անոթ, վորի մեջ դրված եյին մըջյունների մի քանի հարսնյակներ: Այնուհետև նա այդ բոլորը

դրեց կարմիր մըջյունների մեջ: Կարմիրները շուտով նկատեցին հարսնյակներին, հավաքվեցին մեծ ժամանույցի ապակու յեղերքեն, բեկիները յերկարացրին գեղի հարսնյակներով կղզին քայց չկարողացան մինչև նրանց հասցնել, իսկ ով ավելի համարձակ եր, նա գլորվեց ջուրը: «Յես, —պատմում ե Վազմանը, — կարծում եյի արդեն, թե մըջյունները չեն կարող հաղթահարել արգելքները, յերբ կարմիրներից մեկն սկսեց քաշ տալ հողի գլնդեր, փայտի կտորներ, մըջյունների դիակներ և այլ նման բաներ բերելու գցել ջուրը. ուրիշները հետեւցին նրա որինակին և կարճ ժամանակից հետո նախապարհ սուբեցին զրի միջավ: Մի ժամ չանցած այս «լողացող կամրջի» ողնությամբ նրանք բոլոր հարսնյակներին տարան կղզուց»:

— Բրավո, կամեք գուք — կտրիճ մըջյուններ: Այս, կտրիճներ, յեթե ուղում եք, սակայն այդ այնքան ել բարձր արիություն չի, ինչպես թվում ե առաջին հայացքից:

Վասմանն իր փորձը կրկնեց, բայց այս անգամ առանց հարսնյակներով կղզու: Այնուամենայնիվ և այս գեպքում ել մըջյունները շուտով «ձեռնարկեցին լիճը չորացնելու», այսինքն ժամանույցի ապակու ջուրը լցրին հողով և այլ պինդ առարկաներով: Հարսնյակները չկային, իսկ «լողացող կամուրջը» համենայն գեպս կառուցվեց: Ինչու համար: Հենց ուղղակի նրա համար, վոր մըջյուններն առնասարակ սովորություն ունեն «չորացնելու» ճանապարհին պատահող և նրանց ազատորն շարժվելու խանգարող թաց տեղերը:

Պետք ե յենթաղրեն վոր «թացը» մըջյունների համար նույնքան տհան ե, վորքան ըգարշակում ու մածուցիկը: Յեկ ահա նրանք վերացնում են և այս, և մյուսն իրենց համար սովորական և մատչելի միջոցներով:

Առհասարակ, կրկնում եմ, շատ փաստեր կարելի յե բերել վորոնք վկայում են այն մասին, թե մըջյունների «հոգեկան կյանքի» թափն այնքան մեծ չե, ինչպես առաջներում շատերը կարծում եյին:

Անգլիացի գիտնական Ջոն Լեբրոնկը մի ամբողջ շարք փորձեր ե կատարել, վորոնք վարկաբեկում են մըջյունի գովաբանած հնարագիտությունը: Որինակ, մի անգամ նա սկ մըջյունների մի քանի թրթուրներ տեղավորում ե գավաթի մեջ և նրա մոտ մի ծղոտի կտոր գնում, վորի վրայով, վորպես կամուրջի, նրանք աղատորն կարող եյին անցնել և հասնել թրթուրներին: Այնու-

հետեւ, յերբ մրջյուններն ընտելացան այս ճանապարհին, նա գերցուց դղուն ու մի քիչ հեռացրեց իր տեղից: Մրջյունները հեշտությամբ կարող եյին կամուրջը նորից հարմարեցնել ինչպես վոր պետք եր:

Բայց ավաղ—նրանցից վոչ մեկը գլխի չընկալ այդ բանն անելու:

Մի ուրիշ անգամ Զօն Լեբրոկը մրջյունների բնի վրա յերկու և կես սմ բարձրությամբ կախեց մեղրով մի բաժակ, իսկ վորպեսզի մրջյունները կարողանան մեղրի մոտ զնալ, նա բնից մինչև բաժակը շուրջանակի անցկացրեց յերեք սմ յերկարությամբ թղթե կամուրջ: 5—6 բոպեյից հետո մի քանի տասնյակ մրջյուններ կամուրջով անցան գեպի բաժակը ու մեղրը վայելցին: Լեբրոկը բաժակի ու բնի արանքում մի փոքր հողակույտ կազմեց, վորի վրայով մրջյունները հեշտությամբ կարող եյին հասնել մեղրին, մրջյունները շուտով թղթին թղթե կամուրջի շուրջանակի յերկար ճանապարհը և սկսեցին բաժակի վրա բարձրանալ հողակույտի վրայով: Այն ժամանակ Լեբրոկը այդ հողակույտից միքիչ հող թափեց այնպես, վոր բաժակի ու հողակույտի մեջ կազմվեց փոքրիկ միջանկյալ տարածություն, Մրջյունները շատ վատկեցին: Նրանք, վորոնք բաժակի վրա եյին, վերադարձն կրկին թղթե կամուրջը, և վոչ մեկը նրանցից խելքի չընկալ ներքեւ ցատկելու. չե՛ վոր բաժակի հատակից մինչև հողակույտի ծայրն ընդամենը կես սանտիմետր եր, վոչ ավելի:

Մյուս կողմից, այն մրջյունները, վորոնք պատրաստվում եյին հողակույտի վրայով բարձրանալու գեպի մեղրով բաժակը, մի քիչ պտտվեցին նրա վրա և ելի թղթե կամուրջով գնացին— վոչ վոք գլխի չընկալ հողակույտի վրա մի քիչ ել հող ավելացնել ու այդպիսով լցնել բաժակի հատակի ու հողաթմբի միջին դատարկ տարածությունը:

Վերջապես նորից մի որինակ: Նրա մասին հիշում և ֆաբրը: Դուք հիշում եք, վոր ճամբորգելիս մրջյունները համառությամբ միշտ ել միևնույն ուղղությունն են պահում, հետ են գալիք նույն ճանապարհով, վորով՝ առաջ են շարժվել:

«Մի անգամ,—զրում ե Ֆաբրը,—յես տեսա, ինչպես նրանք պաշավանքի ուղեկորպելիս անցնում եյին քարաշին ջրավազանիներսի յեղբերով, վորտեղ յես կարմիր մանր ձկներ եյի բնակեցրել: Ուժեղ գամի յեր փշում և մրջյունների ամրող շարքեր ջուրը զլորում: Հավաքվեցին ձկներն ու սկսեցին կուլ տալ ջրահեղձ-

ներին: Այդ զժվար ճանապարհը կը թրցին անցան—զորքի թիվը տասն անդամ պակասեց: Յես կարծում եյի, վոր նրանք կվերադառնան մի ուրիշ ճանապարհով, վորը պառույտ տալով մի կողմը կթողներ մանաբեր անդունով: Բայց այսպես չեղավէ Հարսնյակներով ծանրաբեռնված հրոսակախումբը կրկին հոռյան վտանգավոր ճանապարհով շարժվեց, և կարմիր ձկների համար վայր թափեց կրկնակի մանանա՝ մը թղյուններն ու իրենց ավարը: Զորքը կրկին տուժեց տհագին կորուստներ տալով— միայն թե ուղղությունը չփոխեր»...

«ՔՈՂՈՐԸ ՄԵԿԻ ՆՄԱՆ, ՄԵԿԸ—ԲՈՂՈՐԸ»

Սակայն յես չեմ ցանկանում անհարժար զրության մեջ գնել կենդանական թագավորության իմ սիրելի—այս բոլոր սե, կարմիր, շիկակարմիր ու գեղին թղուկներին:

Մենք տեսանք, թե ինչպես մրջյունները կառուցում են, ավար վորոնում, վորուրգություն անում, հարձակումներ գործում, արշավանքներ նախաձեռնում, պատերազմ մղում, ողտը գումարուկների ծառայություններից, սերունդ գաստիարակում, հողում իրենց ընտելացրած կենդանիների մասին, ուռնկի այգիներ «մշակում», հատիկների պաշար հավաքում, բարեկամանում ու թշնամանում իրար հետ, հոգ են տանում հիգանդներին և վիրավորներին, զարգանանում և այլն:

Յեսուն բազմապիսի կյանք: Իհարկե, այդ բազմապիսության մեջ կա շատ միակերպություն:

Բայց և այնպես, յեթե մեկը կարծում ե, թե մրջյունների կենցաղը նման է լավ կարգավորված մեքենայի, իսկ մրջյուններն իրենք նույնպես նման են անշունչ մեքենայի, վորը գործում և անփափի միակերպությումբ համաձայն կանոնի՝ ըրուրը մեկի նման, իսկ մեկը՝ բոլորի»—ով այս կերպ մտածում, նա չարաշոր սխալվում ե:

Մրջյունները «անշունչ մեքենաներ» չեն, այլ կենդանի արարածներ: Նրանք աեսնում են, տարբերում են հոտերը, զգում ցուրտն ու տաքը, արձականքում են իրենց տեսածին ու զգացածին, զործում են համաձայն իրենց հակումների, հաղորդակցում են իրար հետ բեխիկների միջոցով, բազմազնում են իրենց աշխատանքները, փոփոխելով այն բարեկամանիների: Մենք այդ մասին նշել ենք մի քանի անգամ:

Բներ, ճանապարհներ, տունելներ ու կամուրջներ սարքելիս,

վորսի ման գալիս, թե պատերազմ վարելիս, նոր սերունդ գաստիարակելիս, թե ստրուկներ պահելիս — ամենուրեք և ամեն բանում նըանք հավատարիմ են մնում իրենց բնածին հակումներին, այն բնադրներին, վորոնք տրված են նրանց ծննդյան օրից: Յեվ միենույն ժամանակ վոչ միայն տարբեր ցեղերը, այլև միենայն ցեղի մրջյունները, վոչ միայն տվյալ համայնքի բնակիչները, այլև միենայն բնի տարբեր մրջյունները տարբեր ձևով են գարձադրում իրենց այս ընդունակությունները:

Ի՞արեկե, մրջյունը մրջյուն ե մնում: Ինչպես մի այլ կենդանի, նա ել իր չափից ավելի ցատկել չի կարող. Նրա ուժերից վեր և գուրս գալ իր մրջնային կաշվից, ի վիճակի չե նա ավելին անել քան տրված և նրան բնություննից: Բայց իր «մրջնային հոգու» սահմաններում նա ևս ներկայանում և վորպես պեղի կամ պսուկաս ինքնուրույն և ինքնազն արարած, ինչպես և ամեն մի կենդանի՝ շունը, ձին, միոց, կապիկը, մարդը: Ահա թե ինչու շվեյցարական նշանավոր գիտական, «մրջնային հոգու» գիտակներից մեկը՝ ֆորեն ասում ե. «Յս հնարավորություն ունեցի. հաճախ դիտելու այնպիսի նշաններ, վորոնք ցույց եյին տալիս մինչև անգամ մինույն գաղութիւն մրջյունների բնավորության մեջ լեզած տարբերությունները. Նրանց մեջ կային և՛ վախկոտ, և՛ քաջ, աշխուժ ու սառնարյուն անհատներ: Նույնպես, բաղմաթիվ փորձերի միջոցով մրջյունների մոտ յևս հայտաբերեցի իրենց վարքը փոխելու ընդունակություն...»

Դիմենք փաստերին: Նրանք կպարզեն մեզ վերեւում արծարձված միտքը:

Ահա կարմիրների բունը: Նա շինված ե սոճու փտած կոճազում: Մոտենում ե մարդը և վոտքը այս կոճղի վրա դնում: Մըրջնանցի բնակչությունը յեթե բազմաթանակ լիներ, ո, ինչ հանկարծական տագնապ կառաջացներ ուազմասեր հափշտակիչների բնակարանի վրա գործած հանդուգն այս հարձակումը: Նրանք անմիջապես հապալներով դուրս կթափվեյին ինքնապաշտպանության համար: Բայց այստեղ, դժբախտաբար, նրանց թիվը քիչ ե, բունը սակավազոր ե և, կարծես, զգալով իրենց անողնական վիճակը, յետանդուն քաջերը շարունակում են նստած մատ տանը: Մինչև անգամ նրանք, վորոնք հենց նոր վազում եյին կոճղի վրա, գերազանում են թագնիկել բնի ներսը, վտանգից ավելի հեռու:

Ահա կարմիրների մի ուրիշ բուն: Նա պատսպարվել ե մի

քարի տակ: Նորից ե գալիս այդ անհանգիստ մարդը և քարը շուռ տալիս:

Սրեգակը վողողեց իր ճառագայթներով մերկացված բունը: Նրա բնակիչներն իրար անցան: Իսկ ի՞նչ ձեռնարկեցին մրջյունները: Ի՞նչպես սկսեցին գործել. «բոլորը—մեկի նման, մեկը—բոլորի»: Տեսնենք:

Մի քանիսը հարձակվեցին իրենց հանգիստը խանգարողի վրա և սկսեցին խայթել թույն շաղ տալ նրա վրա: Մյուսները վայրկենաբար նետվեցին ոգներու մատղաշներին—վերցնում եյին թրթուրներ ու հարսնյակներ և գլխապատռ թացնում նըանց բնի մութ ու թագուն անկյունները յերրորդներն շտապում եյին թագնիկել իրենց բնակարանի մոտերքում—խոտերի մեջ կամ հողագնդերի տակ—նրանց ըստ լերնույթին թողել եր «քաղաքացիական արիությունը» և նրանք ուրիշների փրկության մասին չմտածելով՝ ձգտում եյին իրենց սեփական կյանքը փրկել չորրորդները չղլացան գործադրել իրենց սովորական «ուազմական խորամանկությունը»—մեռած ձեացան: Իսկ մնացածները հակառակորդի հանդեպ անդոր կատաղությամբ ըռնված, այս ու այն կողմն եյին նետվում—վոտները չուծ ու գլուխները գետնին կպցրած, չարագուշակ ձեռվ շարժում եյին ծնոտները,—զզզզում ճանապարհին ընկած ծղոտներն ու ճյուղերը, կրծոտում ավաղը:

Մի խոսքով, բոլորն ել տարբեր ձեռվ եյին վարվում, համաձայն իրենց բնավորության և այն շրջապատի, վորի մեջ փորձանքը վրա հասավ նրանց (Վասման):

Տարբեր շրջապատում միենույն մրջյունների վարքի այս տարբերությունն առանձնապես պայծառ ցույց ե տալիս հետեւյալ փաստը:

Իրենց հարազատ բնաւմ սեերն առանձին համարձակություն չեն հայտաբերում, և հաճախ նրանք շատ վախկոտ են թվում, բայց նայեցեք նրանց այն ժամանակ, յերբ գտնվում են իրենց տերերի շրջանում, տիկակարմիք ատրկաների բնում: Այս տեղ գութ նրանց բոլորովին չեք ճանաչի—այսպես քաջաբար պաշտպանում են նրանք իրենց տերերի բնակարանն ու կարողությունը: Ինչպես յերեւում ե, վերջինների ներկայությունը նրանց շատ ե քաջալերում: Սակայն պատահում ե և այնպես, վոր միքանի մրջյուններ առանձին քաջություն են ցուցահանանում վոչ թե նրա համար, վոր հուսալի ընկերության մեջ են

գտնվում, այլ պարզապես նրա համար, վոր բնավորությամբ նրանք իրենց ընկերներից ավելի քաջ են: Այդպիսի մի խիզախի մասին պատմում եւ Վաստանը:

Սկ մըջյունների ցեղից մի սովորական բանվոր եր դա: Մի անգամ նա կարմիրների մի ամբողջ գաղութի նետ կռվի բռնվեց: Տեղավորվեց նրանց ընի մուտքի մոտ և միքանի ժամ անընդհատ նստեց այստեղ, առանց պոստից հեռանալու: Հենց վոր բնից դուրս եւ գալիս նրա կարմիր բնակիչը, նա բռնում եր գըտքախտին, իր ամուր ծնոտներով կտրում, յերկու կես անում: Վերջում նրա վրա հարձակվեց կարմիրների մի ամբողջ բազմություն, և թշվառն էիր խելացնոր քաջության համար վճարեց իր կյանքը: Նրան մահվան հասցըին, բայց մինչ այդ, նրան հաջողվեց 150—200 հոգի կոտորել իր թշնամիներից: Միթե հերոս չե նա...

Մըջյունը—համայնական միջատ եւ իսկ համայնքի մեջ նմանվելու ընդունակությունն առանձնապես ուժեղ եւ արտահայտվում: Որինակը վարակիչ ել լինում, այն, ինչ վոր անում ե մեկը, մյուսն սկսում ե կրկնել և այդպիսով սովորում ե այն, ինչ վոր չգիտեր առաջ:

Մըջյունների կյանքի ու գործունեյության մեջ որինակն ու նմանվելը նույնպես վորոշ գեր ե խաղում:

Դուք արդեն գիտեք, վոր մըջյունների նետ միասին՝ վորպես ձաշորդ կամ ընտանի անսասուն, ապրում են բզեզների մի քանի ցեղեր: Նրանց թվին ե պատկանում և տեսմենիս կոչվող բզեզը: Յեթե այդ բզեզին բաց թողնենք կարմիրների բունը, այն ժամանակ վերջինները նրան թշնամաբար կընդունեն, անգամ գուրս կվոնդեն: Բայց յեթե կարմիրների հետ մինչույն բնում գտնը վում են և նրանց «ծառանները» անտառային մըջյունները, ոյդ գեղքում գործն այլ ընթացք ե ստանում:

Տեսնելով բզեզին, «ծառանները» շրջապատում են նրան, ինչպես մի լավ, հին ծանոթի: Այդ բանը «տերերին» վոչ միայն հետ և պահում յեկվորին թշնամական վերաբերմունք ցույց տալուց, այլև վերջնականապես հաշտեցնում ե նրանց այդ բզեզի հետ: Տեսնելով, վոր «ծառանները» զանասիրությամբ լիղում են բզեզին, գգվում ու խնամում նրան, «տերերն» ել, վերջիվերջո, հետեւլով նրանց որինակին, նույն կերպ ին վարվում:

Սակայն կարմիրները կարող են ընտելանալ հյուրի հետ և ինքնուրույն կերպով, առանց իրենց ծառանների ոգնության:

Պատկերացրեք ձեզ, վոր ատեմելս բզեզը կամ հենց այն լոմեխուզան, վորի մասին յես խոսել եմ նախընթաց գործիներից մեկում, առաջին անգամ ընկնում ե նրանց բունը:

Սկզբում անծանոթը կարմիրների վրա անախորժ տպավորությունն ե թողնում: Նրա վայելուչ կեցվածքը, հոտը, չափը և շարժումները, այդ բուրըն ինչ վոր անսովոր են կարմիրներին, ջղայնացնում են նրանց: Նրանք շրջապատում են նրան, քաշը շում են, հոտուում, լիզում են: Հանկարծ—անոպասելի գյուտը Յերկուշյերեք մըջյուն անծանոթին լիղելիս պատահաբար նկատում են, վոր լոմեխուզայի մեջքին ցցված կոշտ մաղափնջերի վրա համով ու հոտով շատ գուրեկան հեղուկ կա: Այս գյուտը միանգամբ վոխում ե նրանց վերաբերմունքը դեպի բզեզը: Վնդրեղ չքացավ անբայցակամությունը և անգամ թշնամությունը: Նրանք չքացան մի քանի բուգյում: կարծես գյուտը թյուն ել չեյին ունեցել: Ընդհակառակը—կարմիրներն սկսում են կերաբիրել անծանոթին, սիրաշահում են նրան: Ապա, այժմ բաց թողեք նրանց բունը մի ուրիշ հետո այդպիսի բզեզ: Վերաբերմունքը բնավ այնպես չի լինի, ինչպես առաջինին եյին ցույց տվել: Կարմիրների համար փորձն իզուր չեր անցել նրանք վորեն բան սովորեցին այդ փորձից: Բզեզին նրանք այլևս թշնամութեղ չեյին ընդունում: Նա նրանց ցանկալի ու հաճելի բարեկամն ե այժմ: Այդ բուրը—ուրիշներից ինչ վոր նոր, անսովոր բան ընդորինակելու և փորձի շնորհիվ ուրիշ կերպգրծել սովորեած ընդունակությունը, այդ ամենը, կրկնում եմ, ցույց և տալիս, լու ընդունակությունը, այդ ամենը, մեկը՝ բոլորի» կանոնը բնավ պարզութիւն չե մըջյունների համար: Նրանցից յուրաքանչյուրը կարուտաղիր չե մըջյունների համար: Նրանցից յուրաքանչյուրը կարուտ ե զործել ինչպես բոլորը, և բոլորն ել կարող են գործել նոր ձեռով, հետեւլով մեկի որինակին:

Կա մի ուրիշ հանգամանք, վորն ակնառու կերպով ցույց և տալիս, վոր մըջյունը—«անշունչ մեքենա» չե, այլ կինդանի արարած, վոր կարող ե ըմբռնել իր համար անսովոր բաներ: Դուք հիշեմ եք ինչպես ե կազմված մըջյունների դիտողական բունը: Հիշեմ եք, վոր այստեղ կա մի առանձին բաժին, վորտեղ վասմանը կեր եր տեղավորել (տես նկար 12): Մըջյուններն սկզբում կեղտուում եյին կերակրամանը, ամեն տեսակ ինքնուրույն կարմիրներից վաշուկ նրա մեջ: Սակայն . . . վասմանը համացուկներ քաշ տալով նրա մեջ: Սակայն . . . վասմանը հաղողեցրեց, վոր նրա մըջյուններն սկսեցին կերամանը մաքուր պահանձնությունը, իսկ մնացուկները հավաքել բնի սոտ այդ նսպատակի հապահել:

մար հարմարեցրած մի առանձին խողովակի մեջ։ Միթե սա զարմանալի չե։ Սակայն դժվար թե սա ավելի հետաքրքիր լինի քանայն, վոր Վասմանին հաջողվեց սովորեցնել մի մըջյունի ուղղակի իր ձեռքից կերակուր վերցնել։

«Իտ, —պատմում ե Վասմանը, —բավական վախկոտ և մինչև անգամ վայրենի մի մըջյուն եր։ Մի անգամ յես մոտեցրի նրան մեղրի մեջ թաթախված ասեղի ծայրը։ Սկզբում վախեցած հետ ցատկեց մի կողմ, սակայն միքանի վայրկյան տատանվելուց հետո նա բեխիկները զննողաբար շարժելով մոտեցավ և մեղրը լիզեց։

«Դրանից հետո, յես նրան մեղր եյի առաջարկում անմիշականորեն իմ մատի վրայից։ Մըջյունն ընտելացավ նույնիսկ այն աստիճան, վոր իմ մատի հոտը, վորը սովորական պայմաններում նրան կարող եր մարտական կատաղության հասցնել կամ յերկյուղ ազգեվ, բոլորովին չեր ջղայնացնում նրան։ Նա հանգըստությամբ լիզում եր մեղրն իմ մատի ծայրից, իսկ այնուհետեւ, առանց պաշտպանվելու կամ վախուստի գիմելու, թույլ եր տամա պինցետով բռնել հետեւի վոտից ու կըկին բռնը նստեցնել։

Այդպիսով, —վերջացնում ե Վասմանը, —կարելի յե ապացուցված համարել, վոր մըջյուններն եր, չնայած իրենց վայրենությանը, ընդունակ են ընտելանալու։

* *

Այո, յերբ նայում ես այս հասարակ ու պարզ «միջատին», չես ել հավատում, վոր նրա կյանքի մեջ այդքան խորամանկություն կարող ել լինել։

Հողից ու ամեն տեսակ թափոնքից բազմահարկ բներ ե շինում, կրծում, ծառի բռնը փորում ու բռն պատրաստում, կպցնում, բռն ե շինութ տերեններից, խավաքաբատից, ճանապարհներ մաքրում, տուններ փորում, բներ ե կառուցում «ընտանի» կենդանիների համար, լիներին զաստիարակում, «հյուրեր» պահում, ուտելու մնկեր աճեցնում, յերկարատև արշավանքներ ու գրոհներ ձեռնարկում, պատերազմներ վարում, «ծառաներ» պահում, «բարեկամական դաշինք» կնքում, «տպավորություններ» փոխանակում այլ մըջյունների հետ, ըստ հանգամանքների փոփոխում իր գործողությունները, ընդորինակում իր ընկերներին, նրանցից նորանոր բաներ սովորում։

Այդ բոլորն ապացուցված ե գիտնականների գիտողություններով ու փորձերով, վորոնք բազմաթիվ տարիներ ջանասիրությամբ ուսումնասիրել են մըջյունների կյանքը։ Ու յեթե յես սկսեմ պատմել այն բոլորը, ինչ վոր նրանք արել ու իմացել են մըջյունների կյանքի մասին, այն ժամանակ կարելի յեր տառ հատ այսպիսի գրքույկ գրել, ինչպես դուք հենց նոր կարդացիք։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մի քանի խոսք	3
Առաջին ծանոթություն	5
Համայնքի բնակչությունը	9
Քնում	14
Ամեն մեկը վարդում և յուրահատուկ ձեռվ	18
Համաձայն հանգամանքների	22
«Ծոսմեմ են»—արդյոք մրջյունները	29
Երիխ Վասմանը—մրջյունի կենցաղի գիտակ	32
Քոչվորներ և վորսորդներ	38
Հնձվորներ և տերեւահատներ	41
Անասնապահներ	45
Մեղրատուններ	48
Ցերեխանների խնամքը	53
Տարորինակ սովորություններ	58
Բարեկամներ ու թշնամիներ	62
Պատերազմ	65
Նորից մրջյունների պատերազմի մասին	68
Ստրկատերեր	72
Ֆարբի գիտողությունները	77
Մըջյունի հոգեկան ընդունակությունները	83
«Բոլորը մեկի նման,—մեկը—բոլորի»	77

Գառ. խմբագիր՝ Ա. Ղարագյուլյան
 Թարգմանիչ՝ Խիկ. Գուրյան
 Տեխ. իրազիր՝ Լ. Ռանյան
 Անգլական խմբագիր՝ Հ. Հարսւթյունյան
 Սրբագրիչ՝ Խ. Արքազյան
 Գլավլիսի լիազոր Ա. 4030
 Հրատ. 4231, պատվեր 276, տիրաժ 3000
 Հանձնված և արտադրության 1938 թ. ապրիլի 26-ին
 Սահորողը վաճառքի և տպագրության 1393 թ. ոգուտուի 15-ին
 Թաղթը 62×94, 6 տպ. մամ., 1 թերթ. 38400 տպ. նիշ

ՀՀ Ազգային գրադարան



NL0301415

ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.

510

22.914

В. В. ЛУНКЕВИЧ

ЖИЗНЬ
МУРАВЬЕВ

ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН, 1938 Г.